

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ФИЛОЛОГИЯ
JOURNAL OF YEREVAN UNIVERSITY
PHILOLOGY

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 2(41)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА
YEREVAN STATE UNIVERSITY PRESS

ԵՐԵՎԱՆ - 2023

«Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի

Журнал "Вестник Ереванского университета. Филология" выходит три раза в год. Издается с 2010 года. Правопреемник издававшегося в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета"

Three issues of "Journal of Yerevan University. Philology" are published annually. The journal has been published since 2010. It is the successor of "Journal of Yerevan University" published in 1967-2009

Խմբագրական խորհուրդ.

Գլխավոր խմբագիր՝ **Ավետիսյան Անն** (բ.գ.թ., դոց.)

Ավետիսյան Յուրի (բ.գ.դ., պրոֆ.), **Պասպարյան Սեդա** (բ.գ.դ., պրոֆ., ԳԱԱ թղթակից անդամ), **Կատվալյան Վիկտոր** (բ.գ.դ., պրոֆ.), **Կարապետյան Ճուլան** (բ.գ.թ., ԱՄՆ), **Հովակիմյան Արմեն** (պատմաիւ. խմբագրի տեղակալ, բ.գ.թ.), **Մատթեոսյան Վարդան** (պ.գ.թ., ԱՄՆ), **Մարտիրոսյան Հրաչ** (բ.գ.թ., Նիդերլանդներ), **Մուրադյան Գայանե** (բ.գ.դ., պրոֆ.), **Ոսկանյան Վարդան** (բ.գ.թ., դոց.), **Չոլարյան Հակոբ** (պ.գ.դ., Միդիս), **Պետրոսյան Դավիթ** (բ.գ.դ., պրոֆ.), **Քալանթարյան Ժենյա** (բ.գ.դ., պրոֆ.)

Редакционная коллегия:

Главный редактор: **Аветисян Левон** (к.фил.н., доц.)

Аветисян Юрий (д.фил.н., проф.), **Восканян Вардан** (к.фил.н., доц.), **Гаспарян Седա** (д.фил.н., проф., член.кор. НАН РА), **Калантарян Женья** (д.фил.н., проф.), **Карапетян Шушан** (к.фил.н., США), **Катвалян Виктор** (д.фил.н., проф.), **Мартirosyan Грач** (к.фил.н., Нидерланды), **Маттеосян Вардан** (к.ист.н., США), **Мурадян Гаяне** (д.фил.н., проф.), **Овакимян Армен** (зам. ответ. редактора, к.фил.н.), **Петросян Давид** (д.фил.н., проф.), **Чолакян Агоп** (д.ист.н., Сирия)

Editorial Board:

Editor-in-chief: **Avetisyan Levon** (Ph.D. in Philology, Associate Professor)

Avetisyan Yuri (Sc. D. in Philology, Professor), **Cholakyan Hakob** (Sc. D. in History, Syria), **Gasparyan Seda** (Sc. D. in Philology, Professor, NAS RA Corresponding Member), **Hovakimyan Armen** (Deputy Managing Editor, Ph.D. in Philology), **Kalantaryan Zhenia** (Sc. D. in Philology, Professor), **Karapetyan Shushan** (Ph.D. in Philology, USA), **Katvalyan Victor** (Sc. D. in Philology, Professor), **Martirosyan Hrach** (Ph.D. in Philology, Netherlands), **Matteosyan Vardan** (Ph.D. in History, USA), **Muradyan Gayane** (Sc. D. in Philology, Professor), **Petrosyan David** (Sc. D. in Philology, Professor), **Voskanyan Vardan** (Ph.D. in Philology, Associate Professor)

ԽՆՁՈՒՅՔՆ ԻԲՐԵՎ ՏՈՆ ԵՎ ԻԲՐԵՎ ԴԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հողվածում մեկնաբանվում են կերակրի սեմանտիկային առնչվող խնդիրներ, որոնք տեսանելի են դիցաբանության, բանահյուսության և պատմության մեջ: Նախ ընդգծվում է այն հանգամանքը, որ կերակուրը մարդու կյանքի կենսաբանական պայման է, սակայն պատմությանը զուգընթաց այն աստիճանաբար ձեռք է բերում նաև սոցիալական և հոգևոր բովանդակություն՝ անմիջականորեն հիմք դառնալով գոհաբերությունից մինչև հաղորդություն ձգվող ծիսական շրթայի ստեղծման: Թեև մարդը՝ *Homo sapiens*-ը, էապես տարբերվում է կենդանիներից, սակայն ուտելու պրոցեսը որոշակիորեն մերձեցնում է նրանց: Այդ առումով մարդկանցից չեն տարբերվում նաև աստվածները: Առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում գոհաբերությանը, որը հնագույն ժամանակներից ի վեր ծառայում է աստվածների և մարդկանց միջև կապի հաստատմանը և ուժեղացմանը: Հոգևոր, ծիսական ճաշկերույթի հետ դիտարկվում է նաև աշխարհիկ ճաշկերույթը՝ խնջույքը: Այն մեկնաբանվում է երկու իմաստով՝ իբրև տոնակատարություն և իբրև դավադրություն: Եթե ծիսական ճաշկերույթներում գերազանցապես կարևորվում է կապը Աստծու կամ աստվածների հետ (ուղղահայաց կապ), ապա աշխարհիկ խնջույքը հիմնականում կարևորվում մասնակիցների միջև կապի ամրացմամբ (հորիզոնական կապ), քանզի միասին ուտելը բարոյական և սոցիալական վիթխարի ուժ է պարունակում: Պատահական չէ, որ գրող Էլիաս Կանետտին կերակրի կամ ուտելու գործառնությունը իշխանության տարրեր է տեսնում: Այս առումով հիմնական ուշադրությունը հատկացվում է խնջույքին՝ իբրև դավադրության: Դիտարկվում են բազմաթիվ օրինակներ դիցաբանությունից, էպոսից և պատմությունից:

Բանալի բառեր – *կերակուր, կերակրի սեմանտիկա, գոհաբերություն, ծես, աշխարհիկ խրախուճանք, խրախուճանքն իբրև տոնահանդես, խրախուճանքն իբրև դավադրություն*

Առասպելի և էպոսի փոխառնչությունների ուսումնասիրության տեսանկյունից, կարծում ենք, կարևոր նշանակություն կարող է ունենալ կերակրի (ուտելու) և հարակից հասկացությունների դիտարկումը: Լինելով կյանքի անհրաժեշտ պայման¹, կերակուրը կենսաբանականից զատ ձեռք է բերում նաև այլ նշանակություն ու իմաստներ և դառնում մշակույթի ամենահին, բայց և ամենաբարդ սեմանտիկա ունեցող հասկացություններից մեկը: Թեև Կ. Լիննեյը 18-րդ դարում մարդուն բնորո-

¹ Օ. Ֆրեյդենբերգի մեկնաբանությամբ՝ ուտելը սեռական ակտի և մահվան հետ մարդու կենսաբանական կյանքի երեք կարևորագույն պահերից մեկն է (տե՛ս Փրեյդենբերգ Օ. *Поэтика сюжета и жанра*, М., 1997, էջ 53):

շում է իբրև Homo sapiens՝ տարանջատելով նրան մյուս տեսակներից, այդուհանդերձ ուտելու հատկանիշով մարդը պահպանում է իր մերձությունը կենդանական աշխարհին: Հունական դիցաբանության մեջ աստվածները մարդկանցից տարբերվում են հենց ճաշակելիքով, որը բոլորովին այլ է մարդկանց ուտելիքից. նրանք սնվում են գրեթե աննյութեղեն նեկտարով կամ ամբրոսիայով, թեև կան և հակառակ օրինակներ: Այսպես, սկանդինավյան դիցաբանության մեջ Վալհալլայում Օդինի (Վոթան) կազմակերպած խնջույքներում աստվածները և հերոսները վայելում են վարազի միս և խմում այծի կաթ, որոնք երբեք չեն սպառվում²: Դիցաբանության մեջ կերակրի առատության և շատակերության մեկ այլ օրինակ է «ամենքի հայր», «լավ, բարի աստված» անունը կրող կելտական Դագդան, որի հսկայական կաթսայից նույնպես ուտելիքը երբեք չի վերջանում. կեր՝ որքան ուզում ես³: Սասնա ծռերը ևս, հատկապես Դավիթը, աչքի են ընկնում ոչ միայն քաջությամբ, այլև անսովոր ախորժակով: Մարդկանց մեջ շատ ուտելը սոցիալական բովանդակություն է ստանում: «Մարմնի հանդեպ քրիստոնեության իրականացրած մեծ հեղաշրջումից հետո անգամ,- գրում են Ժ. Լե Գոֆը և Ն. Տրյուոնը,- ուտելը և խրախճանքները շարունակում են մնալ կյանքի սովորական նորմա»⁴: Միջնադարի կարևոր հակադրություններից մեկը նիհար և գեր մարմինների հակադրությունն է: «Գերն ընդդեմ նիհարի, տրապվելու չափ կուշտ կառնավալն ընդդեմ քաղցած պահքի՝ ահա միջնադարյան մարդու մարմինը տանջող հակասություններից մեկը,- գրում են նրանք,- որ այնպես վարպետորեն պատկերել է Պիտեր Բրեյգելը «Բարեկենդանի և պահքի կոփվը» կտավում»⁵: «Կան մարդկանց խմբեր,- նկատում է Է. Կանետտին,- որոնք իրենց առաջնորդ տեսնում են շատ ուտողին»⁶:

Բայց **առանձին և խմրի հետ** ուտելը սկզբունքորեն տարբեր բաներ են: Եթե առաջինը բացառապես կենսաբանական գործառույթ ունի, ապա երկրորդը դուրս է գալիս կենսաբանականի սահմաններից և ձեռք բերում ոչ միայն սոցիալական, այլև միֆական նշանակություն: «Մնվելը,- գրում է Մ. Էլիադեն,- հասարակ կենսաբանական գործողություն չէ, այն կրկնում է հաղորդությունը»⁷: Այսինքն՝ կերակուրը ոչ միայն քաղցը բավարարելու միջոց և գործողություն է, այլև մշակութային ֆենոմեն և քաղաքակրթական աստիճանի բաղադրիչ: Այն ինչպես մարդու, այնպես էլ էթնոսի ինքնության նշաններից մեկն է: Հոգևոր, մասամբ նաև սոցիալական խմբերի հետ ճաշկերույթները անհրաժեշտաբար ենթադրում են զոհաբերություններ: Կարելի է ասել, որ մարդու կյանքի քիչ թե շատ կարևոր իրադարձությունները կապվում են **կերակրի, ուտելու, խրախճանքների և զոհաբերությունների** հետ: Պատահական չէ դրանց

² St' u Мифы народов мира. Энциклопедия. Электронное издание, М., 2008, էջ 176:

³ St' u նույն տեղը, էջ 285:

⁴ **Ле Гофф Ж., Трюон Н.** История тела в средние века, М., 2008, с. 55.

⁵ Նույն տեղում, էջ 56:

⁶ **Canetti E.**, Masse und Macht, München, 2011, S. 257.

⁷ **Элиаде М.** Миф о вечном возвращении, М., 2000, с. 26.

հարստությունը կրոնական և էպիկական տեքստերում, ինչը հնարավորություն է տալիս կերակրի սեմանտիկայի մեջ տեսնելու ոչ միայն միֆակրոնական, այլև սոցիալ-հոգեբանական գծեր:

Ուտելու գործողության մեջ Օ. Ֆրեյդենբերգը միաժամանակ տեսնում է զոհաբերություն⁸: Կրոնամիֆական մակարդակում կերակուրը, որը սովորական սնունդ չէ, այլ զոհաբերվող կենդանու միսը, խորհրդանշում է կապը աստվածների հետ: Չոհաբերվող կենդանին սրբազան է և հավատալիքի համաձայն՝ մարմնավորում է որոշակի աստծու: Ճաշակելով նրա միսը՝ հավատացյալները միավորվում են նրա հետ մարմնով և արյունով: Այդ միսը ճաշակում են ոչ միայն մարդիկ, այլև աստվածները: «Կերակրի արխայիկ իմաստավորումը, հասնելով մինչև տոտեմիզմ,- մանրամասնում է Օ. Ֆրեյդենբերգը,- լավագույնս պահպանվել է կրոնական ծեսի մեջ, որն անվանվում է պատարագ: Այն ներկայացնում է պատարագի հիմնական խորհուրդը՝ կերակրի դրաման, իսկ հացը և զինին Աստծու մարմինն ու արյունն են»⁹: Եվ հաղորդությամբ գործություն և ուժ է ձեռք բերում ոչ միայն մարդու մարմինը, այլև հոգին՝ համակվելով փրկության և «հարության գաղափարներով»¹⁰:

Չոհաբերության խորհրդի մասին խոսում է նաև Ջ. Ֆրոյդը¹¹: «Չոհաբերությունը և տոնակատարությունը,- գրում է նա,- բոլոր ժողովուրդների մոտ համընկնում են. յուրաքանչյուր զոհաբերություն ինքնին նաև տոնահանդես է, ոչ մի տոնահանդես չէր նշվում առանց զոհաբերության»¹²: Դրա հետ մեկտեղ՝ Ֆրոյդը նույնպես զոհաբերության մեջ տեսնում է առեղծված և խորհուրդ, ինչը զոհաբերությանը օժտում է միֆական իմաստով: Վաղնջական ժամանակներում զոհաբերվող կենդանին սրբազան էր, նրա կյանքը՝ անձեռնմխելի, այն կարող էր խլվել միմիայն այդ մեղքին ողջ տոհմի մասնակցության և աստծու ներկայության դեպքում... «Չոհաբերությունը խորհուրդ ուներ, ինքը՝ զոհաբերվող կենդանին, տոհմի անդամ էր»¹³: Եվ զոհի մահվան սրբազան միստերիան արդարացվում էր շնորհիվ այն բանի, որ միայն այդ ճանապարհով կարելի է հաստատել մասնակիցներին միմյանց և աստծու հետ կապող սրբազան կապը:

Փաստորեն զոհաբերության և հաղորդության հետ որոշակիորեն կապ ունի նաև ս. Գրաալը (Sangreal)՝ միջնադարյան արևմտաեվրոպական լեգենդներում խորհրդավոր անոթը, որը գտնելու համար սխարանքներ էին գործում ասպետները: «Հաճախ ենթադրվում էր,-

⁸ Տե՛ս **Фрейд** **О.**, նշվ. աշխ., էջ 56:

⁹ Նույն տեղում, էջ 53-54:

¹⁰ Նույն տեղում, էջ 54:

¹¹ Նկատի ունենք «Տոտեմ և տաբու» հանրահայտ ուսումնասիրությունը, որտեղ ավստրիացի մեծ հոգեբանը իր դիտարկումները և եզրակացությունները կատարում է օգտվելով ֆիզիկոս, բանասեր, Աստվածաշնչի և հնությունների հետազոտող Ռոբերտսոն Սմիթի «Սեմիտների ծագումը» աշխատության դրույթներից:

¹² **Фрейд** **З.** Тотем и табу, СПб., 2017, с. 214.

¹³ Նույն տեղում, էջ 220:

գրում է Ս. Ավերինցևը,- որ սկզբնապես այդ գավաթը ծառայում էր Հիսուսին և առաքյալներին Խորհրդավոր ընթրիքի ժամանակ, այսինքն՝ եղել է առաջին ժամերգության սկիզբը (գավաթ հաղորդության համար)»¹⁴: Միաժամանակ ս. Գրաալը օժտված էր իր ընտրյալներին ոչ երկրային համեղ կերակուրներ բաժին հանելու հատկությամբ, ինչը Գրաալը մերձեցնում է առատության դիցաբանական խորհրդանիշներին, օրինակ՝ Ամալթեյա այծի եղջուրը հունական և վերը նշված Դագդայի անսպառ կաթսան իռլանդական դիցաբանության մեջ:

Ծիսական ճաշկերույթից որոշակիորեն տարբերվում է աշխարհիկը, որ սովորաբար անվանվում է խրախճանք: Այստեղ ևս գլխավորը ուտելն է, ուստի անխուսափելի է դառնում զոհաբերությունը: Ի տարբերություն ծիսական զոհաբերության միջակայքի հարուստ սեմանտիկայի՝ այստեղ գերիշխողը սոցիալական և հոգեբանական ասպեկտներն են: Անշուշտ, դրանք առկա են նաև ծիսական ճաշկերույթի ժամանակ, որովհետև այս դեպքում ևս գերիշխում է միասին ուտելու և միասին աստծուն հավատալու և ծառայելու գիտակցությունը. այդուհանդերձ, աշխարհիկ, հատկապես ռազմական խմբերի խնջույքներում այդ գիտակցությունը շատ ավելի է ընդգծվում: «Ուտողների միջև ամենաուժեղ կապը,- ընդգծում է Է. Կանետտին,- ստեղծվում է, երբ նրանք միևնույն կանդանու միսն են ուտում, միևնույն մարմինը, որին ծանոթ են եղել, երբ այն դեռ ողջ էր ու ամբողջական, կամ մեկ բոքոն հաց են կիսում»¹⁵: Եվ եթե ծիսական ճաշկերույթներում շատ ավելի կարևոր են Աստված - մարդ կապի հաստատումն ու ամրապնդումը (**ուղղահայաց կապ**), ապա աշխարհիկ խնջույքներում առաջնահերթը խմբի մեջ մտնող անդամների կապի ուժեղացումն է (**հորիզոնական կապ**): Միասին ուտելը սոցիալական և բարոյական վիթխարի ուժ է պարունակում: Այն վայրը, որտեղ միասին ուտում են, նույնպես կարևոր նշանակություն ունի: Որքան մեծ լինի այն, այնքան ավելի է մեծանում խմբի անդամներ ընդգրկելու նրա հնարավորությունը, ուստի նույնքան էլ մեծանում է սոցիալական-բարոյական լիցք գեներացնելու հնարավորությունները: Լավագույն օրինակը, թերևս, անգլոսաքսոնական «Բեովուլֆի» Հեորոտն է, Հրոտգար արքայի եղջերազարդ պալատը, որը ոչ միայն մեծությամբ, այլև գեղեցկությամբ ասես վերածվում է աշխարհի կենտրոնի: Հնարավորինս մեծ թվով խրախճանողներ հավաքելուն է միտված նաև կելտական արքա Լովերնիուսի կազմակերպած հսկա կառույցը, որի մասին վկայում են անտիկ առանձին հեղինակներ: «...Մի կողմից ցանկապատելով տասներկու ստադիա»¹⁶ ուղղանկյուն տարածքը թագավորն այնտեղ տեղադրեց մեծ գուռեր՝ լցված թանկ գինով, իսկ ուտելիքները կուտակված էին բլրաչափ, այնպես որ մի քանի օր շարունակ նա կարող էր հյուրասիրել բոլոր ցանկացողներին չզգա-

¹⁴ Мифы народов мира, с. 262.

¹⁵ Canetti E., նշվ. աշխ., էջ 259:

¹⁶ Ստադիա- տարածության հունական չափ, որ հավասար է մոտ 185 մետրի:

լով ոչ մի բանի պակաս»¹⁷:

Կերակրի սեմանտիկայի նոր գիծ է տեսնում Է. Կանետտին: «Այն ամենը,- գրում է նա,- ինչ ուտելի է, իշխանության առարկա է»¹⁸: Դա կարելի է տարածել նաև հոգևոր-կրոնական աշխարհի վրա և գտնել բազմաթիվ օրինակներ: Լավագույնը, թերևս, նորկտակարանային Խորհրդավոր ընթրիքն է:

Ահա հենց այս բազմազան սեմանտիկան, մարդու և հասարակության համար ունեցած կարևորությունն են պատճառը, որ ինչպես կրոնական տեքստերը, այնպես էլ էպիկական ավանդույթը լեցուն են թե՛ ծիսական, թե՛ աշխարհիկ ճաշկերույթների ու խրախճանքների նկարագրությամբ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ աշխարհիկ խրախճանքները էպիկական գրականության մեջ հանդես են գալիս երկու տարատեսակով՝ իբրև **տոնահանդես** և իբրև **դավադրություն**:

Ահա աշխարհիկ խրախճանք-տոնահանդեսի դասական օրինակների մեկը, որ բարեսիրտ խոզարածները կազմակերպում են «հեռուստ եկած հյուր-եկվորի»՝ Ողիսեսի պատվին.

Մինչդեռ նրանք ներս բերեցին խոզն հնգամյա և պարարտուն,
Որը իսկույն տեղավորվեց, կանգնեց այնտեղ օջախի մոտ:
Խոզարածը, որ բարեպաշտ հոգի ուներ, չմոռացավ աստվածներին,
Նա սկսեց ճերմակատամ խոզի գլխից քաղել մազերն արագորեն,
Կրակի մեջ դրանք նետել: Նա աղոթեց աստվածներին երկնաբնակ՝
Աղերսելով, որ ետ դառնա դեպ իր տունը Ողիսեսը ամենագետ:
Ապա վերցրեց կոճղը կաղնի, զարկեց խոզին, որ տապալվեց թավալգոր,
Հոգին թռավ մարմնի միջից: Եվ մորթեցին նրանք այդ խոզն ու քերթեցին,
Հետո հապճեպ կտրատեցին, և կտորներն անդամների
Խոզարածը իսկույն նեթ շուրջանակի ճարպով պատեց
Եվ հռչվածին գարե այլուր՝ նաշիհ ցանեց ու այն գցեց կրակի մեջ,
Իսկ մնացյալը, բրդելով, շուտ զարկեցին շամփուրներին:
Խորովեցին զգուշորեն, այնուհետև շամփուրներից դուրս քաշեցին
Ու սեղանի վրա ամբողջը դրեցին: Կանգնեց այնժամ խոզարածը
Եվ սկսեց միսը բաժանել արդարացի, քանզի ազնիվ նա սիրտ ուներ:
Ահավասիկ, ամբողջն այդպես նա բաժանեց յոթ մասերի,
Մեկը ձոնեց նիմֆաներին և Հերմեսին, որը զավակն է Մեասի,
Եվ աղոթեց նա ջերմեանդ, իսկ մնացյալը մի առ մի բաշխեց նրանց:

(Ողիսական, Երգ տասնչորսերորդ, 420-437)

Սովորաբար տոնահանդես-խրախճանքին, կերակրի և ուտելու հետ կապված բազմազան նշանակություններից գատ, ինչպես նշվում է վերը, վերապահվում են նաև մշակութային լայն գործառույթներ: Դա տեսանելի է ինչպես արևելյան («Մահաբարաթա», «Ռամայանա», «Շահնամե»), այնպես էլ արևմտյան էպոսներում: Միասին ճաշելը, մանավանդ եթե առկա է նաև զոհաբերությունը, ինչպես էթնիկական, այն-

¹⁷ Մեջբերման աղբյուրը՝ **Поск Э. Кельты-язычники**, М., 2005, էջ 123:

¹⁸ **Canetti E.**, նշվ. աշխ., էջ 217:

պես էլ սոցիալական և հոգևոր խմբերում ստեղծում է երանության մթնոլորտ, իրական կյանքի հակասությունները տրվում են մոռացության, գերիշխում է ներդաշնակությունը, և մարդը կարծես վերստին հայտնվում է առասպելի և արարչության նախնական ժամանակներում: Տակիտոսը վկայում է, որ հին գերմանները իրենց ազատ ժամանակն անցկացնում էին կա՛մ որսորդությամբ, կա՛մ խնջույքներով¹⁹: Սկանդինավյան «Ավագ Էդդան» («Բարձրյալի խրատանին») հանգամանորեն խոսում է խրախճանքի մշակույթի մասին: Խրախճանքի յուրաքանչյուր մասնակից պարտավոր է պահպանել այն կանոնները, որոնք սահմանվել են տվյալ օրվա համար: Այսինքն՝ խրախճանքը ենթադրում է որոշակի պահվածք, հարաբերությունների, խոսելու, դիմելու, հյուրերին ընդունելու և ճանապարհելու հաստատված վարվելաձև: Շատախոսությունը կարող է ազնվականի համար հիմարի համբավ ստեղծել: Անկասկած, խնջույք-տոնահանդեսները եղել են ազնվականական դասի դաստիարակության միջոց բոլոր ժամանակներում: Հենց խնջույքներն են դառնում այն վայրը, որտեղ զարգացում են ապրում քաղաքական, փիլիսոփայական գրույցները, հանդիսանքային որոշ արվեստները, երաժշտությունը: Այստեղ բանաստեղծները արտասանում էին իրենց ստեղծագործությունները, իսկ սկոպ-երգիչները ներկայացնում է պիկական-հերոսական երգեր, սագաներ և այլն: «Խնջույքի սոցիալական գործառույթը,- գրում է Ա. Գուրևիչը,- ներառում էր նաև բարձրագույն ուժերի՝ հեթանոս աստվածների հետ հաղորդակցությունը»²⁰:

Էպիկական ավանդույթը հարուստ է նաև խրախճանք-դավադրության օրինակներով, բայց դա վերաբերում է նաև կրոնական և պատմագրական տեքստերին: Հունական առասպելը, օրինակ, պատմում է Պրոմեթևսի հումանիստական սխրանքի մասին, բայց այնտեղ ակնհայտ են նաև նենգամտությունը և սուտը. Պրոմեթևսը զոհաբերված կենդանու ճարպը և ոսկորները մատուցում է Ջևսին, իսկ մարդկանց թողնում է միսը: Հեսիոդոսի տեքստը հետևյալն է.

Այդժամ մորթեց Պրոմեթևսը իր իսկ կամքով մի մեծ արջառ,
 Եվ, ձգտելով խաբել Ջևսին, այն բաժանեց կտորների:
 Միսը, առատ փորոտիքը, փաթաթելով լայն մորթու մեջ,
 Նա ճարպի հետ դրեց մի կողմ, ծածկեց ցուլի որովայնով,
 Ապա սպիտակ ոսկորները, նենգախորհուրդ ճարտարությամբ,
 Նա հավաքեց մի կույտի մեջ, պատեց փայլուն ու հաստ ճարպով,
 Բայց այդ պահին աստվածների, մարդկանց հայրը նրան ասաց.
 «Յապետոսի որդի, բոլոր արքաներից գերազանցը,
 Միրելիդ իմ, դու այդ արջառն անհավասար բաժանեցիր»:

(Հեսիոդոս, Թեոգոնիա, 536-544)

Կերակրի դիցաբանական պատմության ամենադաժան խաբեություններից մեկը, անկասկած, կապվում է Տանտալոսի հետ: Նա իր տուն է

¹⁹ См. у Тацит К. Сочинения в двух томах, т. 1, Ленинград, 1969, էջ 360:

²⁰ Словарь средневековой культуры, М., 2003, с. 359.

հրավիրում աստվածներին և նրանց ամենագիտությունը փորձելու համար սպանում է իր որդուն՝ Պելոպսին, և միսը մատուցում հյուրերին²¹:

Արևելքի և Արևմուտքի քաղաքական պատմությունը ևս առատ է դավադիր սպանություններով, որոնք իրականացվել են հենց խրախճանքների ընթացքում: Էլիաս Կանետտին հակիրճ ներկայացնում է նման դավադրությունների ողջ «դրամատուրգիան»՝ դա բացատրելով կերպարանափոխության գործոնով: «Տիրակալը,- գրում է նա,- ճաշի է հրավիրում ռազմական կամ քաղաքացիական ազնվականությանը: Հանկարծ, երբ նրանք միանգամայն մոռանում են թշնամանքը, բոլորը կոտորվում են: Մի իրադարձությունից մյուսին անցումը ճշգրտորեն համապատասխանում է դիմակների փոփոխությանը»²²: Մեր ժողովրդի պատմությունը ևս զերծ չէ նման փաստերից: Փավստոս Բուզանդը գրում է. «Պապ թագավորը ընթրիքի գալով՝ մտավ և բազմեց կերուխումի: Եվ երբ թագավորը մտնում է հունաց Տերենտ գորավարի սենյակը, լեզունի ասպարակիր զինվորները...սենյակի պատերի մոտ շրջապատելով պահպանում էին. նույնպես և (սենյակից) դուրս պատրաստ կանգնած էին լավ սպառազինված, իսկ վրայից սովորական զգեստ հագած (զինվորներ): Իսկ Պապ թագավորն իր խելքով այնպես էր կարծում, թե իրեն պատվելու համար են այդպես անում: Վահանավոր զորքին հրաման տվին, և մինչ Պապ թագավորը ուրախության զինին բռնած էր մատներով ու նայում էր գուսանների խմբին, մինչ ձախ ձեռքը արմունկին հենած՝ մատներում բռնած ուներ ոսկե թասը, իսկ աջ ձեռքը դրել էր նրանի կոթին, որ կապած ուներ աջ ազդրին, մինչ բաժակը բերանն էր տարել, որ խմեր, իսկ աչքերով հառած նայում էր գուսանների խմբերին, Հունաց զորքերին աչքի ակնարկով նշան է տրվում. և երկու սակրավոր զինվորներ, որ ետևից կանգնած էին սպասավորության ոսկեպորտ վահաններով, հանկարծորեն միասին սակրերը բարձրացնելով զարկում են Պապ թագավորին»²³: Ահա խրախճանքի ժամանակ տեղի ունեցած քաղաքական սպանության ևս մեկ օրինակ վաղմիջնադարյան Եվրոպայի պատմությունից, որ վերաբերում է բարբարոսների բանակի առաջնորդ Օդոակրի և վեստգոթերի թագավոր Թեոդորիխ Մեծի բախումներին, որոնք բազմիցս արտացոլվել են զանազան էպիկական երգերում: Ճակատագրական է դառնում Ռավեննա քաղաքի գրավումը: «Ի վերջո,- գրում է պատմաբանը,- 493 թ. փետրվարի 25-ին քաղաքի եպիսկոպոս Իռեաննի միջնորդությամբ կնքվեց պայմանագիր, որի համաձայն՝ Թեոդորիխը և Օդոակրը պետք է միասին իշխեին մայրաքաղաք Ռավեննայում և միասին պետք է իշխեին Իտալիային: Համաձայնելով բանակցությունների նման արդյունքի՝ Թեոդորիխը, ճիշտ է, խախտում էր կայսեր հետ միությունը, բայց դրա փոխարեն նա 493-ի մարտի 5-ին մտավ Ռավեննա: Տաս օր անց Օդոակրը սպանված էր. Թեոդորիխը սպանեց նրան անձամբ: Օդոակրին նա սպա-

²¹ См. u Мифы народов мира, с. 966.

²² Canetti E., նշվ. աշխ., էջ 337:

²³ Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Եր., 1968, էջ 271-272:

նեց համատեղ խնջույքի ժամանակ...Մինչ Թեոդորիիսի երկու վստահված անձինք, ներկայանալով իբրև խնդրարկուներ, բռնել էին գոհի ձեռքերը, գոթ արքան սրով խոցեց պայմանագրով իր դաշնակցին»²⁴:

Նմանատիպ պատմական փաստերից կարելի է հիշատակել նաև հռոմեական կայսր Դոմեցիանոսի (մ. թ. I դ.) հանրահայտ «ճաշկերույթը», որ ստացել է «Թաղման խնջույք» անվանումը: Դոմեցիանոսի, որի բնավորության մեջ «արատներն ու արժանիքները հավասար չափով էին»²⁵, խորհրդավոր խրախճանքի մասին պատմում է Դիոն Կասիուսը: «Ահա թե ինչպիսի ընդունելություն կազմակերպեց կայսրը մի անգամ նշանավոր սենատորների և հեծյալների համար,- գրում է հռոմեացի պատմիչը:- Նա նախապատրաստեց դահլիճը, որտեղ ամեն ինչ, անգամ առաստաղը, պատերը և հատակը ներկված էին սև, և ուղղակի մերկ հատակին տեղադրեց սև օթյակներ: Այնուհետև գիշերով հրավիրեց իր հյուրերին՝ միայնակ, առանց ծառաների ուղեկցության: Հրավիրվածներից յուրաքանչյուրի առաջ նախ դրեց տապանաքար-սալիկ՝ հյուրի անունով, և ոչ մեծ լապտեր՝ նման այն լապտերներին, որ սովորաբար կախվում են գերեզմանոցներում: Դրանից հետո ուրվականների պես դահլիճ մտան մերկ, գեղեցիկ տղաներ, նույնպես ներկված սև և, հյուրերի շուրջը չարագուշակ պարելով, տեղավորվեցին նրանց ոտքերի մոտ: Այնուհետև սև ափսեներով բերեցին զանազան առարկաներ, որ սովորաբար գործածվում են մեռածների հոգիների համար գոհաբերությունների ժամանակ՝ նույնպես սև գույներով: Արդյունքում հյուրերից յուրաքանչյուրը սարսափից քարացել ու դողում էր՝ սպասելով, որ հաջորդ ակնթարթին կտրելու են իր կոկորդը»²⁶: Այստեղ թեև բանը սպանությանը չի հասնում, սակայն խրախճանքը վարպետորեն փոխակերպվում է և վերածվում մահվան կատարյալ բեմադրության:

Եվրոպական էպիկական ավանդույթում նույնպես շատ են դավադրություն- խրախճանքի օրինակները: Ներկայացնենք դրանցից մի քանիսը:

Խրախճանքներով առհասարակ ամենահարուստը Եվրոպայում կելտական էպոսն է: Սակայն դրանց մեջ առանձնանում է մեկը, որտեղ խրախճանքի փոխակերպումը դավադրության դառնում է անխուսափելի: Դա «Պատմություն Մակ Դատոյի վարազի մասին» սագան է:

«Լայնստերում»²⁷ մի հզոր արքա կար,- պատմում է սագան:-Եվ նա ուներ մի շուն²⁸, որ պահպանում էր ողջ Լայնստերը: Նրա անունն էր

²⁴ Вольфрам Х. Готы, СПб., 2003, с. 401-402.

²⁵ Սվետանիոս, Տասներկու կեսարների կյանքը, Եր., 1986, էջ 292:

²⁶ Кассий Д. Римская история, СПб., 2011, с. 71-72.

²⁷ Իռլանդիան միջնադարում բաժանված էր հինգ թագավորությունների՝ Լայնստեր, Ուլադ, Մունստեր, Կոննախտ և Միդլե: Լայնստերի արքա Մակ Դատոյից բացի, այստեղ ներկա են նաև Կոննախտի արքան և թագուհին՝ Այլլին ու Մեդբը, ինչպես նաև Ուլադի արքա Կոնխոբարը:

²⁸ «Եվ նա ուներ մի շուն» արտահայտությունը տիպաբանորեն հիշեցնում է Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» այն դրվագը, որը պատմում է հայոց Տիրան թագավորի գեղեցիկ ձիու, նրա սենեկապետ Փիսակի մատնության մասին և Պարսից պատերազմի այլ մանրամասներ: «Այն ժամանակ Տիրան թագավորը մի ձի ուներ, որի վրա բոլորը զարմանում

Այլքե, և ողջ Լայնաստերը լեցուն էր նրա փառքով: Եվ մի անգամ Այլիլից ու Մեղբից բանագնացներ եկան ժամանակավորապես խնդրելու այդ շունը: Եվ նույն պահին բանագնացներ եկան Կոնխոբարից՝ նույն խնդրանքով: Նրանց բոլորին նա սրտանց դիմավորեց և տարավ խնջույքի սրահ»²⁹: Սազան մանրամասնորեն նկարագրում է խնջույքի այն վեց դահլիճներից մեկը, որ գտնվում է Մակ Դատոյի պալատում: Այն ունի յոթ դուռ, և յոթ ճանապարհ տանում են դեպի այդ դահլիճ: Ներսում կան յոթ օջախներ՝ յոթ կաթսաներով, որոնցում եփում էին տավարի և խոզի աղ դրած միս: Սակայն խորհրդավոր ու միֆական գծեր ունեցող այդ դահլիճը այն տպավորությունն է թողնում, որ կարծես կառուցված է հենց իրարանցումների, դավադրությունների և սպանությունների նպատակով: Հատկանշական է, որ ինչպես այս, այնպես էլ մյուս հինգ դահլիճները, որոնք գտնվում են Իռլանդիայի տարբեր թագավորություններում, հիշատակվում են խնջույքների և դրանց հաջորդած բախումների ու սպանությունների պատմությամբ: Ծանր վիճակի մեջ է հայտնվում Լայնաստերի արքան, սակայն էլ ավելի ծանրանում է նրա վիճակը, երբ շունը միաժամանակ խոստանում է և՛ Այլիլին, և՛ Կոնխոբարին: Եվ դա անում է կնոջ խորհրդով. «Թող իրենց վեճը լուծեն կովով»: Մակ Դատոն կազմակերպում է մեծ ու ճոխ խրախճանք՝ հյուրերի համար մորթելով հազվադեպ մի վարազ³⁰, որին յոթ տարի սնել էին վաթսուն կովերի կաթով, ինչպես նաև վաթսուն ցուլ: Երբ մտնում են ներս, Կոննախտի և Ուլադի թագավորներն ու ռազմիկները նստում են դահլիճի հակառակ կողմերում: Նրանց միջև թշնամանքը հին պատմություն ունի, այն սկսվել է Քրիստոսից դեռևս երեք հարյուր տարի առաջ, և հիմա նրանք վերստին հայտնվում են դեմ դիմաց: Խրախճանքի պարտադիր ձեսերից մեկը զոհաբերված կենդանու լավագույն կտորն ստանալու իրավունքն է, որ պատկանում է ներկաներից ամենաբաջին: Այս դեպքում անխուսափելի են դառնում խոսքակոխվածները, որոնք, ինչպես հայտնի է, էպոսներում լայնորեն տարածված մոտիվ են³¹: Դրանք կան և այս սազայում: Բրիկրենը, որ իռլանդական

էին: Այդ ձին մուգազանակագույն և պուսպուտիկ էր, ուժով լի, հոյակապ, հոչակված, բոլոր ձիերից մեծ ու բարձր, տեսքով բոլորից գեղեցիկ ու սիրուն, որի նման ուրիշը չկար»: Փիասկը թագավորի սենեկապետը, պատմիրակ գնալիս այս ձին մատնում է պարսից արքա Շապուհ-Վարազին: Որքան էլ փորձում է հայոց արքան հեռու պահել իր գեղեցիկ ձին պարսից արքայի աչքերից ու ձեռքերից, դա նրան ոչ միայն չի հաջողվում, այլև վճարում է կյանքով: Տիրան թագավորից պարսից արքան վրեժը լուծում է նենգությամբ՝ ընթրիքի հրավիրելով նրան: «Երբ խմելն սկսեցին, թագավորը և նրա հետ եղողները սաստիկ հարբեցին, և այդ ժամանակ դարանակալ գորքը հանկարծակի հարձակվելով սեղանակիցների վրա՝ յուրաքանչյուրին առանձին բռնեցին» (**Փավստոս Բուզանդ**, Հայոց պատմություն, էջ 106-109):

²⁹ Саги об уладах, М., 2004, с. 419.

³⁰ Վարազ մորթելը պատահական չէ և ունի միֆական հիմքեր: Վարազի պաշտամունքը հնդեվրոպական ժառանգություն է, որ անցել է պարսիկներին, հույներին, կելտերին և գերմանական ժողովուրդներին: «Ուղիսականից» վերը բերված օրինակում Եվմեոսը նույնպես խոզ է մորթում: Այս կենդանին խորհրդանշում է ոչ միայն առատությունը և հարստությունը, այլև համառությունը և նպատակալացությունը, որոնք երևում են նաև մեկնաբանվող սազայում:

³¹ Օրինակ բերելով խնջույքի մասին կելտական սագաները՝ Յ. Հայզինգան նկա-

Էպոսում հայտնի կովարարի համբավ ունի, պահանջում է, որ վարազը կտրաստի ամենաքաջը: Առաջ է գալիս Կոննախտի հերոս Կետը և փորձում կտրաստել վարազը: Բայց մինչ այդ նրա և ուլադցի ռազմիկների միջև ընթանում է խոսքակռիվ: Ծաղրելով նրանց՝ Կետը թվարկում է ուլադ ռազմիկների դեմ տարած իր հաղթանակները: Բայց անսպասելի ներս է մտնում ուլադ հերոս Կոնալ Հաղթականը³² և ընդհատում նրան.

«-Հեյ, հեռու մնա վարազից,- բացականչեց Կոնալը:

-Իսկ քո ի՞նչ գործն է,- հարցրեց Կետը:

-Դու իրավունք ունես ինձ մենամարտի կանչելու,-ասաց Կոնալը,- ես պատրաստ եմ կովելու քեզ հետ, Կետ: Երդվում եմ՝ այն օրվանից, երբ նիզակ եմ վերցրել ձեռքս, չի անցել գեթ մի օր, որ չսպանեմ թեկուզ մեկ կոննախտու:

-Դա ճիշտ է,- ասաց Կետը:- Դու ավելի լավ ռազմիկ ես, քան ես: Բայց եթե այստեղ լինեիր եղբայրս՝ Անլուանը, նա քեզ հետ ուրիշ կերպ կխեսեր: Ափսոս, նա այստեղ չէ:

-Նա այստեղ է, ահա նա,- բացականչեց Կոնալը՝ գոտուց դուրս քաշելով Անլուանի գլուխը»³³:

Իսկ հետո սկսվում են մեծ կռիվն ու կոտորածը: Եվ շանր, որ պատճառ էր այս մեծ բախման և մասնակցում էր ուլադների կողմից, սպանում է Մեդր թագուհու կառապանը:

Այս սագան միակը չէ իռլանդական էպոսում, որ մեկնաբանում է իրախճանքի և դավադրության միասնությունը: Նման մոտիվի շուրջ են կառուցված նաև «Բրիկրենի խնջույքը», «Ուլադների զինովությունը» և մի շարք այլ սագաներ: Հատկանշական է, որ նշված բոլոր սագաներում պարտադիր կերպար է Բրիկրենը, որին, իբրև ծաղրածու և տրիկստեր, համեմատում են հունական էպոսի Թերսիդեսի («Իլիական») և սկանդինավյան էպոսի Լոկիի հետ («Ավագ Էդդա»)՝³⁴: Օրինակ՝ «Լոկիի բանավեճը» սագայում, որը ներկայացնում է սկանդինավյան իրախճանող աստվածներին, ներս է մտնում Լոկին և ասում.

«Պետք է ներս մտնեմ անհապաղ

Էգիրի փառահեղ սրահ,

աչք նետեմ խնջույքին նրանց:

Վեճ ու չարիք պիտի բերեմ

ես ասերի զավակներին,

մաղձ ու լեղի խառնեմ մեղրին»³⁵:

տում է, որ այդ խոսքակռիվները միտված են տղամարդկանց՝ միմյանց հետ չափվելուն (տե՛ս **Յ. Հայզինգ**, Homo Ludens, Եր., 2007, էջ 104):

³² Ինչպես ենթադրում են առանձին մասնագետներ, սագայում իռլանդական ազգային հերոսի՝ Կուլտուլինի բացակայության պատճառն այն է, որ սագան ավելի հին է, քան Կուլտուլինի ժամանակը:

³³ Саги об уладах, с. 427.

³⁴ St u, մասնավորապես, **Мелетинский Е.** Кельтский эпос // История всемирной литературы, в 9 томах, т. 2, М., 1984, էջ 464-465:

³⁵ Ավագ Էդդա, Եր., 2018, էջ 231-232:

Խրախճանքն իբրև դավադրություն մոտիվի այլ տարբերակներ են առկա անգլո-սաքսոնական «Բեովուլֆում»: Դրանք ունեն փիլիսոփայական-հոգեբանական ենթատեքստ և ներկայացնում են ուրախության և լացի միասնությունը: Այն, որ կյանքը լացի և ուրախության միասնություն է, հնագույն ժամանակներից ի վեր հայտնի է առասպելին, բանահյուսությանը և էպոսին: Հունական դիցաբանության մեջ, օրինակ, տիեզերական երկմիասնության մարմնացում է երկդիմի Յանուս աստվածը, որը բազմազան գործառույթներ ունենալուց զատ նաև երկու ճանապարհների տիրակալ է. դրանցից մեկը տանում է դեպի երկինք, մյուսը՝ դեպի դժոխք³⁶, չինականում՝ Ին և Յան սկզբունքները: 20-րդ դարում դա արձանագրում է նաև գիտությունը: Ջ. Ֆրոյդը դա ներկայացնում է իբրև երկու հակադիր հակումների՝ էրոսի և թանատոսի պայքար³⁷: «Ինչպես ծիծաղը,- գրում է Օ. Ֆրեյդենբերգը,- լացը նույնպես ոչ թե պարզապես կենսաբանական, այլ աշխարհայացքային փաստ է, որն ունի իր սեմանտիկ պատմությունը: Նախնադարյան որսորդական հասարակության մեջ «լացը» և «ծիծաղը» իմաստավորվում են տիեզերաբանորեն. ծիծաղը և լացը տարանջատված չեն գիտակցության մեջ և ուղեկցում են տոտեմի անհետացմանն ու հայտնվելուն... Լացի և ծիծաղի երբեմնի միասնությունը դրսևորվում է նրանով, որ անգամ միմյանցից տարանջատվելով՝ դրանք շարունակում են միասնաբար ապրել ծեսի և առասպելի մեջ»³⁸: Լ. Աբրահամյանը կարծում է, որ խրախճանքի պահին կողք-կողքի նստած մարդկանց մերձությունը կարող է առաջացնել ոչ միայն ուրախություն և ծիծաղ, այլև լաց և տրտմություն, իսկ մարդկային հույզերի այդքան տարբեր դրսևորումները, այսինքն՝ լացը և ծիծաղը, ունեն ֆիզիոլոգիական միևնույն հիմքը: Դրանք շատ արագ կարող են հաջորդել մեկը մյուսին: Այսպիսով, համաձայն հայ սոցիոլոգի, կարելի է խոսել լացի և ծիծաղի ոչ այնքան սեմանտիկ, որքան հոգեֆիզիոլոգիական միասնության մասին³⁹:

«Բեովուլֆն» ընդգրկում է խրախճանքի չորս տեսարան, որոնցից երեքում առկա է ուրախության փոխակերպում լացի: Հերոսական աշխարհի այս դիստոմիան նկատում է Օ. Ֆոմինը, երբ այնտեղ տեսնում է «խնջույքի և արյունահեղության» հակադրություն⁴⁰: Դաների (դանիացիների) բարի և հզոր արքա Հրոտգարը կառուցում է մի հրաշալի պալատ, որն անվանում են Հեորոտ, այսինքն՝ եղջերվազարդ, քանի որ իսկապես զարդարվում է եղջերուների եղջուրներով⁴¹: Այստեղ ամեն ան-

³⁶ Տե՛ս **Генон Р.** Символы священной науки, М., 2002, էջ 160:

³⁷ Տե՛ս **Фрейд З.** Избранное, М., 1990, էջ 391:

³⁸ **Фрейденберг О.**, նշվ. աշխ., էջ 95-96:

³⁹ Տե՛ս **Абрамян Л.** Первобытный праздник и мифология, Ер., 1983, էջ 48:

⁴⁰ Տե՛ս **Фомин О.** Сакральная триада: алхимия, мифология и концептология, М., 2005, էջ 129:

⁴¹ Եղջերուն և մասնավորապես եղջուրը նույնպես կապվում են պաշտամունքային հնագույն ավանդույթի հետ: Ամենից առաջ այն խորհրդանշում է գեղեցկությունը, վեհությունը, ազնվականությունը: Պատահական չէ, որ այս կենդանու պատկերը միջ-

զամ հաղթանակներից հետո իրենց խրախճանքն են անում Հրոտզարն ու իր ռազմիկները: Դա աշխարհաբարման պես մի սխրանք է, որ դաների գիտակցության մեջ Հեռոտը դարձնում է խաղաղության և ներդաշնակության խորհրդանիշ: Մակայն հրեշ Գրենդելի գիշերային հարձակումները ավերում են ամեն ինչ: Ուրախությունը փոխակերպվում է լացի: Այն կարող է վերականգնվել միմիայն ֆանտաստիկ հերոսի օգնությամբ: Դա Բեովուլֆն է, որն անսովոր կռվում հաղթում է թե՛ Գրենդելին և թե՛ նրա մորը:

Ուրախության և լացի միասնության օրինակներով հարուստ է նաև գերմանական դիցաբանությունն ու բանահյուսությունը: Սկանդինավյան Վալհալլան, ըստ էության, այլ բան չէ, քան խրախճանքի և մահման միֆապոետական համադրություն: Դա Օդին աստու երկնային պալատն է, որտեղ ամեն օր խրախճանք են անում մեռած հերոսները և սպասում աշխարհի վերջին՝ Ռագնարոկին, որպեսզի վերստին իջնեն մարտի դաշտ և կռվեն չար հսկաների դեմ: Մոտիվը որոշակիորեն առկա է նաև գերմանական «Կուդրուն» պոեմում, որի Առաջին դիպվածը պատմում է արքայական մեծ խնջույքի մասին, բայց տոնահանդեսը շուտով փոխվում է սգի, քանզի կատաղի արծիվը առևանգում է պատանի արքայազն Հագենին և կորչում երկնքում⁴²:

Խրախճանքներն ու դավադրությունները շատ են հատկապես գերմանական ազգային էպոսում՝ «Նիբելունգների երգում»: Ավելին, պոեմում հանգուցային բոլոր խնդիրները ծագում կամ լուծվում են հենց խրախճանքներում: Բայց դրանց տեսակը, ըստ էության, այլ է: Այստեղ գերիշխում է Է. Կանետտի առաջարկած «դիմակների փոփոխության» սկզբունքը: «Երգի» առաջին մասում դավադրաբար սպանվում է Ջիզֆրիդը՝ գերմանական էպոսի ամենասիրված հերոսը: Թեև նա բուրգունդ արքաների փեսան է, նրանց միակ քրոջ՝ գեղեցկուհի Քրիմհիլդի ամուսինը, սակայն նրա ուժը, ռազմական հաջողությունները և մանավանդ մեծ հարստությունը (Ջիզֆրիդը տերն է նիբելունգներ

նաղարյան Ֆրանսիայում և Անգլիայում եղել է առանձին արքայատոհմերի զինանշան: Կելտական մի քանի աստվածներ կրում են եղջերուի եղջյուրներ: Հին գերմանների հավատալիքների համաձայն՝ ոտքերի տակ օձը ճզմող եղջերուն համարվում է չարիքը ոչնչացնող խորհրդանիշ: Այն փոխանցվում է նաև քրիստոնյաներին: Հունական միստերիաների համաձայն՝ եղջերուն նաև խորհրդանիշն է բարոսական խրախճանքների: Խորհրդանշական իմաստ ունեն նաև եղջերուի եղջյուրները իբրև բնորոշ նշան աստվածային ուժի: Այդ իմաստով եղջյուրների պաշտամունքը լայնորեն տարածված է եղել Հին Եգիպտոսում (Ամոն աստվածը կրում է խոյի եղջյուրներ), Հին Հունաստանում (հույները Ապոլոն և Դիոնիս աստվածներին երբեմն պատկերում էին եղջյուրներով), կելտերի մեջ և այլուր: Աստվածաշնչում ևս այդ մասին խոսվում է: Մուրբ Գրքի առանձին թարգմանություններում Սինա լեռից իջնող Մովսեսը ներկայացվում է իբրև «եղջյուրներով օժտված» (այսինքն՝ աստվածային իմաստություն ձեռք բերած) մեկը: Իբրև այդ պատկերացումների արտահայտություն կարելի է համարել Միքելանջելոյի հանրահայտ արձանը. Մովսես մարգարեին իտալացի հանձարը նույնպես եղջյուրներով է պատկերել: Դրա հետ մեկտեղ՝ եղջյուրները, իբրև լուսնային խորհրդանիշներ, նաև մահվան հետ են կապվում:

⁴² St. u. Кудруна, М., 1984, էջ 12-13:

րի անսպառ գանձերի) հանգիստ չեն տալիս նրա բարեկամ-թշնամիներին: Բուրգունդ արքաները՝ ազնիվ մարտում չեն կարող հաղթել նրան և դիմում են դավադրության՝ այդ նպատակով կազմակերպելով որս և խրախճանք: Այդ ամենի հեղինակը նենգախորհուրդ Հագենն է, դրան ակամա մասնակից է նաև Զիգֆրիդի սիրելի կինը՝ Քրիմհիլդը: Մեռնող Զիգֆրիդը նգովում է դավադիրներին.

Թող անիծվի նա, ով ձեզնից պիտի սերվի, գա աշխարհ,
Եվ կռուկեցի այսօրվանից ձեզ նգովքը իմ արդար,
Կույր չարությամբ իմ վրեժը դուք հավիտյան ստացաք,
Ով ձեզ ասպետ կոչի, նրան հազար ամոթ, անարգանք:

(Նիբելունգների երգը, 990)

Տարիներ անց, ամուսնանալով հոների հզոր արքա Էթցելի (Աթիլա) հետ, ամուսնու վրեժը հարազատ եղբայրներից և բուրգունդ ասպետներից կարողանում է լուծել Զիգֆրիդի այրին՝ Քրիմհիլդը: Ներկայանալով իբրև եղբայրներին կարոտած քույր՝ նա իր մոտ խրախճանքի է հրավիրում բուրգունդ արքաներին և կոտորում բոլորին: Խրախճանքը վերածվում է սպանդի:

Կերպարանափոխության միևնույն մոտիվն է իսլանդական «Ավագ Էդդայի» երկու երգերում՝ «Գրենլանդական երգ Աթլիի մասին» և «Աթլիի գրենլանդական խոսքերը», որոնցում վերստին սյուժեի կարևորագույն գործոններ են խնջույքը և դավադրությունը: Աթլին (սա հոների առաջնորդ Աթիլան է) իր մոտ խնջույքի է հրավիրում իր կնոջ՝ Գուդրունի եղբայրներին՝ Գուննարին և Հյոգնիին, և դավադրաբար սպանում: Եղբայրների վրեժը լուծում է Գուդրունը: Նա նախ սպանում է Աթլիից ծնված իր զավակներին ու նրանց սիրտը իբրև ուտելիք մատուցում ամուսնուն⁴³, ապա կրակի է մատնում այն տունը, որտեղ հարբած քնած էր Աթլին⁴⁴:

Ի դեպ, բերված օրինակները ցույց են տալիս, որ խնջույքի ու մահվան միասնականության մոտիվը, իր բազմազան տեսակներով իսկապես բնորոշ լինելով գերմանական միֆամտածողությանը՝ փոխանցվում է նաև գերմանական հետագա մշակույթին՝ իր բարձրակետին հասնելով Ռիխարդ Վագների «Նիբելունգի մատանին» քառերգության մեջ («Հռենուսի ոսկին», «Վալկիրիաներ», «Զիգֆրիդ», «Աստվածների անկումը»):

«Դիմակների փոփոխության» միևնույն սկզբունքը առկա է նաև հայկական «Սասնա ծռերում»: Բնորոշ օրինակները, որ այժի են ընկնում դրամատիկ ընթացքով ու լարվածությամբ, կապված են հատկապես երրորդ՝ «Սասունցի Դավիթ» ճյուղի, մասնավորապես «Դավթի և Մըսրա Մելիքի մենամարտը» և «Դավթի ամուսնությունը» հատվածների հետ: Իրեն մարտի կանչող Դավթին Մելիքը նախ հրավիրում է միասին ճաշե-

⁴³ Դրվագն ուղղակիորեն առնչվում է նախնական հանրություններում երեխաներին զոհաբերելու սովորույթին, որոնցից մեկի՝ Պելոպսի զոհաբերության մասին խոսվում է վերը:

⁴⁴ St u Старшая Эдда // Беовульф. Старшая Эдда. Песнь о нибелунгах, М., 1975, էջ 312-327:

լու վրանում, բայց ճաշի սեղանի մոտ նա փոս է փորել տալիս Դավթի համար, ուր և միամտաբար ընկնում է հերոսը: Խանդութի պալատ հասած Դավթին փահլևանները դավադրաբար հրավիրում են յոթ տարվա գինով խմելու Խանդութի կենացը: Նրանք ասելույթյամբ են լցված հերոսի հանդեպ, քանի որ Խանդութը հավանում է ոչ թե իրենց, որ «յոթ տարի» այստեղ սպասում են, այլ նորեկ Դավթին («Խանդութ խանում խնձոր էզար Դավթին»), ուստի որոշում են հարբեցնել նրան և սպանել: Դավթին էլ ուզում է ոչ թե սովորական, այլ մեծ թասով խմել, որ «իր սրտի թոզեր սրբվի»: Հենց տեսնում են, որ Դավթիքը հարբել է և գլուխը «կիջեցներ սրտին», փահլևան մրցակիցները հանում են սփռոցի տակ թաքրած սրերը և պատրաստվում հարվածելու: Հերոսին օգնության են հասնում նախ դոնապան Գորգիզը, որ ձայն է տալիս Դավթին ու արթնացնում, ապա ինքը՝ Խանդութը, որ վերևից կաղին է նետում ցած, հարվածում Դավթի առջև՝ սեղանին դրված սկուտեղին՝ զնգացնելով այն:

Դավթին էլ լուրջացավ, ծառային ասաց.

-Էլի՛, էսա սուփրեն վերո՛ւ,

Մեղք է էսա հացեր կոխեն:

Էլավ ձեռ էտու, սուփրեն տի վերուցեր,

Փահլևաններ ասին.- Սուփրեն թող կենա.

Գնացեք, հաց բերեք, մեկ էլ ուտենք:-

Էնպես կանեն, որ թրեր չ'երևան:-

Դավթի ասաց.- Սուփրեն վերուցե՛ք:

Ձեռ էտու, վերուց, ասաց.

-Սուփրեն կ'երթա էտն հացին,

Հաց չ'երթա էտն սուփրին:

Տեսավ ամեն փահլևանի առջև մեկ թուր տկլորած⁴⁵:

Բերված օրինակները, որոնք անշուշտ կարելի է շարունակել, թույլ են տալիս եզրահանգել. կերակուրը, մարդու հասարակական զարգացմանը զուգընթաց, աստիճանաբար վերածվում է կարևորագույն մշակութային կողմի՝ հիմք դառնալով հոգևոր և աշխարհիկ մի շարք կայուն արարողությունների (գոհաբերություններ, ճաշկերույթներ, խնջույքներ և այլն), խորհրդանիշների (Դագդայի կաթսան, ս. Գրաալի գավաթը, առատության եղջյուր, հաղորդություն, նշխարք և այլն) ձևավորմանը: Իբրև մոտիվ՝ խնջույքը իր բազմազան տիպերով (թե՛ իբրև տոնահանդես, թե՛ իբրև դավադրություն) լայն մեկնաբանություն է ստանում առասպելներում, բանահյուսական և գեղարվեստական երկերում: Վերջապես, խնջույքի թեման նպաստում է փիլիսոփայական-բարոյախոսական ինքնատիպ ժանրի ձևավորմանը (Պլատոն, Քսենոփոն, Արիստոտել, Պլուտարքոս, Դանտե և ուրիշներ):

⁴⁵ Սասունցի Դավթի, Եր., 1981, էջ 262-264:

АРА АРАКЕЛЯН – Пир как праздник и как заговор. – В статье комментируются проблемы, связанные с семантикой еды, видимые в мифологии, фольклоре и истории. Во-первых, подчеркивается то обстоятельство, что пища является биологическим условием жизни человека, однако наряду с историей, помимо биологического значения, она постепенно приобретает социальное и духовное значение, непосредственно являясь основой для создания ритуальной цепи, тянущейся от жертвоприношения к причастию. Хотя человек - homo sapiens - радикально отличается от животных, процесс поедания их несколько сближает. В этом плане боги тоже не отличаются от людей. Особое внимание уделяется жертвоприношению, которое с древних времен служит установлению и укреплению связи между богами и людьми. Наряду с духовной, ритуальной трапезой рассматривается также светская трапеза - пир. Он трактуется в двух смыслах: как праздник и как заговор. Если в ритуальных трапезах преимущественно важна связь с богом или богами (вертикальная связь), то светский пир в основном служит для укрепления связи между участниками (горизонтальная связь), так как совместный прием пищи содержит в себе колоссальную моральную и социальную силу. Не случайно, что Э. Канетти видит элементы власти в еде или процессе поедания. В связи с этим основное внимание уделяется пиру в значении заговора. Рассматриваются многочисленные примеры из мифологии, эпоса и истории.

Ключевые слова: еда, семантика еды, жертвоприношение, обряд, светский пир, пир как праздник, пир как заговор

ARA ARAKELYAN – Feast as a Holiday and as a Conspiracy. – The article has focused on the issues related to the semantics of food that are seen in mythology, folklore, and history. First, the fact that food is a biological condition of human life is emphasized, but along with history, it gradually acquires a social and spiritual meaning, directly serving as a basis for the creation of a ritual chain stretching from sacrifice to communion. Although the man, Homo sapiens, is radically different from animals, the process of eating puts them closer together. In that respect, gods are no different from humans either. Special attention is paid to sacrifice, which since ancient times has served to establish and strengthen the bond between gods and humans. Along with the spiritual, ritual meal, the secular meal - the feast, is also considered. It is interpreted in two ways: as a celebration and as a conspiracy. If the connection with a god or gods (vertical connection) is especially important in ritual meals, the secular feast is mainly emphasized by strengthening the connection between the participants (horizontal connection), because eating together contains enormous moral and social power. It is not by chance that E. Canetti sees elements of power in the function of food or eating. In this regard, the main focus is on the party as a conspiracy. Many examples from mythology, epic and history have been considered.

Key words: meal, semantics of meal, sacrifice, rite, secular feasts, feasts as a celebration, feast as a conspiracy

**ՀԱԿՈՒՑ ՕՇԱԿԱՆԻ «ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԸ»
ՀՈԴՎԱԾԸ 100-ԱՄՅԱ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ**

ԵՎԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Հոդվածում ներկայացվում են Հակոբ Օշականի՝ 1923 թ. Բոստոնի «Հայրենիք» ամսագրի օգոստոսյան համարում տպագրված «Յովհ. Թումանյանն էլ իր գործը» ստվարածավալ հոդվածի հիմնական դրույթները, որոնք հեղինակի՝ Թումանյանի արվեստի մասին ձևավորված գեղագիտական ու փիլիսոփայական հայացքների հանրագումարն են: Թումանյանի ստեղծագործություններին արևմտահայ ճանաչված գրող, քննադատ ու գրականության տեսաբան Հակոբ Օշականը ծանոթ էր վաղուց և տարիներ առաջ աղիթներ ունեցել էր անդրադառնալու դրանց՝ արտահայտելով հակասական կարծիքներ՝ անվերապահ մերժումից մինչև բացառիկ բարձր արժևորում: Արևմտահայ քննադատի իրարամերժ տեսակետներն արևելահայ գրական-մշակութային ընթացքի վերաբերյալ ունեին հիմնավոր պատճառներ՝ անձնական խառնվածք, աշխարհայեցություն, վերլուծության մեթոդաբանություն և այլն:

Ուսումնասիրվող հոդվածում Օշականը Թումանյանի գեղարվեստի քննաբանությունը կատարում է թեմատիկ և ըստ գեղագիտական առաջադրույթի առանձնացված տրոհումներով՝ «Քնարերգակը», «Դիցագներգակը», «Տաղաչափը», «Հէքեաթագիրը», «Humeur»: Մեր խնդիրն է Թումանյանի ստեղծագործական անհատականության այսօրինակ տրոհման համատեքստում բացահայտել քննադատի գնահատման գեղագիտական չափանիշները՝ մատնանշելով թե՛ արժեքավոր դիտարկումները, թե՛ անընդունելի ձևակերպումները: Խնդիրն ուսումնասիրելիս կիրառել ենք պատմահամեմատական, համադրական, մեկնաբանական մեթոդները:

Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները՝ հանգել ենք եզրակացության, որ ոչ միայն այս հոդվածում, որ կառուցված է Թումանյանի գեղարվեստական մեթոդի և Օշականի քննադատական մեթոդի տիպաբանական տարբերությունների վրա, այլև Թումանյանի ստեղծագործության քննությանն առնչվող մյուս հոդվածներում մեծ քննադատը մեծ բանաստեղծին տեսել է հեռվից ու բացառիկ հետաքրքիր դիտարկումներ արել նրա աշխարհայացքի, գեղարվեստական մտածողության համակարգի վերաբերյալ:

Բանալի բառեր – Հ. Թումանյան, Հ. Օշական, «տպավորապաշտ» քննադատ, գեղագիտական տարբեր համակարգեր, էպիկական գույն, դյուցազներգակ, հոգեբանություն, հեքիաթագիր, տիպաբանություն, մեթոդ

Նախաբան

Հայ երկու մեծերի՝ արևմտահայ գրող, քննադատ Հակոբ Օշականի և ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի պատմական հանդիպումը տեղի է ունեցել 1921 թ. նոյեմբերի վերջին Պոլսում¹: Թումանյանի ստեղծագործություններին Օշականը ծանոթ էր վաղուց և տարիներ առաջ առիթներ ունեցել էր անդրադառնալու² դրանց՝ արտահայտելով հակասական վերաբերմունք անվերապահ մերժումից մինչև բացառիկ բարձր գնահատանք: Անշուշտ, արևմտահայ քննադատի իրարամերժ տեսակետներն արևելահայ գրականության ընթացքի, մշակութային ստեղծումների գեղագիտական ու աշխարհայացքային տարբերությունների վերաբերյալ ունեին համակարգային պատճառներ:

Հայության երկու հատվածներում պատմականորեն ձևավորված հոգևոր-մշակութային արժեհամակարգերի տարբերությունները, մտածական համակարգի տարամիտությունները, ազգային ոգու, կեցույթյան կայունության ու պատմական գոյության հիմունքը օբյեկտիվորեն բեկել էին հայության երկու հատվածների քաղաքակրթական ժամանակը՝ 20-րդ դարասկզբին սրվելով փոխադարձ անհանդուրժողականության աստիճան: Արևելահայերի համար գրականության առաջնային գործառույթը ներփակվում էր ազգային կյանքի կարևոր հարցադրումների շրջանակում՝ ինչ-որ առումով երկրորդական դարձնելով գեղարվեստի ու էսթետիզմի պահանջները: Արևմտահայերը, ընդհակառակը, եվրոպական, մասնավորապես ֆրանսիական գրականության

¹ Հովհ. Թումանյանը 1921 թ. նոյեմբեր-դեկտեմբերին ՇՕԿ-ի գործերով գտնվում էր Պոլսում: Նոյեմբերի 27-ից Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթում սկսում է տպագրվել Հակոբ Օշականի «Յովհաննես Թումանյան» ծավալուն հոդվածը, որ բանաստեղծի ստեղծագործության ամբողջական ուսումնասիրության առաջին փորձն էր արևմտահայ քննադատության մեջ: Աշխատանքի հիմնական դրույթները ներկայացնում է դերասան Գ. Կավարենցը նույն օրը «Նավասարդ միության» ի պատիվ Թումանյանի կազմակերպած գրական հավաքույթում: Այդ մասին իր հուշերում ուշագրավ տեղեկություն է տալիս Մ. Ջանանը. «Բայց միթե նպատակավոր չէր, և անփափկանկատորեն նպատակավոր, այդ օրերին Օշականին հրավիրել դասախոսություն կարդալ Թումանյանի մասին:

Թումանյանը ներկա եղավ այդ պոլսական դասախոսությանը, ինչպես Սոկրատը ներկա էր լինում Արիստոֆանի «Ամպերի» ներկայացմանը:

Երկա ր լռեց Թումանյանը, դասախոսության վերջին միայն իմաստուն ժպիտը դեմքին, երկու խոսք սասց.

-Գիտե՞ք ինչ... առաջին անգամն եմ գալիս Պոլիս... ես չէի ճանաչում Պոլիսը... բայց եկա տեսա, որ Պոլիսն էլ ինձ չի ճանաչում» («Թումանյանը ժամանակակիցների հուշերում», հտ. 2 (լրամշակված հրատարակություն), Եր., 2020, էջ 430):

² Տե՛ս **Ցակոբ Օշական**, Ռուսահայ գրականություն. քննադատությունը անոնց մեջ, Գ., «Գարուն» ավանախ (Մոսկուա, 1912): **Նույնի**՝ «Հայ գրականություն», №№ 4, 1/14 նոյեմբեր, 5, 1/14 դեկտեմբեր, Զմիռնիա, տպագրություն Քեշիշեան, 1912, էջ 16-23, 7-11: **Նույնի**՝ Յովհ. Թումանյան, «Ճակատամարտ», №№ 923, 925, 926, 927, Կ.Պոլիս, 1921: **Նույնի**՝ Հայ գրականություն. հանդեսներ (Արեգ եւ Նաւասարդ), «Բարձրավանք», Դ., Կ.Պոլիս, 1922, էջ 129-132: **Նույնի**՝ Յովհ. Թումանյան. Նիշեր, «Ճակատամարտ», № 3179, Կ.Պոլիս, 1923:

ազդեցությամբ փորձում էին կատարելության հասցնել գրական երկերի գեղագիտական բաղադրիչը: Առհասարակ, հայության երկու հատվածների մշակութային շփումները սահմանափակ էին և միակողմանի: Հակասությունը առավել խորանում է հեթանոսական շարժման շրջանում, երբ արևելահայ քննադատությունը բացահայտ ժխտողական վերաբերմունք է դրսևորում «հեթանոսականության» պոետիկայի, գեղագիտության նկատմամբ: Վ. Տերյանն անգամ բարձրաձայնում է, թե «Թումանյանի մի «Փարվանան» ես չեմ փոխի պոլսահայ բոլոր հանկարծակի հեթանոսացած պոետների արտադրությանց հետ»³:

Հարցի գիտական դրվածքը Օշական-Թումանյան հակադրության վերաբերյալ ենթադրում է հայացքների համակարգի հետևողական քննություն, որը, անշուշտ, ավելին է, քան փորձը տարբերությունները բացատրելու միայն արևելահայ-արևմտահայ գրական դպրոցների գեղագիտական բաժանարարների համատեքստում: Գուցե ավելի ստույգ լինի հարցադրումը, եթե իբրև քննության ելակետ նկատի ունենանք Օշական քննադատի խառնվածքը և քննադատական մեթոդը, որոնց վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրություն է կատարել Ս. Սարինյանը՝ հիմնվելով նրա «Վկայություն» ինքնազննական աշխատության վրա: Քննադատի դիտարկումների իրական բովանդակությունն ու իմաստը ճիշտ հասկանալու համար գրականագետ-տեսաբանն առաջարկում է շրջանցել նրա մտածողությունը պայմանավորող երկու հոսքերը՝ արևելահայ գրական մշակույթի միտումնավոր բնութագրումներն ու գրողների մասին ծայրահեղ գնահատականները, և փորձել հայտնաբերել նրա՝ որպես գրականության պատմաբանի ու քննադատի վերլուծական մեթոդը, «այն մոդելը, որով նա ընկալում է աշխարհը, բացահայտում հոգևոր ստեղծումների արժեքայնությունը»⁴:

Արձանագրելով փաստը, որ Հ. Օշականը թեականորեն է նայում իր քառասնամյա քննադատական վաստակին՝ ուսումնասիրողն այս տարօրինակ խոստովանության մեջ գտնում է նրա քննադատական մեթոդի բանալին: «Քննադատը այն մարդն է,- բերում է Ս. Սարինյանը նրա բացատրությունը,- որ «ասյրումները պիտի վերածե տարազներու, կաղապարներու,- ԳԻՏՈՒԹՅԱՆ: Արուեստագետը ա՛ն՝ որ տարազները, կաղապարները պիտի վերածե ԿԵԱՆՔԻ: Օշական կարհամարիէ առաջինը, քանի որ կաղապարներ կազմելու համար մեր միտքը բաւ է մեզի...»⁵: Այլ խոսքով՝ ամեն ընթերցող ենթակայական ընկալում ունի աշխարհի և գրականության հանդեպ այնպես, ինչպես անձնակենտրոն ընթերցող ու մեկնաբան է քննադատը: Օշականը համոզված է, որ եթե գրող արվեստագետը «զգայնութեան ու թեքնիքի գումար մըն» է, ապա նրան ճանաչելու կերպը նույնպես զգայնությունների հոսք է, որ դառ-

³ Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հտ. 3, Եր., 1975, էջ 93:

⁴ Ս. Սարինյան, Հայոց գրականության երկու դարը, գիրք երրորդ, Եր., 2002, էջ 530:

⁵ Յ. Օշական, Համապատկեր Արեւմտահայ գրականութեան, հ. 10, Անթիլիաս, 1982, էջ 307:

նում է սահմանը գրական երկի ճանաչումի ու գնահատության: Իբրև գրականության մարդ՝ Օշականը հիմնվում է զգայությունների ու գիտակցական հոսքի անընդհատ շարժման տպավորությունների վրա, որոնք կարող են հետագայում որոշակի փոփոխությունների ենթարկվել՝ պայմանավորված ընթերցողի անմիջական ապրումներով, զգայունությամբ և աշխարհատեսությամբ: «Գրականություն մը միշտ կեանքեն աւելի ըլլալով է պայմանաւոր,- բացատրում է Օշականը,- արեւելահայերը մոռցած են դերը զգայարանական թեքնիքին, իրենց բոլոր ուշադրութիւնը յատկացնելով ընկերային տագնապներու»⁶: Այդ է պատճառը, որ արեւելահայ գրականության մեջ հայ կյանքը կա, բայց ավելին չկա, իսկ գրականությունը հենց այդ ավելին է: «Ուրեմն միանգամայն ակնհայտ է Օշականի զգայական-տպավորապաշտական հակումը,- բացատրում է Սարինյանը,- հակում, որը, սակայն, միտված չէ «իմպրեսիոնիզմը հռչակելու հետագոտության միակ նախաստեղծ մեթոդ»⁷: Օշականի մեթոդը միագիծ չէ, նրա քննադատության մեջ համադրվում են իմպրեսիոնիստական, էսթետիկական, ազգաբանական և այլ մեթոդներ, որոնք ներհյուսվում են «արժեքաբանական-մշակութաբանական ընդհանուր համակարգի մեջ»⁸, ու նրա՝ գրական երկերի գնահատման չափանիշների հակասականությունը կարելի է բացատրել միայն արժեքաբանական (աքսիոլոգիական) մեթոդի տեսանկյունից, այսինքն՝ գրական երևույթները մեկնաբանել ու արժևորել էությունների գուտ էսթետիկական արժեքայնության մակարդակում: Իսկ դա հաճախ փոփոխական է, ինչպես երևում է Թումանյանի⁹ ստեղծագործությունը գնահատելիս՝ կախված ժամանակի ընթացքում «տպավորապաշտ» քննադատի գեղագիտական արժեհամակարգի փոփոխություններից:

«Յովհ. Թումանեան. Նիշեր» հոդվածն իբրև բանաստեղծի մահվան առաջին արձագանք

Հովհաննես Թումանյանի մահից հետո 1923 թվականը դառնում է Թումանյանի գրական ժառանգության յուրօրինակ վերագնահատության, հայ գրականության մեջ նրա բացառիկ տեղի ճշգրտման, հուշերի ու որոշակի սկզբունքային հարցերի հստակեցման յուրօրինակ շրջան: Մինչև տարեվերջ տեղական և արտասահմանյան մամուլը ողողված է մնում բանաստեղծի մասին հրապարակումներով:

Մեծ լռեցու մահվան անմիջական արձագանքներից է Հակոբ Օ-

⁶ Նույն տեղում, էջ 296:

⁷ Ս. Սարինյան, նշվ. աշխ., էջ 532:

⁸ Նույն տեղում, էջ 533:

⁹ Ֆրանսահայ արձակագիր Վ. Շուշանյանը, որ բարձր էր գնահատում Օշականին, գրում է. «Օշական մեզի՝ երիտասարդներուս տրվեցուց կշռել մարդիկը մեր ափերուն մէջ: Սորվեցուց կշռել կ'ըսեմ, որովհետեւ չենք ընդունիր յաճախ իր բերած կշիռը: Օրինակ կ, Թումանեանի տուած իր ծանրութիւնը թեթեւ կը գտնենք: Իսկ Չարենցիքը ծանր» (քաղվածքը բերված է Ս. Դանիելեանի «Արեւմտահայ գրականություն. Տիտանի կ թէ՛ շարունակականություն» գրքից, Եր., 2014, էջ 273):

շականի «Յովհ. Թումանյան. Նիշեր» հոդվածը, որտեղ «թերևս մահվան միատիկ ազդեցության տակ», ինչպես նկատում է Շ. Քալանթարյանը, Օշականը տրամագծորեն հակառակ տեսակետն է հայտնում այն դատողությունների, որոնք ելակետային էին 1921 թ. Պոլսում հնչեցրած բանախոսության¹⁰ մեջ: Օշականի հոդվածը գրված է այն բարձր ու ակնածալի գիտակցությամբ, թե Թումանյանի «մահովը կ'անհետանայ հայ գրականութեան ամենէն ազնուական համեստ ու արժանաւոր մշակներէն մէկը»¹¹: Պատշաճորեն խոնարհվելով օրվա խորհրդին՝ քննադատն այս դեպքում համակարգում է Թումանյանի ստեղծագործության այն հիմնարար արժեքները, որոնք գրականության պատմության մեջ մնալուն տեղ են ապահովում բանաստեղծի համար: Հոդվածի «նիշեր» բնորոշումը անտեղի չէ. գործ ունենք հեղինակային նշումների հետ հայեցողական դիտարկումներ՝ գրեթե առանց վերլուծական մեկնաբանությունների: Ահա առաջինն ու թերևս ամենակարևորը այդ նշումներից. «Ինչ որ Պոլիսը անկարող եղաւ ի գլուխ հանելու, ազգային արուեստ մը ոտքի հանելու իր ճիգին մէջ, ինչ որ համալսարանական սերունդ մը հոն փորձեց, առանց պսակումի քաղցրութիւնը վայելելու, Թումանյան մինակը յաջողեցաւ գործադրել»¹²: Թումանյանի ստեղծագործության խորապես ազգային բնույթի մասին ուղղակիորեն կամ անուղղակի Օշականն ակնարկում է իր բոլոր հոդվածներում՝ անկախ այլ հարցերում իր քննադատական վերապահումներից: Մա նշանակում է, որ Թումանյանի գեղարվեստական աշխարհի առարկայական մասնավորությունը իմաստավորվում է ազգային-բարոյական արժեքների վերին բացարձակության մեջ:

Վերահաստատելով իր հայտնի տեսակետը, թե «փոքր է ուժը իր քնարերգութեան»՝ քննադատն այս անգամ ուշադրության արժանի հատկանիշներ է տեսնում բանաստեղծի նաև այս ժանրի երգերում՝ «զմայլելի բնութենէ մը», «գերազանցապէս նկարչագեղ աշխարհէ մը» ելող «զուսպ, շրջագիծին մէջ ամփոփ, գոյնին մէջ արու իր պատկերները»: «Իր քնարերգութեանը մէջ ան զգուշացած է շեղումէ, թատերականութենէ,- նկատում է Օշականը:- Ամչկոտ ինչպես աղջիկները իր լեռներուն, անիկա ծածկած է իր սրտի խորանը ու խնայած աղաղակող sentimentalismerը մեզի: Ու չէ նախանձած իրմէ ետքը դիրքին փառքին ու դիրքին ճիշերուն ու նոյնիսկ անոնց «հոնքուր հոնքուր» արցունքներուն»¹³: Թումանյանի պոեմների, բալլադների, հեքիաթների վերաբերյալ նպաստավոր կարծիքները քննադատը վերահաստատում է այստեղ:

¹⁰ Տե՛ս Շ. Քալանթարյան, Հակոբ Օշականը Հովհ. Թումանյանի մասին, «Գրական թերթ», № 10, Եր., 2019, Ե. Մնացականյան, Հ. Թումանյանի ուղևորությունը Պոլիս. մտավորականության արձագանքը // Գրականագիտական հանդես, ԻԴ, 2022-1, Եր., 2022, էջ 208-230:

¹¹ «Ճակատամարտ», № 3179 (ապրիլի 15), Կ.Պոլիս, 1923:

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում:

«Յովհաննէս Թումանեան եւ իր գործը» հոդվածի հիմնական դրույթները

Թումանյանի հետմահու գնահատման փորձերից է Հ. Օշականի «Յովհաննէս Թումանեան եւ իր գործը» ստվարածավալ հոդվածը, որը տպագրվում է 1923 թ. Բոստոնի «Հայրենիք» ամսագրի օգոստոսյան համարում: Հոդվածը համարելով Օշականի ամփոփիչ խոսք՝ նկատենք, որ չնայած որոշակի սուր բնութագրումներին, ինչպես նախորդ հոդվածներում, այստեղ ևս նա հետամուտ է հետևողականորեն ձևավորված այն համակարգին, որ ստեղծել էր Թումանյանի գրականության վերաբերյալ:

Առաջին իսկ տողերից ակներև է, որ Օշականը մյուս քննադատներից զատվելու ձգտում ունի և ցանկանում է վերանայել Թումանյանին տրված գնահատականները՝ դրանք համարելով չափազանցություն: «Ու անկիւնէ մը թող ներուի ինծի քանի մը խօսք, անկախ ու անվերապահ, փառաբանութեան ու քայքայումի երգերուն քովէն, իրական յարգանքի հարկ մը մեռնողին հանդէպ, որ **իր կերպովը** մեծ արուեստագէտ մը եղաւ եւ զոր անիրական փառքին կանչեցին դիրահաւան ու քիչ մըն ալ սովորամոլ բերաններ»¹⁴, - ընթերցողին հոգեբանորեն նախապատրաստում է Օշականը: Դարձյալ ասպարեզ են բերվում գիտական մեթոդաբանության հիմունքները, որ տարբեր էին արևելահայ-արևմտահայ իմացաբանության համակարգում: Թումանյանի գեղարվեստական մեթոդաբանությունը, որ հեռու էր տարերայնությունից և կառուցված էր որոշակի աշխարհաճանաչողական ու փիլիսոփայական սկզբունքների վրա, Օշականը փորձում էր տեղադրել այն սահմաններում, որտեղ կողմնորոշիչ էին արևելահայ-արևմտահայ գրականության ընկալման ու արժևորման հակադիր սկզբունքները. «Բաւական է միայն, անոնց մեծագոյն բանաստեղծին ուսումնասիրութեանը մուտքին, յիշել թէ երկու հաստվածներուն մէջ արուեստի ըմբռնումը կը տարբերի մէկ քանի սեռերու ու մասնատրաբար բանաստեղծութեան համար» (էջ 40): Օշականն իր ընտրած «կանգուններով» այնուամենայնիվ փնտրում է այն միջուկը, որտեղ պարփակված է խորհուրդը Թումանյանի մեծության:

Մինչ բուն նյութի քննությանն անցնելը Օշականը շատ սեղմ մատնանշում է այն նորն ու արժեքավորը, որ կապվում է Թումանյանի անվան հետ: Արևելահայ գրականության մեջ քնարական կամ անձնական բանաստեղծության հիմնադիր է համարում նրան, նաև դյուցազնավեպի, իսկ մանկագրության ասպարեզում՝ ուղղակի անփոխարինելի: «Ու քնարերգակ, ու դիւցազներգակ ու դասական այս քերթողին հետ արդար կարենալ ըլլալու համար,- բացատրում է Օշականը,- հարկ է անջատել մասերը ու իւրաքանչիւրին մօտենալ մասնաւոր տրամադրութեամբ» (էջ 41):

¹⁴ «Հայրենիք», № 10, Բոստոն, 1923, էջ 40: Այստեղ և այսուհետ հոդվածից կատարված բոլոր մեջբերումները այս ամսագրից են: Փակագծում կնշվի էջը:

Գրականության տեսաբանը Թումանյանի գրականության ազգային ու պատմամշակութային մեծության գնահատությունը կատարում է թեմատիկ տրոհումներով՝ «Քնարերգակը», «Դիցագներգակը», «Տաղաչափը», «Հեքեթագիրը», «Humeur»: Ստեղծագործությունների այսօրինակ տարանջատումն արդեն ենթադրում է, որ Օշականի քննությունը լինելու է խիստ, մանրակրկիտ, վերապահումներով:

Հոդվածի ելակետային առաջին միտքը հաստատում է Օշականի նախապաշարված մոտեցման հնարավորությունը. «Թումանեանի քնարերգական հատուածները քիչ են թիւով, բարեբախտաբար»: Տպավորությունների սևեռումներից մինչև քառյակների իմաստային բանաձևումները քննադատը համարում է զգայությունների գուր վատնում. դրանք չունեն «ոչ մէկ մասնաւոր գեղեցկութիւն... Պղտոր, քիչ մը ընդհանուր գունաւորում մը այդ քերթուածներուն կը ճարէ տեսակ մը խորք, որմէ սրբուած ըլլան գիծերուն շեշտը, կարկառներուն զարտուղի հմայքը եւ խորութեանց ու բարձունքներու առինքնումը» (էջ 42):

Օշականը քնարերգության մեջ չի տեսնում բանաստեղծի սիրտը, մտքերի ու զգայությունների թռիչքը: «Քնարական քերթուածներէն մինչեւ քառեակները իր մտածող մարդու բոլոր փորձերը մեզ չեն խանդավառեր,- շարունակում է քննադատը:- Ու մեր վերապահումը դիւրին կ'արդարանայ: Յովհաննէս Թումանեան երազին բանաստեղծը չէ» (էջ 42): Գույների զգացողությունն ու երևակայությունն են պակասում Թումանյանին, մի պակասություն, որ, ըստ Օշականի, հատուկ է արևելահայ գրականությանն առհասարակ: «Թումանեանի պատկերները գծագրութիւններ են... Հաստատուն, որոշ, սովորական գիծեր, սեւ մատիտին փոշիովը, ունենալով գծագիտական կարեւոր տարրեր, բայց անդին չանցնելով. բայց մասնաւանդ մերժելով անտիպը, դժուարագիտը, յանդուգնը ու զարտուղին» (էջ 42): Օշականը փնտրում է կաղապարներից գերծ, անձնականացված երանգներով ու հույզերով հագեցած, հանդուգն ու նոր զգացումներով հատկանշվող քերթվածքներ: «Գոյնի այս սակաւութիւնը դժբախտութիւն մը կը դառնայ ի վերջոյ, երբ բանաստեղծը կ'մախքներ եւ ուրուանկարներ գծելէ ետքը, անկարող կ'ըլլայ զանոնք լեցնելու միտով, մտածումով կամ յուզումով» (էջ 43): Արևմտահայ քննադատը թումանյանական պատկերների մոտենում է բոլորովին այլ չափանիշով, ակնկալում արևմտահայ բանաստեղծությանը հատուկ հույզերի անմիջականություն, խաղացկուն տողեր, զգացումներն իբրև գույն տեսնելու և վերստեղծելու կարողություն: Ակնհայտ է իրողությունը, որ գործ ունենք իրականության գեղագիտական ընկալման, գրականության հատկանիշների տարբեր համակարգերի հետ:

«Ընկերաբանական» տեսակետից արժեքավոր է համարում «Գութանի երգը», որ կառուցված է «մասնաւոր գոյներու եւ անջատ դրուագներու հէնքին վրայ»: Ենթադրելի է, որ քննադատը բոլոր զգայարաննե-

րով ընկալում է բանաստեղծության յուրաքանչյուր տողը, հայ գյուղացու երբեմն լուռ, երբեմն խոսուն տառապանքը, ճակատագրի հալածանքները, որոնք դառնում են խորքային, թանձր շտրիխներ գյուղացու ներաշխարհը բացահայտելու համար: Էպիկական գույների այլ խտացում է համարում «Հին օրհնությունը», որտեղ, ըստ Օշականի, բանաստեղծը գեղագրում է «անհունապէս հայ ու ճիշդ տարագ մը օրհնութեան...»: Քննադատի խոսուն բնութագիրը կարծես ամփոփում է ավանդական գյուղաշխարհի պապերի ու նրանց թոռների հաղորդակցության պատումը, գոյության բանահյուսությունը, որի տրամաբանական հանգուցալուծումը սերնդից սերունդ փոխանցվող, տոհմիկ կապը պահող օրհնությունն է:

Արևմտահայ գրագետի մեկնաբանության տիրույթում հայտնված քառյակներն ընդհանուր առմամբ չեն բավարարում խստապահանջ քննադատի պահանջները. «Փնտոտուքը պիտի կրնար մեզի ցոյց տալ տակաւին քանի մը քերթուած քառեակներ, որոնք հակառակ իրենց ձեւին անփութութեանը, եթէ ոչ ինքնատիպ, գոնէ ամբողջովին **հայեցի** յուզումներ պիտի բանային մենէ ներս» (էջ 43): Խոստովանությունը հուշում է՝ քառյակներն ըստ էության չեն դարձել Օշականի լուրջ ուսումնասիրության առարկա, այլապես զգայությունների արտացոլմանն ու հոգեբանական ներթափանց անդրադարձումներին մշտապես սևեռված քննադատը որոշակի դատողություններ կամ գոնէ դիտողություններ կաներ: Գուցէ «անփութ» վերաբերմունքն էր պատճառը, որ քննադատը նույն հոդվածի մեջ հիշում է. «Չեմ գիտեր ինչու նոյն ճվումով կը յիշեմ հիմա զգացում մը, որ անցեալ տարի արթնցաւ իմ մէջ, երբ Պոլիս բանաստեղծին հետ քառեակներուն վրայ կը խօսէինք: Անիկա հաւատք ուներ անոնց արժէքին» (էջ 42):

Օշականը չէր կիսում այդ հավատքը: Քառյակների վերաբերյալ նրա մտքերն ընդամենը արձանագրում են տեսական որոշ դրույթներ: «Երագի, ներքին ապրումի, արեւելեան միսթիսիզմի ու ինքնասոյզ մտածումի ընդունակ միտքն էր, որ բախտը պիտի ունենար հանդիպելու անտիպ իմաստութեան գոհարներուն,- գրում է քննադատը, ապա փորձում մեկնաբանել իր դիրքորոշումը:- Յովհաննէս Թումանեանի ամբողջ կարողութիւնը շարժումի իր դիրքութեան մէջն է սակայն: Այսինքն՝ անիկա մարդերէն կը տեսնայ անոնց ձեւերուն **վազքը** միայն: Անիկա մարդերուն կը հետեւի շատ հեռուէն, ինչ որ կ'ամբարէ անոնցմէ իբր տպաւորութիւն, շարժումի այդ թրթռումն է միայն: Բայց մտածումը ձեւին շեղումն է դուրսին համար ու անոր բռնկումը՝ ներսին համար: Ան որ երկու մարդերուն ալ կը հասնի, անիկա է մտածող բանաստեղծը» (էջ 56): Կեցության փիլիսոփայական և աշխարհայացքային հասկացությունների տարբերություններն են թերևս առիթ, որ բանաստեղծի հոգու կենսագրության հզոր շտրիխները քննության չեն ենթարկվում, որևէ քառյակի վերլուծության, քնարական հերոսի հոգեբանա-

կան տարատեսակ ոգորումների բացահայտման, մարդու և տիեզերքի անիմանալի աղերսների ուսումնասիրման որևէ փորձ չի արվում:

Այս դիտարկումը թերևս նախորոշում է և քնարերգության գնահատման հակասությունը, որովհետև, ինչպես ճիշտ նկատել են ուսումնասիրողները, այն առավելապես բխում է երկու մեծերի գեղագիտական համակարգերի տարբերություններից: «Թումանյանը գերազանցապես էպիկ (վիպերգու) բանաստեղծ է,- գրում է Ժենյա Քալանթարյանը,- և քնարերգության մասնավոր կամ թվացյալ տկարությունը արդյունք է այդ սեռի և պոեմների ու բալլադների համեմատության: Հավանաբար Թումանյանի քնարերգությունն այլ կերպ կգնահատվեր, եթե նա գրած չլիներ այլ ժանրի ու շատ ավելի ուժեղ գործեր: Չմոռանանք նաև, որ վիպական բանաստեղծության մեջ զգացմունքներն ու հոգեբանությունը արտածվում են պոեմից ու գործողությունից»¹⁵: Այնուամենայնիվ, Օշականի Թումանյանի մասին բոլոր հոդվածների համեմատությունը ցույց է տալիս, որ նրա տեսակետը քնարերգության վերաբերյալ ժամանակ առ ժամանակ փոփոխվել է. բայց նրա բոլոր դիտարկումների մեջ աներկբայելի է հստակ ձևակերպված մի ակնածանք, տաղանդի բարձր մի բնորոշում, որ Օշականի պարագայում շատ քչերին էր վերապահվում: Կարծում ենք՝ այստեղ դեր ունի նրա գեղագետ գրող, նաև տպավորապաշտ լինելու հանգամանքը:

Հոդվածի «Դիցազներգակը» մասը Օշականն սկսում է արևելահայ ու արևմտահայ գրականության մեջ պոեմի ժանրային պոետիկայի վերաբերյալ դիտարկումներից, ապա հանձնառում քննաբանել բանաստեղծի «համբավն» ապահովող դյուցազնավեպերը՝ պոեմները, որոնք, ըստ իր դիտարկման, «տարապայման արագութեամբ կը հիննան երբ արուեստի հնիւնքներով ու դասակարգի մը գոհացման համար գրուած են»¹⁶, այսինքն՝ հնի կրկնություն են կամ գրված են օրվա անցողիկ զգայություններով: Այս կանխադրույթով էլ պայմանավորված՝ առաջին շրջանի պոեմները՝ «Հին կոիվը», «Հառաչանքը», «Պոետն ու Մուսան», անգամ «Թմկաբերդի առումը», դուրս են մնում քննադատի տեսադաշտից: Փոխարենը ինչ-ինչ վերապահումներով անդրադառնում է «Անուշ» և «Դեպի Անհունը» պոեմներին, առավել հանգամանորեն քննում «Մասունցի Դավիթը»՝ առաջադրելով չորս հիմնադրույթ՝ «Ա. Շրջանակը, Բ. Տիպարները, Գ. Գործողութիւնը, Դ. Կառուցումը»:

Շրջանակը, ըստ Օշականի, թերի է. չկան տեղագրություն, միջավայր, բացակայում են արտաքին աշխարհի գեղեցկություններ, որոնց հարազատ զավակներն են հերոսները: «Ու տիպարներուն ամբողջական ըմբռնումը անկարելի է առանց անոնց կոխտած գետինին» (էջ 46): Ենթադրվում է՝ տիպարները ևս չեն բավարարելու քննադատին: «Առիւծ Մհերը Թումանեանի գրչին տակ վերածուած է չոր, թզուկ մար-

¹⁵ Ժ. Քալանթարյան, նշվ. հոդվածը:

¹⁶ «Ճակատամարտ», № 925, Կ.Պոլիս, 1921:

դու մը» (ն.տ.),- գրում է Օշականը՝ նախընտրելով հերոսին տեսնել այլ լույսի ներքո, հայ իշխանի իմաստուն վարքագծով ու հոգեկերտվածքով, մարդկային ներաշխարհի ու բնավորության սուր բեկումներով: Այնինչ Թումանյանը «աճապարած է հողը դնելու» Մհերին և պատմության թատերաբեմ հանել սիրելի Սասունցի Դավթին, «որ բիրտ ուժին եւ անխելք բարութեան մարմնացումն է հեքեաթին մէջ»: Օշականը, շրջանցելով նախկին գնահատականը¹⁷, տարակուսանք հարուցող հարցադրում է անում. «...Դավիթը, չեմ գիտեր՝ ո՛ր դարու եւ ո՛ր ժողովուրդին աւանդութեանցը մէջ կարելի ըլլա զետեղել իբր ազգային հերոս» (էջ 47): Քննադատն անտեսում է այն հանգամանքը, որ Դավթին «ծուռ» ժողովուրդն է կերտել, նրա կերպարում խտացրել սեփական հոգեբանության տարերայնությունն ու անկանխակալ, անկեղծ մտածողությունը, իսկ Թումանյանը, հավատարիմ բանահյուսական աղբյուրներին, պոեմում հարազատորեն վերակերտել է ժողովրդի շունչն ու ոգին, «ցեղին հոգեկան աշխարհը»: Քննադատը չի մասնավորեցնում միտքը, թե պոեմում անհարազատ ինչ տարրեր կամ հակասություններ կան, մանավանդ եթե նկատի առնենք Թումանյանի՝ ստեղծագործական վիթխարի աշխատանքը ոչ միայն տարբեր աղբյուրներից անհրաժեշտ հատվածներ քաղելու, պատկերների, բառամթերքի ընտրություն կատարելու, այլև հենց դիպաշարային որոշ կտորներ կրճատելու, ազգային նկարագրին ոչ հարիր խորթ տարրեր օտարելու ուղղությամբ: Դավթին բնութագրելիս քննադատը սակավախոս է. կերպարին վերագրում է մարտական առաքինության մի գիծ՝ տարօրինակ մեկնաբանությամբ. «Ոչինչ կայ անոր մասին խօսելով, եթե նկատի չառնենք մարտական առաքինություն մը, որ թէև նուազկոտ, բայց ամենէն կարկառուն գիծն է դարձեալ հերոսին: Ես հեղինակին հաշույն կը նետեմ յետամնաց իմաստությունը, որով կռիւի դաշտէն կ'արձակէ թշնամի զինուորները, անոնց պետին գլուխովը միայն գոհացնելով յաղթական դիւցազնը» (էջ 47): Ուշագրավ է՝ շատ քննադատներ պոեմի հատկապես այդ «յետամնաց իմաստութեան» հանգուցալուծումը համարում են խոհեմության ու հումանիզմի ակնհայտ դրսևորում, որ հատուկ է առհասարակ հայ ժողովրդին:

Մյուս հերոսները, ըստ Օշականի, «արագ ուրուագրութիւններ» են, տարտամ ու դժգոյն, առանց ցեղային բնագոյների ու հոգեբանության խտացման: Ու քանի որ պոեմի հերոսները «խելք չունեն», որ մտածեն, և անընդունակ են ինքնավերլուծման, նրանց մնում է «քալել, վազել, ձի հեծնել կամ ծեծկուիլ»: Հերոսների այս գործողություններն անգամ, ըստ քննադատի, ենթակա են միայն արտաքին պայմանների ճնշմանը, ներքին շարժումը, միայնացից տրամաբանորեն ածանցվող պատահարները բացակայում են: Օշականը հավելում է. կա հերոսների հոգեբանության պակաս, ինչն էլ «քերթուածը կը գրկէ մեծ ցնցումներուն, եր-

¹⁷ Տե՛ս «Հայ գրականություն», № 4, 1/14, 1912, էջ 22:

կար լարումներուն առաձիգ ու ցառոտ յուզականութենէն» (էջ 48): Այս ամենի արդարացումը քննադատը տեսնում է դյուցազնավեպի ժողովրդական հյուսվածքի մէջ, որի կառուցվածքին Թումանյանը հետևել է «բավական խղճամիտ» և «շատ ալ պարկեշտ», ասել է թե՛ ստեղծագործական ինքնուրույնություն չի ցուցաբերել: Եզրակացությունը գրեթե նույնն է, ինչ պոլսյան բանախոսության մէջ. պոեմը ընդհանուր գրականության համատեքստում իր ժանրատեսակի այլ գործերի կողքին քննելի չէ, այն գնահատելի է «ինքն իր մէջ առնուած, անիկա հաճելի, արագ, ուստոստուն, մանկունակ արուեստին էջ մըն է, արժէքաւոր մանաւանդ անով, որ մեզի յատուկ գեղեցկութիւններ կը պարունակէ եթէ ոչ տիպարներուն ու շրջանակին, գոնէ գործողութեան ու գործադրութեան մէջ» (ն.տ.):

Օշականի գնահատականն անշուշտ վիճարկելի է: Թեև ինքը՝ Թումանյանը, պոեմը պատանիներին հասցեագրելով, ուրույն իմաստ է տվել «Մասունցի Դավթին»՝ նրա ենթատեքստային հղումներում հայտնաբերելով ազգային կեցության մի ուրույն փիլիսոփայություն ու անտրոհելի մի աշխարհայեցություն, բայց և մտադրություն է ունեցել ստեղծելու ազգային էպոսի կատարյալ և ամբողջական վերարտադրություն: Իսկ քննադատի պահանջները, մեղմ ասած, ոչ միայն Թումանյանի մտադրությի, այլև էպոսի ժանրային առանձնահատկությունների հետ քիչ են աղերսվում. էպոսները ստեղծվել են մարդկության պատմության ձևավորման վաղ շրջանում, երբ առաջնային ու կարևոր էին հերոսների ոչ թե հոգեկան հարստությունը, ներաշխարհի զարգացումները, այլ ֆիզիկական ուժը, մարմնի դյուցազնական չափերը, դրանցով պայմանավորված՝ գործողությունների աննախադեպությունը: Քննադատը բարձրացնում է հերոսների հոգեբանական ծավալումների խնդիրը, որը «գուցե 20-րդ դարի պահանջ էր, բայց ոչ դյուցազնական կերպարների բնութագրական հատկանիշ»¹⁸: Այսուհանդերձ, հաստատված ճշմարտություն է, որ պոեմի կերպարները իրենց արարքների հոգեբանական կրողներն են, ինչը նշանակում է՝ զուրկ չեն անհատական դիմագծությունից: Պարզապես, ինչպես նկատում է Ս. Դանիելյանը, Թումանյանին ու Օշականին «տրամագծօրէն առանձնացնում էր կերպարների եւ դէպքերի մեկնութեան տիպաբանական եղանակը»¹⁹:

Իրոք, տարբեր են երկու մեծերի՝ կերպարների ներկայացման մեթոդն ու տիպաբանությունը. քննության մեթոդաբանական ելակետի, պատմագեղագիտական բովանդակության տարբերությունների ակներև ապացույցն են Օշականի հաջորդ գնահատումները՝ տրված Թումանյանին՝ իբրև տաղաչափի, նրա գործերի ձևաբանական հատկա-

¹⁸ Ժ. Քալանթարյան, նշվ. հոդվածը:

¹⁹ Ս. Դանիելյան, Միջուկի տրոհումը. սփիւռքահայ գրականութեան պատմություն, գիրք 1, Ներածություն, Եր., 2011, էջ 64:

նիշներին, ապա՝ կերտած մյուս հերոսներին: «Տաղաչափուած մտածումներուն տափակութիւնը եւ տաղաչափուած պատմութիւններուն սովորականութիւնը արգելք չեն, որ արուեստագէտը երբեմն իյնայ ճիշդ ճամբուն վրա: Վասնզի մտածումը ներքին տոռամ մըն է ու մտաւոր գործողութիւն մը համակրելի՝ ամէն ատեն... Եթէ *Linnegh Uupoln* վրձինի հում փորձ մըն է միայն ու *Nołun ni Uniusan* սովորական սաթիք մը, *Անուշը* ողբերգութեան շատ մօտիկէն անցնող ու դէպի թատրոն տանող ճիգին անգիտակից արտայայտութիւնն է ապահովաբար» (էջ 50): Անգիտակից է, այլապէս, ըստ քննադատի, արևելահայերը այսօր կունենային ազգային դրամատուրգիա:

«Յովհաննէս Թումանեան մեր բանաստեղծներէն գրեթէ միակն է, որ ապացոյցը տուած ըլլայ այս ձեւ հասկցուած արուեստի մը» (ն.տ.),- շարունակում է Օշականը՝ խոսքին հաղորդելով ոչ անսպասելի քննադատական զարգացումներ. պոեմներում պատմողական տարրը «դանդաղ է յաճախ ու ռամիկ», գույները պակասում են, «հոգեբանութիւնը արհամարհուած է»: Սակայն, նշված թերություններին ի հակակշիռ, քննադատն առանձնացնում և բարձր է գնահատում Թումանյանի «գործողութեան զօրաւոր բնագոյր»: «Ու եթէ մեր աչքերը ու մանաւանդ մեր միտքը կը դատապարտուին խոշոր գրկանքի, միւս կողմէն բոլոր արագութիւններուն ու բոլոր վազբերուն ընկերացող յուզումը, թուղթերուն հետ ու անոնց վրայով, շուտ մը կ'ազատէ ինքզինքը, քաղցր կամ դժնդակ ալիքի մը պէս կը փոխանցէ մեզի ու մեր ներսէն ուրիշ, մասնաւոր կալուածներ երկար երկար կը դողան անոր բախումին ներքեւ» (ն.տ.):

Օշականը համակրելի է անվանում «Անուշը», որովհետև պոեմի հերոսները սովորական մարդիկ են՝ իրենց անհատական, «էական քանի մը գծերով», «մասնայատուկ նշաններով»: «Բայց այս մասնաւորումը շեշտ ու տեսական չէ», - շտապում է ավելացնել քննադատը՝ ընդգծելով, որ հեղինակը միշտ չէ, որ պատկերում է հերոսների հոգեբանական ներքին ուժն ու բարդ շրջանցումները: «Անոնք համակրելի են իրենց պարզութեան, միամտութեան, հարազատութեանը մէջ», - գրում է Օշականը և շարունակում միտքը հակասություն ծնող դատողությամբ, թե՛ ճիշտ է, որ հերոսները «ուղեղ չունին», բայց գործում են «հեռագրածօրէն»: Դարձյալ բախվում են բարքագրության, ստեղծագործական մտեցումների ու վերաբերմունքի, գեղագիտական պահանջների տարբերմունքները: Թումանյանը գլխավոր հերոսների հոգեբանությունը, արժեքային համակարգը քննում է նահապետական աշխարհում ամրագրված օրենքների տեսանկյունից: Թումանյանի պոեմներում կերտվում է մի հնամենի ու համապարփակ աշխարհ՝ հնի ու նորի ողբերգական բախումներով, սոցիալական ահռելի տեղաշարժերով, մարդկային ճակատագրերի սուր ու անկանխատեսելի բեկումներով: Նրանք այդ միջավայրի ծնունդն են, որոնք անսպասելի դիպվածի արդյունքում ար-

տաճվում են համայնքից և դուրս գալով ավանդույթի, նախապաշարումի հազարամյա սովորույթի դեմ՝ ներկայանում են որպես զգացմունքների ու բնավորության անհատական կրողներ: Նրանց հորդաբուխ սիրո զգայական շերտերը Թումանյանը վարագուրում է ավելի բարձր վերերկրային սիրո խորհրդավոր շղարշով՝ հավերժացնելով դրանք բնության փիլիսոփայության ծիրում: Օշականը նկատում է կերպարների «հոգեբանական բարեխառնութիւնը», նաև խոստովանում. «Երբեմն կիրքի մը փոթորիկը կը տարտղնէ անոնց հանդարտ յօրինուածքը ու գիծերու հրդեհի մը կը վերածէ զանոնք: Բայց այս պահը ցանցառ է սովորապէս: Կրակը կ'անցնի շուտ ու ձեւերը կը դառնան իրենց նախնական հիւսուածքին» (էջ 51): Ուրեմն կան այդ հույզերը, սիրո և կրքի դրսևորումները, բայց կա նաև դրանց ֆիզիկական ու բարոյական սահմանները զծող հեղինակի միջամտությունը:

Պոեմների քննությունից հետո Օշականն անցնում է հեքիաթագրությանը և արձանագրում՝ գրականության ամենանուրբ ու ամենավտանգավոր սեռի հետ գործ ունենք: Այդ իմաստով Թումանյանին հաջողվում է ստեղծել մեր գրականության «ամենէն հարագատ կտորները», որոնք քննադատն ուսումնասիրում է՝ նկատի ունենալով երկու մեծ հատկանիշները՝ «մեր *humeur*» մարմնացնող և «մեր երագը» բնեռող:

Ազգային նկարագիրը, հույզերը, տրամադրությունը արտահայտելու տեսանկյունից Օշականն իր անվերապահ համակրանքն է հայտնում Թումանյանին. «Հոս մեր անվերապահ համակրանքը կ'երթայ իր հէքեաթներուն, չափուած թէ արձակ, մանաւանդ գրեթէ դասական այն կատարելութեան համար, որ սկսող ու մեռնող գրականութեանց մօտ կը դիտուի: Մնաց որ արդէն կարելոր մաս մը ատոնցմէ գրուած են տողոց համար: Ու անսպասելի յաջողութեամբ մը, այդ պատմություններու ընթացքին, գրեթէ առանց ճիգի, կը ծագի ճիշդ, յատկանշական գիծը, ցեղի մը հոգիին փայլը, որ հէքեաթին կը բերէ ցեղական նկարագիր, կը մասնաւորէ պատմութիւնը ու հասարակաց բառերուն մէջէն կը հասնի մեր, հայկական արուեստի մը ուրուանկարին» (էջ 54):

Թումանյանը կարողանում է մոտենալ մեր «հաւաքական զգայութեան քանի մը թելերուն», մարդկային ու կենդանական հերոսներով հյուսել հետաքրքիր ու պարզ պատմություններ, որոնք միաժամանակ պատկերն են ժողովրդի կյանքի դարավոր բազմերանգության և երբեմն էլ «տիրական կնիքը ունին ցեղի մը նկարագրին» (էջ 55): Բայց հեքիաթները, ըստ Օշականի, միայն կյանքի յուրօրինակ խտացումներ չեն: Դրանք, «երբ ընդարձակ շունչով կուգան, կը պատմեն մանաւանդ իմացական առաքինութիւններէն, կ'առարկայացնեն անոր երեւակայութիւնը ու հոգիի միւս, այս անգամ բարձր կարողութիւնները» (ն.տ.): Այս տեսանկյունից քննադատը գրականության գոհար է համարում «Փարվանան», «ուր գրոյցը կը քալէ դասական թեթեւութեամբ եւ անձերը կը պարուրուին անդրաշխարհիկ մշուշով» (ն.տ.): Վերապահությամբ է

մոտենում «Թմկաբերդի առումը» (համարում է աշուղական բարոյա-խոսությանը տկարացած) ու «Ախթամար» («տժգոյն՝ ստեղծումով եւ խորքով») երկերի արժեքին: Բայց եզրակացությունը ամրագրում է. «Անոնք, մեր երազին հարսները, մեր հեքեաթներուն աննման աղջիկներն ու տղաքը, ու անոնք, մեր երազին կանթեղները որոնք «անպարան» կախ կուգան մեր լեռներուն կատարէն ու տակաւին անոնք որոնց բիրեղացումը չէ շնորհուած, կը մնան Թումանեանի բանաստեղծութեան ամենէն փափուկ ու ամենէն ազնուական ծաղիկները» (ն.տ.):

Ամփոփելով ստվարածավալ հոդվածը՝ այն համոզումն ունենք, որ ինչպէս հաճախ արձանագրվել է գրականագիտության պատմության մեջ²⁰, Ն. Թումանյանի՝ իբրև տաղանդավոր ստեղծագործողի բացառիկ մեծության վերաբերյալ Օշականը որևէ տարակույս չի արտահայտել: Շրջածիրը թերևս փակում է Սուրեն Դանիելյանը՝ գրելով. «Այս երկու համակարգերի բախումը ծաւալում է գրականութեան նշանակութեան, ազգայինի եւ եւրոպականի ճանաչողութեան հանգոյցներում: Այն չունի զուտ մրցակցութեան հով. տաղանդաւոր մարդկանց գրական շահերի սոսկական բախումը չէ, որ ընտրութիւն կատարելու հնարաւորութիւններ է բացելու: Երկուսն էլ մերն են ու բարձր գնահատութեամբ օժուած»²¹:

Եզրակացություն

1. Օշական-Թումանյան գեղարվեստական արժեհամակարգերի փոխբացասող տարբերությունները կարելի է բացատրել մի քանի պատճառներով՝ անձնական խառնվածք, աշխարհայեցություն, գրական երկի վերլուծության մեթոդաբանություն և այլն:

2. Ն. Օշականը, չնայած իր պարականոն մտածողությանը և տպավորապաշտ նախասիրություններին, բարձր էր գնահատում Թումանյանին ու նրա ստեղծագործական աշխարհը: «Բոլոր այս վերապահումները պատճառ չեն, որ Յովհաննէս Թումանեյան դադրի ժամանակակից գրականության ամենէն հարազատ բանաստեղծը ըլլալէ», - եզրափակում է Օշականը:

3. Ն. Օշականի «Յովհաննէս Թումանեան եւ իր գործը» ստվարածավալ հոդվածը, որ կառուցված է Թումանյանի գեղարվեստական մեթոդի և Օշականի քննադատական մեթոդի տիպաբանական տարբերությունների վրա, այսօր էլ Թումանյանի արվեստի մասին ձևավորված գեղագիտական ու փիլիսոփայական հայացքների ուշագրավ հանրագումար է՝ արժեքավոր դիտարկումներով:

²⁰ «Նրա (Օշականի - Ե.Մ.) կողմից բանաստեղծի մեծության ընկալումը կասկած չի հարուցում» (Շ. Քալանթարյան, նշվ. հոդվածը):

²¹ Մ. Դանիելեան, Միջուկի տրոհումը. սփիւռքահայ գրականութեան պատմութիւն, գիրք 1, էջ 68:

ЕВА МНАЦАКАНЯН – Статья Акопа Ошакана «Ованес Туманян и его творчество»: взгляд 100 лет спустя. – В статье представлены основные положения объемной статьи А. Ошакана «Ованес Туманян и его творчество», опубликованной в 1923 г. в августовском номере бостонского журнала «Родина». Они являются обобщением эстетических и философских взглядов автора на творчество Туманяна. Ошакан был знаком с произведениями Туманяна давно, и много лет назад выразил о них противоречивое мнение, которое варьировалось от безоговорочного неприятия до исключительно высокой оценки. Причина столь противоречивых взглядов западно-армянского критика на восточноармянские литературные и культурные ценности заключалась в его темпераменте, мировоззрении, методологии и др.

В исследуемой статье Ошакан при анализе творчества Туманяна выделяет следующие тематические разделы: «Лирик», «Эпик», «Стихотворец», «Сказочник», «Humeur». Наша задача — выявить в контексте подобной классификации произведений эстетические критерии оценки, выражаемой критиком, указав как на ценные наблюдения автора, так и на совершенно неприемлемые формулировки. При изучении проблемы использовались сопоставительный, сравнительно-исторический и герменевтический методы.

В нашей статье делается вывод о том, что Акоп Ошакан, несмотря на свое неортодоксальное мышление и импрессионистские предпочтения, высоко ценил Туманяна и его творческий мир.

Ключевые слова: *О. Туманян, А. Ошакан, «импрессионистский» критик, разные эстетические системы, эпические краски, эпик, психология, сказочник, типология, метод*

YEVA MNATSAKANYAN – Hakob Oshakan's Article "Hovhannes Tumanyan and His Creativity": a view 100 years later. – The article presents the main provisions of H. Oshakan's voluminous article entitled "Hovhannes Tumanyan and His Creativity", published in the August issue of the Boston magazine "Fatherland" in 1923. They are the generalization of the author's aesthetic and philosophical views on Tumanyan's creative work. Oshakan has been familiar with Tumanyan's works for a long time, and many years ago he had expressed a controversial opinion about them, which varied from unconditional hostility to extremely high appreciation. The reason for such contradictory views of the Western Armenian critic on the Eastern Armenian literary and cultural values was his temperament, worldview, methodology, etc.

In the studied article Oshakan, when analyzing Tumanyan's creative work, identifies the following thematic sections: "Lyric", "Epic", "Poet", "Storyteller", "Humeur". Our task is to reveal in the context of such a classification of works the aesthetic criteria of evaluation expressed by the critic, pointing out both the valuable observations of the author and completely unacceptable formulations. Comparative, comparative-historical and hermeneutic methods have been used during the study of the problem.

Our article concludes that Hakob Oshakan, despite his unorthodox thinking and impressionistic preferences, highly valued Tumanyan and his creative world.

Key words: *H. Tumanyan, H. Oshakan, "impressionist" critic, different aesthetic systems, epic colors, epic, psychology, storyteller, typology, method*

ՓՈՔՐ ԱՐՄՏԱՆԻ ՄԵԾ ՎԿԱՆ

ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՑԱՆ

Հողվածում նախորդ դարի մամուլի, գրողի կենսագրական նյութերի ու գեղարվեստական ստեղծագործությունների հիման վրա առաջին անգամ համապարփակ ներկայացվում է սփյուռքահայ գրականության դասական հեղինակ Հակոբ Մնձուրու կյանքի առաջին շրջանը, որն ընդգրկում է նրա՝ ծննդավայրում, ապա Կ. Պոլսում և նորից իր հայրենի գյուղում գտնվելու տարիները (1886-1914): Փաստական և գրականագիտական հիմնավորումներով ներկայացվում են Արևմտյան Հայաստանի Երզնկա գավառի, նրա մի շարք գյուղերի և հատկապես Արմտանի ու նրա բնակիչների կյանքի ու կենցաղի, ազգային սովորույթների, մարդկային հարաբերությունների վերակերտումները մնձուրիական գրականության մեջ, ինչպես նաև գրողի կյանքի այն ընթացքը, որ նա ունեցավ մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելը: Ինքը՝ Մնձուրին, մի գյուղացի էր, որի դառնալից կյանքն իրենով արտացոլեց նաև հայ ժողովրդի մի մեծ հատվածի ողբերգական ճակատագիրը:

Պատանի Հակոբի կյանքի հյուսքով հողվածում վեր է հանվում նրա ապրած օրերի այն բազմահարուստ ու բազմերանգ շրջանակը, որը մաս առ մաս ձևավորեց ապագա մեծ գրողին, այն գրողին, որ վերջին վկան դարձավ այլևս չգոյ մի երկրի, որտեղ ապրում էին խաղաղ մարդիկ, և որոնք կյանքի իմաստը տեսնում էին արարման ու աշխատանքի մեջ, փայփայում կյանքի խաղաղ ընթացք:

Հողվածը պարունակում է արևմտահայոց մի հատվածի կյանքին վերաբերող հարուստ նյութ, որը մեկնելի է դարձնում Հակոբ Մնձուրու գործերի գաղափարական և գեղարվեստական արժանիքները, այն գրականությունը, որ ընդգրկում է Մնձուրու խոսքերով ասած՝ «Գյուղս, էս, հողս, մենք»:

Բանալի բառեր – *Հակոբ Մնձուրի, վկայաբանություն, Արմտանի այգիներ, ազգապահպանություն, 20-րդ դարի արևմտահայ գրականություն, պատկերակերտում*

«Գյուղս, էս, հողս, մենք»- Հակոբ Մնձուրու այս խոսքերը լավագույնս են բնութագրում նրա ողջ գրականությունը: Դեռևս Կ. Պոլսում ուսանելու տարիներին կասմացի հայ պանդուխտները նրան հարցրել էին.

« - Իգնատիուսի տղան, Ակոբը դո՞ւն էս...

- Այո, ըսի:

- ... Ղալաթիա, Կեդրոնականը ձգեցիր, հիմա ալ քեզ Բոպերթ գոլեճ պիտի դնեն, նայինք շատ կարդալով ինչ պիտի ըլլաս», որին պատասխանել էր. «Նորեն Արմտան պիտի երթամ, արմտանցի մը պիտի

ըլլամ, արտ պիտի վարեմ, բեռ պիտի բեռնամ...»¹: Բայց զարգացող դեպքերը բոլորովին չարագուշակ եղան նրա համար:

Նա եղավ այն գրողը, ում համար ներկա գոյություն չունեցավ. ամեն բան և ամենքը անցյալ դարձան, և եթե ներկա էլ կար, այն յուրատեսակ ներկա էր անցյալից մնացած պատատիկ, հուշ ու հիշատակ: Ինքը՝ Մնձուրին էլ գիտեր, որ իր գրականությունը նման չէ և ոչ մի այլ գրականության, ինչպես որ իր կյանքը բացառիկ էր ու նման չէր ոչ մեկի կյանքին: Նա պատմելու էր *«տեղե մը»*, որ *վերահաս եղեռնի պատճառով այլևս չկար, չկային նրա պատկերած մարդիկ ու իրականությունը*: Եվ նրա պատմվածքները միայն պատմություն չէրան, այլև ազգագրություն, ազգային պատմություն, վկայաբանություն: *«Ես զիս պատմեցի ու ինձնով իմ հայրենի շրջապատս պատմեցի: Իմ անձերս ու անոնց աշխարհագրությունը: Ազգագրությունը հայեցուցի իմ պատմություններուս մեջ»*²: Պատմություններ, որոնցում վերոհիշյալ վկայությունը գրեթե սպառիչ ամփոփում է այն ընդգրկումներն ու առանձնահատկությունները, որոնք բնորոշ են Մնձուրու գրականությանը: Մենք ուզում ենք ասվածի մեջ հատկապես ընդգծել երկու միտք. նախ՝ այդ գրականությունը *վկայաբանությունն* է մեր ազգային կյանքի որոշ շրջանի պատմության, և երկրորդ՝ Մնձուրին իրեն ու իր հայրենի շրջապատը *«հայեցուցել»* է իր պատմությունների մեջ, որ նշանակում է մերել, ձուլել, հյուսել, ասել է՝ ահա այն բովանդակությունը և այն ձևը, որ ներկայացնում է այդ գրականությունն իր ամբողջության մեջ:

Գրեթե բոլոր գործերում, տեսանելի թե ոչ, որպես գործող անձ ներկա է ինքը՝ Մնձուրին՝ մերթ որպես վկա, մերթ՝ ականատես, մերթ՝ վերոհիշող, մերթ՝ մասնակից, մերթ՝ կողքից դիտող: Արդյունքում ստացվում է յուրատեսակ մի ինքնակենսագրություն, որտեղ հեղինակը գրում է որքան այլոց, նույնքան էլ իր մասին: Այդ ներկայությունը ընթացող դեպքերին հավաստիություն է հաղորդում, համոզիչ դարձնում ասվածը, ընթերցողին մասնակից դարձնում գործողություններին մինչ այն աստիճան, որ նա գրողի գրուցակիցն է դառնում, «ստիպված լինում» *«պատասխանել»* հեղինակի՝ իրեն ուղղված այն հարցումներին, թե *«Դուն կճանչնա ս», «Դուն աս տեղերը եղա՞ծ ես», «Դուն գիտե՞ի՞ր», «Կարելի է չէք հաւատար», «Հո՛ն որ գալու ըլլաս...», «Ես ըլլայի, դուք ըլլայիք մտքերնուս կրրնայի՞նք անցրնել»:*

Մնձուրին գրել է առանց դադարի՝ Արմտանի այգիներում ու ձորերում եղած ժամանակ, Պոլսում դեպի փուռ աշխատանքի գնալիս և վերադառնալիս (անգամ ձեռքի ափերին), հարդ, խոտ ու ածուխ ծախելիս, մոմ վաճառելիս, *«պարսպ պտտելու»* ժամանակ, հաշվեկալ ու *«դագ-*

¹ Յ. Մնձուրի, Տեղեր ուր ես եղեր եմ, Բաթանպուլ, 1984, էջ 141: Այսուհետև այս գրքից կատարված մեջբերումների հղումները կտրվեն տեքստում, կնշվեն միայն վերնագիրն ու էջը:

² «Բագին», Բեյրութ, 2021, թիւ 1, էջ 65:

գահտար» աշխատելիս: Եվ երբ ինչ-ինչ պատճառներով չի գրել, իրեն պատվանդանի վրա տեղադրված անշարժ արձանի է նմանեցրել:

Մնծուրին, շատ քիչ բացառություններով, իր գործերում պատկերում է Երզնկա* գավառի** կյանքը, ավելի նեղ առումով՝ Եփրատի աջ ափին գտնվող փոքրիկ Արմտան*** գյուղի կյանքը: Այդ «նեղ» սահմաններում իրականում նա ներառում է անպարփակելի ողջ Արևմտահայաստան աշխարհն ու նրա մարդկանց:

«Արմտանի այգիները» գործում Մնծուրին շատ որոշակի է գծագրում իր ծննդավայր Արմտանի**** աշխարհագրությունը: Արմտանը մի վայր էր, որ հիմնականում բաղկացած էր խորը կիրճերից ու ձորերից, երկինք հատնող լեռներից, որտեղ ասես «*Երկինքեն քար թափեր են*», և կամ «*քարերու հեղեղ մըն են*», Մնծուրու խոսքերով ասած՝ ո՛չ «*արտ կշինվի*», ո՛չ «*եզ կբերվի, կլծվի*», ո՛չ «*արտ կբանի*»: Խոսելով իր այդ երկրի մասին՝ «Արմտան» գործում գրում է. «*Մեր ամեն լեռան էտերը նորէն լեռ է, անոր էտերը նորէն լեռ*»³: Սրան ավելացնենք և այն, որ թեև ձորերով հոսում էին գետեր, բայց բարձունքներում, որտեղ ապրում էին մարդիկ, աղբյուրներն աղի էին, և գյուղացիները հաճախ հեռուներից ավանակներին բարձած կժերով էին խմելու ջուր բերում:

Շարունակելով խոսել իր գյուղի մասին, որը գտնվում էր Եփրատի ափին, իսկ ավելի ստույգ՝ նրա Ղորուչայ (Չորգետ) վտակի**** անմիջական դրկիցությամբ՝ Մնծուրին իր «Սիլա» պատմվածքում գրում է. «*Ճամբուն երկու կողմը՝ աջը, ձախը, դեպի վեր, դեպի վար, մինչև շուրջանակի բլուրներու ստորոտը ցանված էին, ափ մը պարասպ գետին չկար: Ամբողջը ցորենի արտեր էին: Մեջ ընդ մեջ գարիի ու վիկի, այսինքն վայրի ոսպի: Ամենքն ալ մաս-մաքուր էին, ամենուն ալ քաղիանքը եղած էին, մեկ հատիկ խոտ չկար*»⁴:

Հին եգիպտացիները դրախտը պատկերացնում էին Խապի (Նեղոսի հին անվանումը) գետի ափերին գտնվող մի ծառաստան-եղեգնուտ, որտեղ կարելի էր ազատ ապրել, որս անել, պարել ու ուրախանալ: Այդպիսի մի «*ծառաստան-եղեգնուտ*» էր Մնծուրու համար իր Արմտանը, ավելի լայն իմաստով՝ Արևմտահայաստանը, որտեղ ապրելն ու արարելը կյանքի գերագույն իմաստն ու նպատակն էին:

* Երզնկան թուրքերը դարձրել են Էրզինջան:

** Այդ բնակավայրը և հարակից տասնյակ այլ բնակավայրեր հիշատակվում են դեռևս հին շումերական, խեթական արձանագրություններում:

*** Մ. Մեծարենցի գյուղը Բինկյանը, որը նույնպես Եփրատի աջ ափին էր, Արմտանից ոտքով երկու ժամվա հեռավորության վրա էր գտնվում, Մնծուրու խոսքով. «... ձեռքդ մեկնեիր, նե կհասներ»:

**** Գոյություն ունեին երկու Արմտաններ՝ վերի Արմտան, վարի Արմտան: (Այդպես նույն անունով գոյություն ունեին, օրինակ, Ուխտիկներ գույգ գյուղերը): Վարի Արմտանը փոքր Արմտանն էր, Մնծուրու գյուղը, որի չորս գերդաստան իրենք Տեմուրճենք էին:

³ **Յ. Մնծուրի**, Կապոյտ լոյս, Իսթանպուլ, 1958, էջ 90:

***** Եփրատի այդ վայրերով հոսող վտակներից մեկն էլ Ղարապուտախ (Մն ճյուղ) գետն էր:

⁴ **Հ. Մնծուրի**, Երկեր, Եր., 1986, էջ 379: Այսուհետև այս գրքից կատարված մեջբերումների հղումները կտրվեն տեքստում, կնշվեն միայն վերնագրին ու էջը:

Հենց այդպես էլ մնա՞նք հայկական ողջ գրականության մեջ արժանաբար ու պանծացվում են իր երկիրն ու նրա մարդիկ, որն այլ բան չէ, քան հայրենիք ասվածը, որը, ըստ Մնձուրու, ամեն հայկականն է, ամեն բարին ու արդարը, հայրենի հող ու ջրի քաղցրությունները: Այդ ամեն հայկականն էլ Մնձուրու գրականության մեջ մեծանում է, դառնում ընթերցողինը, ուրիշներինը, աշխարհինը, դառնում հայ բարձր ոգու ու ժողովրդի հարատևության և ինքնության մասին ասված անգնահատելի խոսք: Այդպես Կոստան Զարյանը ևս անքակտելի կապ էր տեսնում հայ մարդու և բնության միջև. «Հայ մարդու համար բնությունը գերազանցապես հայրենիք է: Երբ նրանք մեկը մեկին կորցնում են, երկուսն էլ մնում են որբ, թառամում... չորանում»⁵:

Արևոտ ու լուսերով լեցուն այդ երկիրը թեն լեցուն էր բազում հոգս ու դժվարություններով, սակայն Մնձուրին այն ներկայացնում է որպես ցանկալի մի վայր, քանի որ կատարված մեծ չարիքը համեմատության եզրեր չէր թողել, խավարով, ամայության մեջ արյամբ էր պատել մի ամբողջ աշխարհ, որ համահունչ էր *չկա* բառին, որի պարագայում թերություններն անգամ քաղցր հուշեր էին դարձել: «Ապրեցրել եմ այն, որ չկա այլևս հիմա, - գրել է Մնձուրին: - Չերգիծեցի: Բնչո՞ւ չընէի» (Տեղեր, էջ 209):

Մնձուրին երբ գրում էր իր պատմվածքները, ոչ այդ մարդիկ կային և ոչ էլ նրանց Երկիրը: Բայց արդյո՞ք չկային: Մնձուրու գրականությունը գալիս է ասելու, որ նրանք անանց են, կան, *ասյրում* են: Եվ այդ *հայրությունը* այդ գրականության միջոցով հարատևություն է ստանում, արևմտահայ մարդը, որ հիմնականում գյուղաբնակ էր, իր հող ու ջրի հետ էր հավերժության ուղեկիցը դառնում: Մի գրականություն, որ, ապրեցնելով հանդերձ նախնիների հիշատակը, միտված էր ազգապահպանմանը, մանավանդ նոր ժամանակներում և նոր պայմաններում:

Մնձուրին, որ ապրեց 92 երկար ու ձիգ տարիներ, հայրենի ծննդավայրում բնակվեց հազիվ 19-20 տարի՝ 1886-1897 և 1907-1914, մնացած 72 տարիները ընթացան հայրենի հող ու ջրից դուրս՝ Կ.Պոլսում: Բայց Մնձուրին միշտ ու հարատև մնաց իր կորսված եզերքի նվիրյալն ու կարոտյալը, դեռ ավելին՝ նրա՝ այդ Մեծ բացակայի Մեծ բնակիչը, նրա մշակը, որի վերաբերյալ հաստատեց. «Գյուղացին չերթար մեջես»: Ուրեմն պատահական չէ, որ գրում էր. «... ես... իմ անձերս, իմ երկիրս խօսեցուցի»⁶: Հենց դրա համար էլ նրա գրականությունը մի տևական *սիլա* (տունդարձ) դարձավ, *անընդհատ վերադարձ ու նորոգում իր Երկրի ու նրա մարդկանց, հայրենի հողի ու բնաշխարհի*, որոնց մեջ, իր բառերով ասած, նա «խառնել է» տեղագրություն, բարքագրություն, բանահյուսություն ու ժողովրդագրություն, ստեղծել յուրատեսակ *համանկար*, իր խոսքով. «Բառերով նկարչություն ըրի», որտեղ «... դեպք, տոսմ

⁵ «Հայրենիք» ամսագիր, թիվ 1, Բոստոն, 1936, էջ 43:

⁶ **Հ. Մնձուրի**, Մենք, Անթիլիաս, 2018, էջ 365: Այսուհետև այս գրքից կատարված մեջբերումների հղումները կտրվեն տեքստում, կնշվեն միայն վերնագիրն ու էջը:

չկան... կամ գրեթե չկան»⁷, ու նաև այդ ամենի հետևանքով է, որ նրա շատ պատմվածքներում «բացակայում» է պոմեի զարգացումը, և «երկրորդական» է դառնում ստեղծագործության բովանդակությունը, ավելի ճիշտ՝ բովանդակությունը գալիս է հետո: Ավելին, Մնձուրին իր պատմվածքները գրում է, այսպես ասած, «քեզ հետ խոսելու պես», որի արդյունքում առանձին պատմվածքներ, որոնք հազիվ երկու-երեք էջից են բաղկացած, դեռ չսկսած՝ ավարտվում են, որոնցից ընթերցողի հիշողության մեջ մնում են հազիվ մեկ-երկու «անկարևոր» դեպքերի կամ իրադարձությունների անդրադարձներ: Դրան հակառակ՝ անանց են մնում Մնձուրու կերտած մարդկային տիպերն ու պատկերակերտման բազմերանգությունները, որոնցով լեցուն են նրա բոլոր պատմվածքները, որոնց խորքը հայրենի հողն է, նրա աղն ու համը հանդիսացող հայ մարդն ու նրա աշխատանքը:

Խոսելով շրջանի գրական ըմբռնումների ու առաջադրանքների մասին՝ Մնձուրին իր «Սիրահարություն մը» պատմվածքում գրում է. «Մենք բոլորս ալ հավատավորներն էինք այն շարժումին, որ այդ օրերուն մեր գրականության մեջ ձև ու կյանք առնելու վրա էր, թե հայ արվեստը իր բոլոր ճյուղերովը, ընդ որս և գրականությունը որպեսզի կարենա ցեղին հոգին ցուցնել, յուրահատուկ գեղեցկությունները երևան հանել, բնագավառեն ներշնչվելու, անկե առնելու է իր ավիշը, անոր հողեն ծնելու է, արդպիտով միայն կենսունակ, բաբախուն, ինքնատիպ, նույն ատեն խորապես մարդկային կարենալ դառնալու համար: Ու ասորը համար պետք է դիմել, մոտենալ բուն իսկ ակին, առավելապես գյուղին, ապրիլ հոն, ճանչնալ ու սիրել զայն» (ընդգծ. – Ա. Ա.) (Կապույտ լույս, էջ 129):

Եվ սա լոկ նախասիրության փաստում չէր, այլև գրական մանիֆեստ հենց իր համար, առաջադրանք ու նպատակ, որն իրականություն դարձավ նրա գրականությամբ: Եվ պատահական չէ, որ Մնձուրին դարձավ ոչ միայն դեպի հայրենի բնաշխարհ շարժման նվիրյալներից մեկը, այլև այն իրականացնողներից մեկը:

«Իմ ապրած ու եղած տեղերուս մարդիկը կպատմեն» վկայությունը հենց այն առաջադրանքն է եղել, որին հավատարիմ մնաց գրողը մինչև վերջ:

Այստեղից էլ հառնում էին Մնձուրու հերոսները, որ իրենց հայրենի բնաշխարհին ձուլված մարդիկ են՝ իրենց էությամբ այդ բնության նման բարի ու արարող, ազնիվ ու շիտակ, լեցուն ազգային ինքնության հատկանիշներով: Ստեղծագործական ողջ շրջանում «գյուղը տալը», «գյուղը պատմելը» Մնձուրին բացատրում է ոչ միայն «անոր անհետացմամբ», այլև նրա «շարունակումը» շարունակելու անհրաժեշտությամբ ու գիտակցությամբ:

⁷ Զ. Մնձուրի, Կապույտ լույս, Եր., 1968, էջ 11, 13: Այսուհետև այս գրքից կատարված մեջբերումների հղումները կտրվեն տեքստում, կնշվեն միայն վերնագիրն ու էջը:

Եվ ուրեմն, Մնձուրու գրականությունը *վերադարձ* է այն ժամանակները, որտեղից նա եկել էր, *վերհիշումը* այն դեպքերի, որոնց միջով անցել էր ինքը, *վերապրեցումը* այն ամենի, որ կապված էր հայ անվան հետ: Մի արձակ, որ գեղանկարչություն էր ու կարոտ, սրտի մորմոք, և որը ներկայացված իր մարդկային տիպերով արտացոլում է արևմտահայ մարդուն բաժին հասած թե՛ ուրախ ու կենսախիղ, թե՛ դառն ու անել ճակատագիրը, ենթատեքստում բացահայտելով նաև այն վայրիվերումները, որոնց մեջ գտնվում էր 20-րդ դարի արևմտահայ գավառը թուրքական բռնապետության ներքո:

Մնձուրու համար գյուղը պատկերելը նեղ առումով *աշխարհը գրելն* էր, լայն առումով՝ *իր Երկիրը գրելը* և իր ընթերցողին այդ երկիր տանելը, որտեղ և նրան «պտտեցնում» է, ալոճի աշնանային ծառերի տակ նստեցնում, ճնճղուկներ փախցնող մանուկների «լէ-լէներուն» ձայնը լսել տալիս, վաղ առավոտ գյուղացի Շիրինի նման սառնորակ աղբյուրից մի քանի կաթիլով ցողում դեմքը՝ իբր թե լվացվեց.... Արդյունքում այդ գրականությունը, որ կարոտի խոսք է ու մորմոք, հնչում է որպես *վերադարձի* երգ ու վերագտման մեղեդի, նպատակ ու ոգեկոչում, այլ խոսքով՝ երկիրը վերապրեցնելը, նրան հարություն տալը, մարդու հայ տեսակի բացահայտումը, նրա բարոյական բարձր որակների վերհանումն իր խորքի մեջ հակադրումն են դառնում մարդասպան մարդու տեսակին՝ թուրքին: Կար և մի ուրիշ նպատակ. փաստել ու վկայել գյուղի՝ մի ողջ եզերքի անհետացումը, կարոտաբաղձություն արթնացնել նրանց նկատմամբ, պանծացնել «չգոյ» հայրենիքի գաղափարը:

Մնձուրու կյանքը ինքնին գրական նյութ է առնվազն երկու առումով. մեկ, որ այն ներառում է արևմտահայ բնաշխարհիկ մարդու անհատական ճակատագիր և այդ մարդու *մասնակի* ինքնությունը բնորոշող բացահայտումներ՝ հողի, աշխատանքի, արարման, բնության ու մարդու անբաժանելիության և միասնության հարատևություն, մյուս կողմից արտահայտությունն է ողջ արևմտահայությանը հասած *ընդհանրական* ողբերգական կործանումների, որ անդառնալի չարիքի նման կախվեց այդ ժողովրդի մեծագույն հատվածի վրա:

Մնձուրի (բուն անունով՝ Հակոբ Տեմիրճյան, հորական ապուպապը երկաթագործ լինելու հանգամանքով այդ ազգանունն է ընտրվել*) գրական անունը նրան տվել է արևմտահայ ճանաչված մտավորական, գրող Օսնիկ Չիֆթե-Սարաֆը (Հովհաննես Աբխտղոմոնյան)՝ նկատի ունենալով գրողի ծննդավայրի լեռնաշղթայի անվանումը, իրեն էլ մկրտելով Հովհաննես Ասպետ գրական անվամբ:

Մնձուրին ծնվել է 1886 թ. հոկտեմբերի 16-ին Երզնկա* գավառի Գորուչայ գավառակի** փոքր Արմտան գյուղում, որը բաղկացած էր

* Արևմտահայոց մեջ տարածված մի բան էր մականունը բխեցնել զբաղմունքից, մասնագիտությունից:

** Երզնկան Արմտանից ոտքով երեք օրվա հեռավորություն ուներ:

շուրջ յոթանասուն տնից: Կար և երեք հարյուր տնով մեծ Արմտանը, որոնք այնքան էին մոտ, որ կանչելիս իրար լսում էին: Երկու գյուղերն էլ ապրում էին միևնույն համայնական կյանքով: Ինչպես գրում է Մնձուրին իր «Արմտան» գործում, երկու գյուղերի բնակիչներն իրար հետու ու մոտ բարեկամներ էին. փեսան բոլորի տների համար փեսա էր, *«Մորդ մարանց բոլոր տուններուն աղջիկները մորքուրներդ են, անոնց այրերը՝ մորքուրայրերդ, զավակները՝ մորքուրորդիներդ...»* (Կապույտ լույս, էջ 92): Գյուղերը գտնվում էին Դերսիմի լեռնաշղթայի (որին տեղացիները Տուժիկի կամ Մնձուրի, Մրգա (այրված, վառված, խարկված) անունն էին տվել) մոտ, որը ձգվում էր Ակնի ուղղությամբ և ուներ Կապույտ լույս կոչվող երկգագաթ լեռը, որը տեղացիներն իբրև սրբավայր էին ընդունում, ձոնում հայրեններ. *«Հով մը Մրգայ լեռնէ // Մեր դրան ախլանքը կը ծեծէ»*:

Որտեղից իմանար ապագա գրողը, որ հակառակ իր սիրասուն լեռնաշղթայի իր առջև ցցված է մնալու մի ուրիշ անել պատեն՝ իր կյանքի դառը բեռը՝ միշտ խարկված ու մնձրված:

Զարմանալին այն է, որ Մնձուրին կարող էր և չծնվել, այն էլ՝ երկու անգամ, որոնց մասին նա գրում է իր «Կավին դարը» և «Առաջնեկը» գործերում. առաջինում սեպտեմբերի 20-ին իրենով ծոցվոր մորը հանել են փլված հողերի տակից, երկրորդում՝ հոկտեմբերի 16-ին խոտհունձի դաշտերի ամայության մեջ ծննդաբերելուց հետո ուշաթափ մորը և իրեն գտել են աղբյուրի մոտ: Նրա կյանքում եղել է և երրորդ ճակատագրական դեպքը, բայց այդ մասին՝ հետո:

Ինչպես ողջ գյուղը, Տեմուրճենց տան տղամարդիկ պանդխտում էին: Հակորը օգնում է ընտանիքին ինչով կարող էր, հաճախում դպրոց, որը գործում էր թուրքական օրենքներով ու պահանջներով: Եվ երբ դպրոց էին գալիս թուրք պաշտոնյաները, դպրոցականներին երգել էին տալիս թուրքերեն երգեր, որոնց բովանդակությունը, օրինակ, գայմագամի այցելության առիթով այսպիսին էր. *«Մեր գաւառակին քաջ գայմագամին, Արդարակորով մեծ Ահմէտ պէկին, եկէք, որ երգենք երգ կենդանութեան, կենացը աղօթենք որ երկար ապրի»* (Տեղեր, էջ 79):

Ինչպես իր տարեկիցները, Մնձուրին ձմռանը դպրոց է հաճախել, զարնանը, ամռանը, աշնանը՝ խաղացել, եղել հոտաղ, ապա խոտ ու որան կրող, կալ կամնել, աշխատել արտերում: Արդեն տասը տարեկանում նրա մեջ սկսում է կազմավորվել ապագա գրողը. պատանի Հակորն այլ ձևով է տեսնում ու ընկալում շրջապատն ու երևույթները: Իր տարեկից Նանոյի հետ, երբ Արմտանի դաշտերում ու սարերում ուլեր ու գառներ էր պահում, *«հարիւր անգամ... հազար անգամ»* լինում նույն տեղերում, այդ նույն վայրերը նրան ամեն օր նոր կողմերով էին բացահայտվում, և նա զարմանք ու հիացմունք էր ապրում. *«Այս ձորերը*

** Տեղավայրի բաժանման թուրքական պաշտոնական անվանումը «Չորրորդ բանակ» էր:

այսքան՝ կապոյտ էին, հապա լոյսէ՛րը որ կը փայլէին, կը մարէին լեռներուն վրայ:

Աւրզնին ձորը այսքան վա՛ր, այսքան խորո՞ւնկ էր, առուն որ կը յորդէր այսքան շատ ջո՞ւր ունէր» (Մենք, էջ 304):

In The Book of Genesis, **ծնունդ** is synonymous with the words **զաւակ, որդի**, a symbol of new life. **Ծնունդ** is a derived composition, the root is **ծին+ունդ**, tsin from the root I.-e ***ǵ'en** with the meanings "birth, origin, generation, succession, sons"²³. G. Jahukyan connects the suffix **-ունդ** with the adjective I.-e ***ti-**, which supposedly had the meaning of "exiting"²⁴. The word "**մանուկ**" is also included in this synonymous series. **Մանուկ** is also considered an Indo-European entity, G. Jahukyan connects it with the root I.-e ***mhkio: *men** "to make small, to make smaller", in which the meanings of "weak, narrow" are also restored. G. Jahukyan disputes H. Acharyan's hypothesis, by which the root man is connected with the Latin word **mās** "man, boy", because there are no other Indo-European parallels. And the diminutive suffix **-uk**, as well as **-ik-** originates from the compound suffix I.-e ***kon**, with the preceding basic element ***-ū-**²⁵.

In the book we studied, the first child **անդրանիկ** has a special place: the son, the firstborn, the right of birthright has a biblical testimony, and it reserved not only a property and status advantage to the elder of the house, but also a great moral responsibility. That's why the adjective **անդրանիկ** with the initial meaning "firstborn, eldest" also has a widespread use as a noun, is ambiguous, and later became a masculine proper name. Let's remember Jacob's words to his sons from the concluding chapter of The Book of Genesis. "Reuben, you are my firstborn, my might and the first fruits of my vigor, excelling in rank and excelling in power" 49:3. **Andranik** is a native word. I.- e ***ant(i)ro**, from the form ***ant(i)** meaning "in front of", to which the native suffix **-անիկ** was added again²⁶.

²⁰ G. B. Jahukyan, Etymological Dictionary, p. 752 (**Գ. Ջահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 752):

²¹ G. B. Jahukyan, Etymological Dictionary, p. 235 (**Գ. Ջահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 235):

²² Hrachia Acharyan, Armenian Etymological Dictionary, vol. 2, p. 686 (**Հրաչեայ Աճառեան**, նշվ. աշխ., հ.2, էջ 85):

²³ Hrachia Acharyan, Armenian Etymological Dictionary, vol. 2, p. 457 (**Հրաչեայ Աճառեան**, Հայերեն արմատական բառարան, հ.2, էջ 457):

²⁴ G. B. Jahukyan, Etymological Dictionary, p. 812 (**Գ. Ջահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 812):

²⁵ In the same place, էջ 811:

²⁶ In the same place, p. 55:

The opening book of the Bible is symbolically titled, Genesis, and it summarizes the births of the divine creation, heaven and earth, and the vegetable, animal, and primal human worlds formed between them, with their basic names. Man is the creature with the primary right to activity and power in the world, who creates the systems necessary for his existence, reproduction and self-preservation: **ընտանիք, ազգ, գերդաստան**.

As final points, let's look at the names of these general concepts. The word **ընտանիք** (Family) is three-component: ընդ+սնուն/սան+ի+ք, all of them are of indigenous origin, and the initial form of v is the root I.- e ***anti** "**instead, together**", to which G. Jahukyan presumably adds the preposition ***ndhos**, meaning "**under**". И is a native suffix, **-ք** is plural morpheme, the general meaning is transparent: those who live in a common house or under the same roof are relatives, this word is rarely used in The Book of Genesis, the root word "house" is mainly used in this sense, which I.-e ***dem**. It is from the form ***dem(o)** with the meaning "**to build, to adapt to each other**". Let me give a typical example. "«And at the harvests you shall give one-fifth to Pharaoh, and four-fifths shall be your own, as seed for the field and as food for yourselves and your **households**, and as food for your little **ones**"47: 24.

In the book we have studied, the common noun **ազգ** is a synonym of the words *սոհմ գերդաստան գաղմ* (clan), the semantic field is wider, in general it meant a gender, a species, an order, a class, and also a house, a people, a crowd, a clan. The root is supposed to be of Iranian origin, connected with the Middle Persian word **ազգ** "branch". In the Tower of Babel passage, God realizes that when the sons of men are all one nation and have one language, then they are perfect, capable of doing whatever they want, that is, they are equal to the gods, so he decides to mix their languages so that friend will speak the language of friend, will not understand anymore. "Look, they are one people, and they have all one language; and this is only the beginning of what they will do; nothing that they propose to do will now be impossible for them. Come, let us go down, and confuse their language there, so that they will not understand one another's speech. So the LORD scattered them abroad from there over the face of all the earth, and they left off building the city" 11: 6-8.

As noted by G Jahukyan The nouns (nation), **սոհմ** (tribe) show the linguistic and origin commonalities of their members. The word **ազգ** may or may not coincide with the state as a social unit, and the clan is already a historical concept that combines the functions of preservation of generations and preservation of existence²⁷.

The word **սոհմ** is a narrow synonym of nation, with the explanation "tribe, ethnic lineage, house, people, branch of the nation". It is a Pahlavi root with the same meaning: "seed, tribe, origin, birth". Let's take a characteristic example of the use of the word **սոհմ** from The Book of Genesis, where is discussed the salvation of the clans of Noah and his sons after the great flood: "These are the descendants of Shem, by their families, their languages, their lands, and their nations. These are the families of Noah's sons, according to

²⁷ Հմմտ. **Գ. Ջահուկյան**, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, էջ 141-142:

their genealogies, in their nations; and from these the nations spread abroad on the earth after the flood " 10: 31-32.

ՆԱԲԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ – Մենդոց գրքի գրաբար թարգմանության մեջ մարդ նշանակող իմաստային դաշտի հիմնաբառերի զարգացումը – Մարդու և հասարակության վերաբերյալ բառերի քննությունը Մենդոց գրքում ցույց է տալիս, որ իմաստային այս խումբն ունի հիմնական հասկացությունների համար բազմաթիվ բառային նշանակումներ՝ թե՛ պարզ արմատական, թե՛ ածանցավոր կամ բաղադրյալ կազմություններ, որոնք միավորված են իրար լրացնող ենթախմբերում: Այս իմաստային դաշտի ենթախմբերում ընդգրկված բառերը հոմանշային անդամների թվի տեսանկյունից հարուստ շարքեր ունեն: Բառերի հիմնական մասը ծագումով բնիկ հնդեվրոպական է՝ **մարդ, այր, ծնունդ, մանուկ, հայր, մայր, եղբայր, քոյր, ուստր, դուստր, անդրանիկ, ընտանիք, տուն**: Մակավաթիվ փոխառություններ կան՝ իրանյան (**ազգ, տոհմ, զաւակ**) և ասորական (**տղայ**): Փոխառյալ կազմությունները գալիս են լրացնելու նշված բազմանդամ հոմանշային շարքերը: Քննված բառերը համագործածական են հայոց լեզվի պատմության բոլոր շրջաններում՝ հին, միջին և նոր գրական հայերեններում, ինչպես նաև բարբառներում: Դրանց իմաստային բովանդակությունը դարերով գրեթե փոփոխությունների չի ենթարկվել, պարզապես որոշ բառեր հիմնական բառաֆոնդից տեղափոխվել են հնաբանությունների, բանաստեղծական բառերի շերտեր: Հունարեն և ասորերեն բնագրից Աստվածաշունչ մատյանը գրաբար դարձրած մեր թարգմանիչները մեծ տաղանդով ի ցույց են դրել ոսկե դարի դասական լեզվի բառապաշարի, բառակազմության և իմաստաբանության ներուժը՝ նույն հասկացությունը տարբեր բառերով, ոճական, իմաստային նուրբ երանգներով վերարտադրելու ունակությունը՝ Սուրբ գրքի բնագրին համարժեք:

Բանալի բառեր – *Աստվածաշունչ մատյան, Մենդոց գիրք, գրաբար թարգմանություն, բառապաշար, իմաստային դաշտ, մարդ, հասարակություն, բնիկ բառեր, փոխառություններ*

НАРИНЕ ДИЛБАРЯН – Развитие ключевых слов семантического поля, обозначающих человека, в древнеармянском переводе Книги Бытия. – Изучение слов, относящихся к человеку и обществу в Книге Бытия, показывает, что эта семантическая группа имеет много словесных единиц для обозначения основных понятий, будь то простые корни или составные конструкции, которые объединены в дополняющие друг друга подгруппы. Слова, входящие в подгруппы этого семантического поля, имеют богатый спектр по количеству членов-синонимов. Большинство этих слов индоевропейского происхождения: **մարդ, այր, ծնունդ, մանուկ, հայր, մայր, եղբայր, քոյր, ուստր, դուստր, անդրանիկ, ծնունդ, ընտանիք, տուն**, есть несколько заимствований: иранские (**ազգ, տոհմ, զաւակ**) и сирийское (**տղայ**). Заимствования обогащают разнообразные синонимические ряды. Исследуемые слова употребляются во всех периодах истории армянского языка: в древнеармянском, среднеармянском и в новом литературном языке, а также в диалектах. Их смысловое содержание в основном не изменилось

на протяжении веков, лишь некоторые слова перешли из базовой лексики в пласты устаревших и поэтических слов. Наши переводчики, переводящие на древнеармянский язык Священное Писание с греческих и сирийских оригиналов, с большим талантом продемонстрировали потенциал лексики классического гробара Золотого века, способность выразить одно и то же понятие несколькими словами с едва уловимыми стилистическими, семантическими нюансами, равнозначно оригиналу Священного Писания.

Ключевые слова: *Библия, Книга Бытия, древнеармянский перевод, лексика, семантическое поле, человек, общество, коренные слова, заимствования*

ՀՈԼՈՎԱԿԱՆ ԶՈՒԳԱԶԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿԱՆ
ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆ
ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Լեզվի զարգացման ընթացքում արդի գրական արևելահայերենի հոլովական համակարգում ձևավորվում ու մշակվում են հոլովման ու հոլովային նոր տարբերակներ՝ առաջ բերելով զուգաձևություններ: Դրանց առաջացման հիմնապատճառներն են ի հոլովման գերիշխանության ծավալումը, ավանդաբար փոխանցված հոլովային զուգաձևերի փոխներթափանցումները, հիմքային զուգաձևերի, մասնավորապես անհնչյունափոխի հիմքով կազմությունների զարգացումը, իմաստային և գործառական-ռճական հիմունքով ձևերի զուգահեռ գործածությունը: Այս հիմքով էլ դասակարգվում են հոլովական զուգաձևերի տարատեսակները՝ **1. հոլովման զուգաձևեր**՝ ըստ եզակի սեռական-տրականի կազմության զուգաձևեր, որը պայմանավորված է ի հոլովման ընդլայնմամբ (սյան//սյունի, այգու//այգիի, սկեսրոջ//սկեսուրի, ծննդյան//ծննդի), **2. հոլովային զուգաձևեր**՝ թեք հոլովների՝ տարբեր վերջավորություններով զուգաձևեր (կղզուց//կղզիից, շարժմամբ//շարժումով, երջանկությամբ//երջանկությունով), **3. հիմքային զուգաձևեր**՝ թեք հոլովների՝ նույն վերջավորությամբ, բայց տարբեր հիմքերով զուգաձևեր (մարզիչի/մարզչի, օրից//օրվանից, գրչով//գրիչով, օրով//օրվանով, Լոռիում//Լոռում), **4. իմաստային զուգաձևեր**՝ բառի տարբեր իմաստներով պայմանավորված զուգաձևեր (օրի//օրվա, տարու//տարիի, ժամից//ժամվանից, գիշերով//գիշերվանով), **5. ռճական զուգաձևեր**՝ ռճական-արտահայտչական տարբեր նշանակություններով զուգաձևեր (սգո//սգի, դստեր//դուստրի, Լոռվա//Լոռու): Դրանք հանգամանորեն քննարկվում և նկարագրվում են հոդվածում:

Հոլովական զուգաձևերի առաջացումը և գործածությունը քերականական անընդհատ գործընթացներ են, որոնք հայերենի ձևաբանության այս բաժինը դարձնում են հայերենի քերականական համակարգի՝ տեղաշարժերով թերևս ամենից ավելի հարուստ շերտը:

Բանալի բառեր - զարգացում, հոլովական զուգաձևություն, հոլովման զուգաձևեր, հոլովային, իմաստային և ռճական զուգաձևեր, հնչյունափոխված և անհնչյունափոխ ձևեր, երկձևային

ՄՈՒՏՔ: Լեզվի բնականոն զարգացումը ուղեկցվում է տարբերակային ձևերի առաջացումով: Եվ դա արտահայտվում է լեզվի բոլոր մակարդակներում՝ հնչյունական-արտասանական համակարգից մինչև

շարահյուսական կառույցներ: Հոլովական գուգաձևերը¹ հոլովների տարբերակային ձևեր են, որոնք վերաբերում են բացառապես հոլովի ձևավորմանը՝ հոլովական ձևին, և որպես այդպիսին՝ հոլովական իմաստին առնչվում են այնքանով, որքանով արտահայտում են նույն կամ մոտ քերականական իմաստ(ներ): Այլ կերպ ասած՝ հոլովական գուգաձևերը լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ գտնվող ձևեր են կամ ձևաբանական հոմանիշներ:

Լեզվում տարբերակային ձևերի դասակարգման սկզբունքները մեծ չափով թելադրված են այն գործոններով, որոնք պայմանավորել են այդ ձևերի առաջացումը և զարգացումը: Դրանք լեզվի տարբերակարգակներում տարբեր են, բայց և երբեմն համընկնում են: Օրինակ՝ **ուղղախոսական-արտասանական** տարբերակների (ձայնեղ բաղաձայնների արտասանություն, շեշտադրություն, հնչյունափոխական իրողություններ ևն) ձևավորումը բացատրվում է առավելապես խոսակցական լեզվի ազդեցությամբ, իսկ **բառային տարբերակների** (անձնանվեր//անձնվեր, շնագայլ//գայլաշուն, հուզարտահայտչական//հուզարտահայտչական, գագաթաժողով//գագաթնաժողով ևն) առաջացումը արգասիք է գերազանցապես լեզվի ներքին օրինաչափությունների (բարեհնչություն, հակիրճություն, համաբանություն, էներգիայի տնտեսում ևն), ինչպես նաև խոսակցական լեզվի ու բարբառների անմիջական ազդեցության, մասամբ՝ նաև ավանդույթի: **Շարահյուսական գուգահեռ կառույցների** ծագման գործում գերիշխող է լեզվի զարգացման ներքին օրինաչափությունների և խոսակցական լեզվի դերը: Մասամբ դերակատարում ունեն նաև օտար ազդեցությունները:

Ձևաբանական գուգաձևությունների առաջացման «դրդապատճառը» նախ և առաջ խոսակցական լեզուն է: Զգալի է նաև լեզվի զարգացման ներքին օրինաչափությունների դերը, այսինքն՝ տեղաշարժի համապատասխանելիությունը լեզվի գործող կանոններին: Որոշ չափով դեր է խաղում նաև լեզվական ավանդույթը:

Հոլովական գուգաձևերի առաջացման պատճառները հիմնականում կապվում են խոսակցական լեզվի ազդեցությամբ կամ համաբանությամբ ի հոլովման ընդլայնման, իմաստային և ձևափոխական հոլովումների փոխներգործության, ավանդական հոլովաձևերի պահպանման և այլ գործոնների հետ:

Հարցին հայ քերականները պարբերաբար անդրադարձել են: Երևույթը կա՛մ քննարկվել է քերականական տարբերակային ձևերի տեսությամբ:

¹ Մովորաբար ամեն մի գոյական պատկանում է հոլովումներից որևէ մեկին: Մակայն կան գոյականներ, որոնք գուգահեռաբար կարող են պատկանել մեկ այլ հոլովման, այսինքն՝ կարող են հոլովվել երկու ձևով (երբեմն նաև երեք), օրինակ՝ *անկյուն – անկյունի // անկյան, կայսր – կայսեր // կայսրի, օր – օրի // օրվա, սկեսուր – սկեսուրի // սկեսրոջ, մահ-մահի // մահու // մահվան* ևն: Այս երևույթը կոչվում է **հոլովական գուգաձևություն**, իսկ տարբերակները՝ **հոլովական գուգաձևեր/գուգաձևություններ**:

յան ընդհանուր տիրույթում², կա՛մ հարցը ներկայացվել է հոլովների ու հոլովումների նկարագրությանը գուգահեռ³, կա՛մ էլ գուգաձևությունները տրվել են ըստ առանձին հոլովների կամ հոլովումների⁴: Բոլոր այս քննարկումներում առավել կամ պակաս չափով անդրադարձ է եղել նաև հոլովական գուգաձևերի առաջացման պատճառական հիմքերին: Ըստ այդմ՝ արվել են նաև որոշակի փորձեր՝ հոլովական գուգաձևությունները դասակարգելու ըստ այդ հիմքերի:

Մ. Աբեղյանը հոլովական գուգաձևերը նկարագրում է հոլովներն առանձին քննարկելիս: Անդրադառնում է հնից փոխանցված տարբերակներին, նաև նոր կազմություններին (հայելու//հայելիի, Անու//Անիի, Գարիբալդու//Գարիբալդիի, ընկերոջ//ընկերի, աներոջ//աների, սկետրոջ//սկետրի, ուսումի//ուսման նն), այդ թվում նաև հնչյունափոխվող և անհնչյունափոխ հիմքով ձևերին (ջուր-ջրրի, թուղթ-թըղթի; հիմք-հիմքի, լուր-լուրի, բջիջ-բջիջի նն)⁵: Սակայն դրանց տարբերական կամ դասակարգման փորձ ըստ էության չի արվում:

Գ. Զահուկյանը հոլովական «տատանվող գուգաձևերի» առաջացման համար նշում է երեք հիմնական գործոն՝ ձևական, իմաստային և պատմական: Վերջին դեպքում նա նկատի ունի «ավանդաբար հաստատված և համաբանությամբ ու միասնականացման տենդենցով պայմանավորված լեզվագործածությունը»⁶:

Հոլովական գուգահեռ ձևերի տարբերակման տեսական հակիրճ հարցադրում է արել **Է. Աղայանը**: Նա առաջարկում է սեռական-տրականի գուգաձևությունները կոչել **հոլովական գուգաձևեր** (ընկերոջ//ընկերի, անկողնու//անկողնի), իսկ մեր ըմբռնմամբ հիմքային տարբերակներով գուգաձևերը անվանում է «միևնույն ենթահոլովաձևի կամ հոլովաձևի **ազատ տարբերակներ**» (լեռից//լեռնից, լեռով//լեռնով, լեռում//լեռնում): Ըստ որում, առաջարկում է չնույնացնել այդ երկուսը, քանի որ ազատ տարբերակները ձևավորվում են ոչ թե տարբեր հոլովիչների, այլ տարբեր հիմքերի գործառությամբ. «ստացվում են ոչ թե միևնույն ձևային կամ ենթաձևային տարբեր ձևակների (*նկատի ունի հնչյունափոխված հիմքերը՝ Յու. Ա.*), այլ տարբեր ենթաձևայինների

² Տե՛ս **Մ. Աբեղյան**, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 334-348: **Ս. Աբրահամյան**, Ժամանակակից հայերենի քերականություն, Եր., 1975, էջ 58-71: **Է. Աղայան**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 274-306 նն:

³ Տե՛ս **Գ. Մևակ**, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 2009, էջ 253-261: **Ս. Աբրահամյան**, **Ն. Պատնայան**, **Հ. Օհանյան**, Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, հ. 2, Եր., 1974, էջ 81-105: **Ա. Մարգարյան**, Հայոց լեզվի քերականություն. ձևաբանություն, Եր., 2004, էջ 142-157:

⁴ Տե՛ս **Մ. Ասատրյան**, Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Եր., 1983, էջ 92-96: **Զ. Աղաջանյան**, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Եր., 2007, էջ 144-170: **Հ. Ղազարյան**, Հոլովական գուգաձևությունները անվանական համակարգում // ԱրՊՀ տեղեկագիր, Ստեփանակերտ, 2015, № 1, էջ 3-9:

⁵ Տե՛ս **Մ. Աբեղյան**, նշվ. աշխ., էջ 344-348:

⁶ **Գ. Զահուկյան**, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 168:

գործառույթյան հետևանքով»⁷: Ցավոք, հեղինակը հանգամանորեն չի քննարկում հիմքային տարբերակներով հոլովական գուգահեռ ձևերը. որպես ազատ տարբերակների օրինակ են ներկայացվում ընդամենը մեկ բառի հոլովաձևեր կամ ենթահոլովաձևեր, այն էլ այնպիսիք, որոնց եզրերից մեկի (լեռ-նից, լեռ-նով, լեռ-նում) գոյությունը և գործածությունը ժամանակակից հայերենում խիստ կասկածելի են. դրանք վաղուց հնացած և գործածությունից դուրս եկած ձևեր են: Եվ լեզվաբանի սուղ բացատրություններից դժվար է ենթադրել՝ արդյո՞ք ազատ տարբերակներ է համարում նաև հոլովական հիմքային մյուս տարատեսակությունները (ասենք՝ **հասկանիշի/հասկանշի, մարզիչի/մարզչի, օրով/օրվանով, ընկերով/ընկերոջով**): Եթե խոսքը, այսպես կոչված, հիմքային գուգաձևությունների մասին է, ապա այլ հեղինակներ (Ս. Աբրահամյան, Ա. Մարգարյան, Զ. Աղաջանյան և այլք) դրանք նկարագրում են ընդհանուր հոլովական գուգաձևությունների համակարգում:

Է. Աղայանը առանձնացնում է նաև գուգաձևերի այլ խմբեր՝ **գուգաձևեր ըստ կառուցվածքի** (բառի ձևով և տարբեր իմաստներով պայմանավորված գուգաձևեր (տարու//տարվա, ճաշի//ճաշվա նն), **գուգաձևեր ըստ ոճերի** կամ **ոճական գուգաձևեր** (կայսրի//կայսեր, ընկերի//ընկերոջ, քրոջ//քվոր նն)⁸:

Մ. Ասատրյանը ժամանակակից հայերենում գուգաձևությունների առկայությունը բացատրում է երեք գործոններով՝ **1. ի** հոլովման գերիշխող դիրքով՝ մյուս հոլովումների մի զգալի մասին փոխարինելու նրա կարողությամբ, **2. ձևային**, իմաստային և ձևաիմաստային հոլովումների փոխներգործություններով, **3. գրաբարյան** գուգահեռ հոլովական ձևերի (պատմական հոլովումների) առկայությամբ: Դրանցից հիմնականը համարում է առաջինը՝ **ի** հոլովման գերիշխող դիրքը⁹: Լեզվաբանի այս շատ արժեքավոր բացատրություններում, սակայն, խոսքը ավելի շատ գուգաձևերի առաջացման գործոնների մասին է, քան դրանցով պայմանավորված գուգաձևերի հնարավոր տեսակների կամ տարատեսակությունների: Բացի այդ, լեզվաբանը հետագա շարադրանքում հոլովական գուգաձևերը ներկայացնում է ոչ թե իր կատարած բաշխումով, այսինքն՝ ըստ վերը նշված գործոնների, այլ հնարավոր գուգաձևերը պարզապես թվարկում է հոլովումները առանձին ներկայացնելիս:

Սկզբունքորեն ընդունելով այս վերլուծությունների և բացատրությունների գիտական կարևորությունը՝ մենք փորձել ենք առավել համակողմանի և ամբողջական ներկայացնել գրական արևելահայերենի անվանական հոլովման համակարգում հոլովական գուգաձևությունների արտահայտության, այսպես կոչված, **խմբերը կամ տեսակները**՝ ելնելով դրանց առաջացման և զարգացման գործոններից¹⁰: Մեր այս դասա-

⁷ Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 276-277:

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 277-278:

⁹ Տե՛ս Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 92:

¹⁰ Չենք անդրադարձել այլևայլ ձեռնարկներում, մենագրություններում և ուսումնա-

կարգումը, կարծում ենք, ներառում է հոլովական գուգաձևությունների բոլոր դրսևորումները և որոշակիորեն մատնանշում է դրանց զարգացման միտումները:

Չխախտելու համար լայն գործածություն ունեցող տերմինները չփոփոխելու ավանդույթը՝ մենք պահպանել ենք **հոլովական գուգաձևություն** տերմինը՝ դրանում ներառելով գուգաձևերի հինգ խումբ կամ տեսակ՝ **1. հոլովման գուգաձևեր**՝ ըստ եզակի սեռական-տրականի կազմության գուգաձևեր, որը պայմանավորված է ի հոլովման ընդլայնմամբ (սյան/սյունի, այգու/այգիի, տալոջ/տալի, սկեսարոջ/սկեսարի, ծննդյան//ծննդի, ծնկան//ծնկի), **2. հոլովային գուգաձևեր**՝ թեք հոլովների՝ տարբեր վերջավորություններով գուգաձևեր (այգուց//այգիից, կղզուց//կղզիից, անկողնուց//անկողնից, շարժմամբ//շարժումով, երջանկությամբ//երջանկությունով), **3. հիմքային գուգաձևեր**՝ թեք հոլովների՝ նույն վերջավորությամբ, բայց տարբեր հիմքերով գուգաձևեր (մարզիչի/մարզչի, օրից//օրվանից, գրչով//գրիչով, օրով//օրվանով, Լոռիում//Լոռում). այս տեսակի մեջ պայմանականորեն ներառել ենք ազատ տարբերակներ համարվող ձևերը, **4. իմաստային գուգաձևեր**՝ բառի տարբեր իմաստներով պայմանավորված գուգաձևեր (օրի//օրվա, տարու//տարիի, ժամից//ժամվանից, ժամանակից//ժամանակվանից, ճաշի//ճաշվա, գիշերով//գիշերվանով), **5. ոճական գուգաձևեր**՝ ոճական-արտահայտչական տարբեր նշանակություններով գուգաձևեր (սգո//սգի, դստեր//դուստրի, հրո//հրի, անձանց //անձերի, Լոռվա//Լոռու, Շուշվա//Շուշիի):

ՀՈԼՈՎՄԱՆ ԶՈՒԳԱԶԵՎԵՐ: Հայտնի է, որ ի-ն ընդհանրական հոլովում է. ժամանակակից հայերենում այս հոլովմամբ են հոլովվում գոյականների մեծագույն մասը, փոխանուն գոյականները և այլ հոլովման ենթարկվող գոյականների մի մասը: Ի հոլովումի գերիշխանության ծավալման՝ որպես հոլովական գուգաձևությունների առաջացման հիմնական պատճառի հիմքում ընկած է վերջին գործոնը, այն է՝ **այլ հոլովման ենթարկվող գոյականների մի մասը գուգահեռաբար հոլովվում է նաև ի հոլովմամբ**. գնալով ավելի ու ավելի է ընդլայնվում ի հոլովումի քերականական դաշտը՝ հոլովական ձևերի մեջ առաջ բերելով նորանոր գուգահեռ կազմություններ: Սրա դրսևորման հիմնական ոլորտը եզակի սեռական-տրականն է, այլ կերպ ասած՝ մենք գործ ունենք **հոլովման գուգաձևեր** ենթատեսակի հետ: Ըստ որում, դա հավասարապես չի դրսևորվում բոլոր հոլովումների պարագայում: Առավել ակտիվ է **ու>ի**

սիրություններում որպես գուգաձևեր նշվող քերականական այն կազմություններին, որոնք արդի գրական արևելահայերենում անգործածական են, ներբարբառային են կամ խստորեն հնացած (*աներ-անոր/աների, անորից, տեգր-տագրոց, սկեսուր-սկեսոր//կեսոր, լեռ-լեռնի, ընկեր-ընկերի, անկողին-անկողնի, ամուսին-ամուսնի, Մոչի-Մոչու, Գորի-Գորու, Անի-Անու, հոգնակի-հոգնակու, Շուշի-Շուշում, մուկ-մկնով, գարունք-գարունքվա, աշունք-աշունքվա, տատի-տատու, եղեռն-եղեռնու, երեխա-երեխու, շուրթ-շրթան, դուռ-դռի, կոշիկ-կոշկի, ճիչ-ճչի, լինգ-լնգի, երեկո-երեկոյվա* նն), բացի այն դեպքերից, երբ անհրաժեշտ է եղել դրանց գործառական-ոճական ինչ-ինչ տարբերություններ նշելը:

փոխանցումը. **ու** հոլովման ենթարկվող գոյականների մեծ մասը սեռական-տրականը կազմում է նաև **ի** վերջավորությամբ, ինչպես՝ *Գյումրի-Գյումրու//Գյումրիի, Լոռի-Լոռու//Լոռիի, Մեղրի-Մեղրու//Մեղրիի, Էրեբունի-Էրեբունու//Էրեբունիի; Աղասի-Աղասու//Աղասիի; հայելի-հայելու//հայելիի, բանալի-բանալու//բանալիի, ապակի-ապակու//ապակիի, մատանի-մատանու//մատանիի, կանաչի-կանաչու//կանաչիի, նարդի-նարդու//նարդիի, ոսկի-ոսկու//ոսկիի, խինկալի-խինկալու//խինկալիի:*

Մի շարք դեպքերում նկատելիորեն ակտիվանում են **ի**-ով կազմությունները (*այկալի-այկալիի, ածելի-ածելիի, այրի-այրիի, ապառնի-ապառնիի, հոգնակի-հոգնակիի, պատվելի-պատվելիի, սոնի-սոնիի, ունելի-ունելիի* ևն), թեև դրանց մի մասի համար գործածական են եղել **ու**-ով ձևերը:

Նույնիսկ կարելի է պնդել, որ արդի գրական արևելահայերենում **ի** վերջամասնիկ ունեցող օտար և հայերեն հասուկ գոյականների մեծ մասի համար առավել սովորական է **ի**-ով տարբերակը: Այսպես՝ *Արածանի-Արածանիի//Արածանու, Արենի-Արենիի//Արենու, Արգնի-Արգնիի//Արգնու, Արտենի-Արտենիի//Արտենու, Բերկրի-Բերկրիի//Բերկրու, Բջնի-Բջնիի//Բջնու, Նոր Գեղի-Նոր Գեղիի//Նոր Գեղու, Շուշի-Շուշիի// Շուշու, Պտղնի-Պտղնիի//Պտղնու, Փարպի-Փարպիի//Փարպու, Գորի-Գորիի//Գորու, Ագապի-Ագապիի//Ագապու, Պագանի-Պագանիի//Պագանիու, Ջելենակի-Ջելենակիի//Ջելենակու, Նավալնի-Նավալնիի//Նավալնու, Քառնեգի-Քառնեգիի//Քառնեգու¹¹:*

Որոշ ակտիվություն են հանդես բերում նաև **ան>ի, ոջ>ի, յան>ի, ա>ի** փոխանցումները: Այսպես.

ԱՆ>//Ի — *ծունկ-ծնկան//ծնկի, բուռ-բռան//բռի, նուռ-նռան//նռուի, ձուկ-ձկան//ձկի, ծոռ-ծոռան//ծոռի, հարցում-հարցման//հարցումի, մերձեցում-մերձեցման//մերձեցումի,*

ՅԱՆ>//Ի — *կորուստ-կորստյան//կորստի, փախուստ-փախստյան//փախուստի, գալուստ-գալստյան//գալստի, հանգիստ-հանգստյան//հանգստի,*

Ա>//Ի — *սյուն-սյան//սյունի, ձյուն-ձյան//ձյունի, արյուն-արյան//արյունի, անուն-անվան//անունի, անկյուն-անկյան//անկյունի,*

ՈՋ>//Ի — *բուժքույր-բուժքրոջ//բուժքույրի, տանուտեր-տանուտիրոջ//տանուտերի, տալ-տալոջ//տալի, սկեսուր-սկեսարոջ//սկեսուրի, տեգր-տեգրոջ//տեգրի:*

Հոլովման առանձին զուգաձևերի հիմքը գրական լեզվի ավանդույթն է (աստծո//աստծո, ձմռան//ձմեռվա, ամռան//ամառվա) կամ խոսակցական ու բարբառային ձևերի փոխներգործությունը (սկեսարոջ//սկեսար//կեսար, աներոջ//անոր, մահվան//մահու):

¹¹ Որոշ անձնանուններ, որոնք տևական ժամանակ հայերենում գործածական են, արդի արևելահայերենում առավելապես գործադրվում են **ու** հոլովմամբ: Օրինակ՝ ըստ **ԱՐԵՎԱԿԻ** տվյալների **Գորկի** անձնանվան **Գորկիի** ձևը 18 տեքստում (հիմնականում արևմտահայերեն) ունի 88 գործածություն, **Գորկու** ձևը՝ 499/1786: Կամ՝ **Ֆիրդուսի-Ֆիրդուսու**՝ 66/145, **Ֆիրդուսիի**՝ 13/14, **Նիզամի-Նիզամու**՝ 23/43, **Նիզամիի**՝ 17/27:

ՀՈՒՆՎԱԿԱՆ ԶՈՒԳԱԶԵՎԵՐ: Հոլովական զուգահեռ վերջավորությունների գոյությամբ պայմանավորված՝ հոլովային զուգաձևեր ունեն սեռական-տրականը, բացառականը և գործիականը: Ներգոյականը ունի արտահայտության միայն մեկ ձև՝ մեկ վերջավորություն՝ **-ում**, հետևաբար չունի զուգաձևությունների այս տեսակը: Ինչ վերաբերում է սեռական-տրականի հոլովային տարբերակներին, ապա դրանք, ըստ էության, նաև **հոլովման զուգաձևեր** են (որքանով որ հայերենի անվանական հոլովման համակարգում հոլովումը որոշվում է եզակի սեռական-տրականի կազմությամբ) և որպես այդպիսիք՝ վերը դիտարկվեցին:

Բացառական հոլովը, հայտնի է, ժամանակակից հայերենում կազմվում է **-ից** և **-ուց** վերջավորություններով: Առավել կենսունակ է առաջինը, քանի որ երկրորդ վերջավորություն են ստանում սահմանափակ թվով գոյականներ. ընդհանուր առմամբ **-ուց**-ով բացառական են կազմում **ու** հոլովման պատկանող գոյականները (այգի-այգու-այգուց, կղզի-կղզու-կղզուց, որդի-որդու-որդուց, ամուսին-ամուսնու-ամուսնուց, մարդ-մարդու-մարդուց, աստված-աստծու-աստծուց ևն), որոնք մեծ մասամբ **ի**-ով վերջավորվող գոյականներ են: Այս գոյականների բացառականում գնալով ակնհայտորեն ակտիվանում է **-ից** հոլովակերտը, որը ավելանում է բառի ուղիղ ձևին, և արդյունքում ունենում ենք հոլովական զուգաձևեր՝ առավել կամ պակաս գործածականությամբ, ինչպես *ուղի-ուղուց/ուղիից, ապակի-ապակուց/ապակիից, կղզի-կղզուց/կղզիից, գինի-գինուց/գինիից, Վեդու-Վեդուց/Վեդիից, Լոռի-Լոռուց/Լոռիից, Գյումրի-Գյումրուց/Գյումրիից, Քենեղի-Քենեղուց/Քենեղիից* ևն: Գործածական որոշակի հաճախականություն ունի նաև **անկողին** բառի բացառականի (անկողնուց) զուգահեռ տարբերակը՝ **անկողնից** (ըստ ԱՐԵՎԱԿ-ի տվյալների՝ 322 համատեքստ, 151 տեքստ), օրինակ՝ «Վերջապես բժիշկը թույլ տվեց վեր կենալ **անկողնից**», «Նա **անկողնից** այլևս վեր չէր կենալու», «**Անկողնից** վերցրեց վերմակն ու գցեց իր վրա» ևն: Նույնը չենք կարող ասել **ամուսին** բառի **ամուսնից** տարբերակի մասին. այն գրեթե դուրս է եկել գործածությունից՝ որպես խոսակցական-բարբառային ձև:

Գործիական հոլովը, հայտնի է, կազմվում է **-ով** և **-բ** վերջավորություններով: Առավել կենսունակ է առաջինը: **-Բ** վերջավորություն են ստանում սահմանափակ թվով գոյականներ. դրանք են՝ ա) **-ություն** ածանց ունեցող գոյականները՝ **հանդիսություն-հանդիսությամբ, ազգություն-ազգությամբ, հիասթափություն-հիասթափությամբ** ևն, բ) **-ում** ածանց ունեցող գոյականների գերակշիռ մասը՝ **զարգացում-զարգացմամբ, ձերբակալում-ձերբակալմամբ** ևն (բայց **սպասում-ով, հանդիպում-ով, դիմում-ով** ևն), գ) **արյուն, անկյուն, անուն** գոյականները՝ **արյուն-արյան-արյամբ, անկյուն-անկյան-անկյամբ, անուն-անվան-անվամբ**:

Նշված գոյականները սովորաբար ունենում են նաև **-ով** վերջավորությամբ գուգաձևեր՝ ուղղականի հիմքով կազմված՝ *հանդիսություն-հանդիսությամբ//հանդիսությունով, ազգություն-ազգությամբ//ազգությունով, զարգացում-զարգացմամբ//զարգացումով, ձերբակալում-ձերբակալումով//ձերբակալմամբ, ցասում-ցասմամբ//ցասումով, գրանցում-գրանցմամբ//գրանցումով, հիացում-հիացմամբ//հիացումով, արյուն-արյամբ//արյունով, անկյուն-անկյամբ//անկյունով, անուն-անվամբ//անունով* ևն: Դրանք դրսևորում են գործառական առավել կամ պակաս ակտիվություն: Այդ մասին կխոսվի իր տեղում:

Հոլովային գուգաձևերի առաջացման, այսպես կոչված, հիմունքը բացառական և գործիական հոլովների կազմության մեջ ուղղականի հիմքով ձևերի (կղզի-կղզի+ից, շարժում-շարժում+ով, ազգություն-ազգություն+ով) զարգացումն է: Այդ երևույթը (հիմքակազմության մեջ ուղիղ ձևերի պահպանումը) արդի հայերենի ձևակազմության մեջ գործող օրինաչափությունների դրսևորումներից է:

ՀԻՄՔԱՅԻՆ ՉՈՒԳԱԶԵՎԵՐ: Սրանք կազմվում են հիմքային երկու տարբերակների գուգաբանությամբ. **ա) հնչյունափոխված և անհնչյունափոխ** հիմքեր¹², **բ) միաձևույթ և երկձևույթ** հիմքեր¹³:

ա) Հնչյունափոխված և անհնչյունափոխ հիմքեր: Արդի հայերենի և առհասարակ լեզուների բառակազմության և ձևակազմության մեջ միտում կա անհնչյունափոխ հիմքերի զարգացման ու ծավալման¹⁴: Հնչյունափոխված հիմքային տարբերակում սովորաբար հնչյունափոխվում է հիմքի ներփակ ձայնավորը: Հիմքային այս գուգաձևությունները բնորոշ են ինչպես սեռական-տրականին, այնպես էլ մյուս թեք հոլովներին¹⁵: Որպես կանոն, սեռական-տրականում միևնույն գոյականի հնչյունափոխվող հիմքը պահպանվում է նաև մյուս թեք հոլովներում:

¹² Բուն իմաստով, իհարկե, սրանք դժվար է համարել հոլովական գուգաձևեր, քանի որ ձևավորվում են ոչ հոլովակազմիչ միջոցներով, այսինքն ոչ ձևաբանական փոփոխություններով. փոփոխվում է հիմքը, սակայն համակարգային նկարագրության ու նաև ուսուցման մեթոդաբանական առումներով, կարծում ենք, այս տեսակի առանձնացումը կարող է ընդունելի տարբերակ համարվել, այնպես, ինչպես հիմքային գուգաձևությամբ հոլովական մյուս տարբերակների դեպքում է *օրից/օրվանից, մեզնից/մեզանից, ձեզնով/ձեզանով* ևն:

¹³ Այս տերմինները (միաձևույթ և երկձևույթ) գործածված են պայմանականորեն՝ ձևերի տարբերակայնությունը նշելու համար, քանի որ գուտ ձևույթաբանական տեսանկյունից միաձևույթ կոչված հիմքը եզակի դեպքերում կարող է լինել նաև երկձևույթ, ինչպես բերված օրինակում է **ամռանից-ամռան-ից, ամառվանից-ամառվան-ից**:

¹⁴ Տե՛ս **Յու. Ավետիսյան**, Տեղաշարժեր ժամանակակից արևելահայերենի հնչյունափոխված և անհնչյունափոխ բառակազմական և ձևակազմական հիմքերում // «Հայագիտության գուգահեռականներում», Եր., 2021, էջ 125-160: **Մ. Ավետյան**, Անվանական հոլովման տիպաբանական զարգացումը հայերենում // «Հայագիտության հարցեր», Եր., 2021, № 1, էջ 223-236:

¹⁵ Անդրադառնալով հոլովման ժամանակ ներփակ ձայնավորների հնչյունափոխությանը՝ Մ. Աբեղյանը նույնպես արձանագրել է անհնչյունափոխ հիմքով կազմությունների զարգացումը հայերենում: «Ձայնափոխություն» խորագրի տակ նա գրում է. «Այնպես որ հետզհետե պակասում է **ՈՒ, Ի** ձայնավորի սղումը հոլովման ժամանակ» (**Մ. Աբեղյան**, նշվ. աշխ., էջ 348):

Այսպես.

սեռական-տրական` *մարզչի/մարզիչի, գրչի/գրիչի, մանկան/մանուկի, բվի/բուի, սգի/սուգի, սնկի/սունկի, ծնկի/ծունկի, ձկի/ձուկի, Մարգսի/Մարգիսի,*

բացառական` *մարզչից/մարզիչից, գրչից/գրիչից, բուից/բվից, սնկից/սունկից, ծնկից/ծունկից, ձկից/ձուկից, Մարգսից/Մարգիսից,*

գործիական` *մարզչով/մարզիչով, գրչով/գրիչով, բվով/բուով, Մարգսով/Մարգիսով,*

ներգոյական` *գրչում/գրիչում, բջջում/բջիջում, եզրափակչում/եզրափակիչում, խորհրդում/խորհուրդում, ծաղկում/ծաղիկում* ևն:

Այս խմբի գուգաձևությունների հետաքրքիր դրսևորումներից են գործիական և ներգոյական հոլովների կազմության մեջ **ի**-ով վերջավորվող և **ու/ի** խառը հոլովման պատկանող գոյականների հիմքային տարբերակներով ձևերը¹⁶: Եթե բացառականի դեպքում գուգաձևությունը պայմանավորված է նաև հոլովակազմիչ վերջավորությամբ (ապակի-ապակ-**ուց**/ապակի-**ից**, այգի-այգ-**ուց**/այգի-**ից**), ապա գործիականի և ներգոյականի պարագայում միակ գործոնը հիմքային հնչյունափոխված և անհնչյունափոխ տարբերակներն են, ինչպես` *այգով/այգիով, ապակով/ապակիով, կղզով/կղզիով, գինով/գինիով, փռչով/փռչիով, Լոռով/Լոռիով, Էրեբունով/Էրեբունիով; այգում/այգիում, ապակում/ապակիում, կղզում/կղզիում, գինում/գինիում, փռչում/փռչիում, Լոռում/Լոռիում, Էրեբունում/Էրեբունիում* ևն¹⁷:

բ) Միաձևույթ և երկձևույթ հիմքեր: Հիմքային գուգաձևությունների տարատեսակության աղբյուր են բացառական, մասամբ նաև գործիական հոլովների կազմության մեջ միաձևույթ և երկձևույթ հիմքերը, որոնք ձևավորվում են ուղղական և սեռական-տրական հոլովներից, այսինքն` հենց այդ հոլովաձևերը ծառայում են որպես գուգաձևության հիմք: Մա բնորոշ է հիմնականում ժամանակ ցույց տվող գոյականներին, ինչպես` *ամսից/ամսվանից, ժամանակից/ժամանակվանից, առավոտից/առավոտվանից, կեսօրից/կեսօրվանից, օրից/օրվանից, գիշերից/գիշերվանից, շաբաթից/շաբաթվանից, ժամից/ժամվանից; ա-*

¹⁶ Խոսքը առավելապես հոլովակազմիչ նույն վերջավորությամբ բաղադրվող հիմքային տարբերակների մասին է: Ընդունված չէ հերթագայությունը (**ու/ի, ա/ն, ք/ց** ևն) բուն իմաստով հնչյունափոխություն համարել, քանի որ քերականական փոփոխություն է, և դրանցով բաղադրված հիմքերը (ուղի-ուղու+ց/ուղի+ից, ուղ+ով/ուղի+ով, ապակի-ապակ+ով/ապակի+ով) միայն պայմանականորեն կարող են համարվել հնչյունափոխական տարբերակներ, թեև հայտնի է նաև, որ բառարանային սահմանումով, ի վերջո, լայն առումով այս դեպքում նույնպես գործ ունենք հնչյունափոխության հետ (տե՛ս **Չ. Պետրոսյան**, Հայերենագիտական բառարան, Եր., 1987):

¹⁷ Առանձին բառերի դեպքում, պայմանավորված հիմք բառի բազմիմաստությամբ, առաջ են գալիս իմաստային տարբերություններ: Օրինակ իմաստային որոշակի տարբերություն կա *գինիով և գինով* գուգաձևերի միջև. երկրորդը կարող է ընկալվել նաև «գինովցած» իմաստով: Կամ` *խորհրդից և խորհուրդից, խորհրդով և խորհուրդով, խորհրդում և խորհուրդում* գուգաձևերից երկրորդներում ավելի է շեշտվում «կարգադրիչ կամ խորհրդակցական մարմին» իմաստը:

առավոտով//առավոտվանով, կեսօրով//կեսօրվանով, օրով//օրվանով, գիշերով//գիշերվանով, շաբաթով//շաբաթվանով: Տարբերակների միջև կան իմաստային և գործառական որոշակի տարբերություններ. մի քանիսը փոխանուն գործածություններ են: Դրանք կքննարկենք հոլովական գուգաձևությունների առաջացման իմաստային և գործառական պատճառները դիտարկելիս:

Հիմքային գուգաձևեր ունեն նաև այլ հոլովումների պատկանող որոշ գոյականներ, ինչպես՝ *ամռանից//ամառվանից, ձմռանից//ձմեռվանից, աներից//աներոջից, տալից//տալոջից; աշունով//աշնանով, գարնանով//գարնանով, ընկերով//ընկերոջով, աներով//աներոջով, ամուսինով//ամուսնով, անկողինով//անկողնով* ևն:

Դրանք առավելապես ավանդությունով փոխանցված կազմություններ են, որոնք մասամբ տարբերվում են նաև իրենց գործառական-ոճական նրբերանգներով:

ԻՄԱՍՏԱՅԻՆ ԶՈՒԳԱԶԵՎԵՐ: Հոլովական գուգաձևությունների առաջացման կամ, ավելի ստույգ, դրանց գործառման կարևոր պատճառներից մեկը հոլովական տարբերակների միջև եղած իմաստային տարբերություններն են, որոնք պայմանավորված են բառիմաստով և առաջ են բերում **իմաստային հիմքով գուգաձևեր**: Ժամանակի ընթացքում տարբերակներից մեկը ձեռք է բերում նոր նրբիմաստ(ներ) և հատուկ գործածության մեջ դառնում է մյուս տարբերակով չփոխարինվող: Սա իհարկե հատուկ է հոլովաձևերի որոշակի խմբերի:

Իմաստային և գործառական հիմունքով որոշակի զանազանություն ունեն, օրինակ, ժամանակ ցույց տվող գոյականների մի մասի սեռական-տրականի ձևերը (տարու//տարվա, ժամի//ժամվա, առավոտի//առավոտվա, օրի//օրվա): Այսինքն՝ լեզվում դրանք պահպանվում են որպես տարբերակային ձևեր այն պարզ պատճառով, որ ունեն իմաստային տարբերություններ: Այսպես, օրինակ՝ նշված բառերը սեռական-տրականում ստանում են **վա**, եթե հանդես են գալիս որպես ժամանականիշ բառեր. այլ նշանակությամբ դրանք սովորաբար ենթարկվում են **ի** հոլովման, ինչպես՝ «Մեկ **օրվա** ընթացքում լուրջ փոփոխություններ կատարվեցին», «Այդ **օրվա** տպավորության տակ եմ» և «Մի տնից չենք, մի **օրի** ենք», «Այս **ի** նշ **օրի** եք հասել». առաջին երկու նախադասություններում **օր**-ը իր բուն՝ ժամանականիշ իմաստով է գործածված, իսկ մյուս երկուսում նշանակում է վիճակ, դրություն: Այլ օրինակներ՝ «Աշխատանքն ավարտեցինք մի քանի **ժամվա** ընթացքում» և «Այս **ժամին** **ի** նշ եք անում այստեղ», «Խոսում էին հին **ժամանակվա** բաներից», «Դա տեղի ունեցավ ճիշտ **ժամանակին**», «Պապիիս **տարուն** շատերն էին եկել գյուղ», «Այդ վայրերում **տարվա** մեծ մասը ձյուն է»: **Առավոտ** բառի սեռական-տրականի **ի**-ով տարբերակը առավելապես որոշային նշանակություն ունի, ինչպես՝ «լույս առավոտի»:

Վա հոլովման պատկանող ոչ բոլոր բառերի հոլովական տարբերակներն են միշտ հանդես բերում իմաստային զանազանություն: Օրինակ՝ երբեմն ժամանակի իմաստ են արտահայտում **ամիս**, **ժամանակ** և **ժամ** բառերի նաև **ի**-ով ձևերը, ինչպես՝ «Երկու **ամսվա** ընթացքում մեկ անգամ ենք հանդիպել», «**Ամսի 20**-ին հանդիպելու ենք», «**Ժամանակին** այդպես չէին վարվում», «Դրանք Բագրատունիների **ժամանակվա** շինություններ են»: Այսինքն՝ զուգաձևությունների տարբերությունը այս դեպքում զուտ կապակցական է, ինչպես, օրինակ, նաև մի քանի այլ բառերի պարագայում՝ *հանուն սիրո* և *հավատում եմ քո սիրուն* (այս ձևը գրեթե առանց բացատրության հանդես է գալիս բայական խնդրանությամբ՝ որոշյալ առումով), *կեսօրին կհանդիպենք* և *կեսօրվա հանգստից հետո*, *մահու չափ*, *մահվան օրը* և *տո մահի տարած* են:

Նույն բառերի՝ բացառականի ու գործիականի զուգաձևերը (օրից //օրվանից, ամսից//ամսվանից, շաբաթից//շաբաթվանից, կեսօրից//կեսօրվանից, ժամանակից//ժամանակվանից, գիշերով//գիշերվանով, օրով//օրվանով, ցերեկով//ցերեկվանով) նույնպես ունեն իմաստային հետաքրքիր դրսևորումներ: «Երբ բառը գործածվում է ժամանակի պարագայի իմաստով և պատասխանում է **ե՞րբ**, **երբվանի՞ց** հարցերին, բացառականը սովորաբար կազմվում է տրականի հիմքով: Այս դեպքում սովյալ գոյականը կա՛մ որոշիչ չի ունենում, կա՛մ ունենում է ժամանակի հերթականություն արտահայտող որոշիչներ (անցյալ, նախորդ, այս, այն, հաջորդ և այլն): Իսկ երբ ժամանակի անունը կիրառվում է սոսկ որպես ժամանակի միավոր և ունենում է թվականով կամ չափ ցույց սովող այլ բառերով արտահայտված որոշիչներ, բացառականը կազմվում է ուղղականի հիմքով: Օրինակ՝ *Անցյալ օրվանից լավ է զգում*: Բայց՝ *Երեք օրից հետո լավ կզգա*: *Նախորդ տարվանից ոչ մի լուր չունեն*: Բայց՝ *Երկու տարուց ավելի է, ինչ ոչ մի լուր չունեն*»¹⁸:

Բացառական հոլովի երկձևությո կազմությունները (վաղվանից, տարվանից, այսօրվանից ևն) միաժամանակ փոխանուն սեռական-տրականի (փոխանուն հատկացուցիչի) հոլովաձևեր են, օրինակ՝ «Ազգագրական երգի փառատունը կսկսվի **այսօրվանից**» (ոչ փոխանուն), բայց «Երեկվա ներկայացումը **այսօրվանից** ավելի հետաքրքիր էր» (փոխանուն): Երկձևությո հիմքով գործիականները (ցերեկվանով, գիշերվանով, առավոտվանով, երեկվանով, կեսօրվանով ևն) ընդունված է համարել փոխանուններ, քանի որ դրանք ժամանակ ցույց չեն տալիս, նշանակում են «գիշերվա, ցերեկվա ևն ինչ-որ բանով» և պատասխանում են ոչ թե **ե՞րբ**, այլ **ինչո՞վ** հարցին¹⁹: Օրինակ՝ «Գնացքով եմ մեկնելու քաղաք. **առավոտվանով** կգնամ, **ցերեկվանով** կամ **գիշերվանով** կվերադառնամ»: Միայն փոխանվանական կիրառություն ունեն նաև այդ կարգի բառերի եզակի ներգոյականի և հոգնակիի՝ **վա** հոլովմամբ ձևե-

¹⁸ Ս. Աբրահամյան, Ն. Պատնասյան, Հ. Օհանյան, նշվ. աշխ., էջ 96:

¹⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 96-97:

րը, օրինակ՝ «Եկող տարվա ծրագիրն ավելի հարուստ է, քան այս տարվանը. եկող տարվանում հետաքրքիր նախագծեր շատ կան, այս տարվանում՝ ոչ, ուրեմն ասպարեզ կմտնենք եկող տարում»²⁰:

Շաբաթ բառը ժամանականիշ այն բառերից է, որի սեռական-տրականի և բացառականի տարբերակները կարող են միաժամանակ արտահայտել նաև ժամանակի իմաստ, ինչպես՝ «Մեկ **շաբաթից** կվերադառնամ», «Այս **շաբաթվանից** սկսած՝ գործի ենք», «**Շաբաթվա** ո՞ր օրն էս ազատ» (**յոթնօրյա ժամանակի** իմաստով են), բայց՝ «Հինգշաբթի հարմար չէ, իսկ ուրբաթի և **շաբաթի** մասին կխոսենք», «Ուրբաթը **շաբաթից** ուշ եկավ» (**շաբաթ օրվա** իմաստով են): Հայտնի է նաև, որ **շաբաթ**-ը որպես օրերից մեկի անուն, ինչպես շաբաթվա մյուս օրերի անունները (երկուշաբթի, չորեքշաբթի ևն)՝ գործիական և ներգոյական չունի, բայց որպես յոթնօրյա ժամանակի միավոր՝ ունի, ինչպես «Մեկնեցի երկու **շաբաթով**», «Մեկ **շաբաթում** չես հասցնի գործն ավարտել»:

Առաջ բառը ունի **վա** և **ի** հոլովիչով սեռական-տրականի տարբերակներ (առաջվա//առաջի) և դրանցից կազմված բացառականի ու գործիականի զուգաձևեր (առաջից//առաջվանից, առաջով//առաջվանով). **վա**-ով ձևերը ժամանականիշ են, իսկ **ի**-ով ձևերը տարածական իմաստ են արտահայտում: Համեմատաբար գործածական են **առաջվա** և **առաջվանից** հոլովաձևերը (մեկ ժամ **առաջվա** խոսքերը, **առաջվա** նման, **առաջվանից** տարբեր):

Իմաստային հիմունքով են զուգաձևեր կազմում նաև այլ հոլովումների պատկանող մի շարք բառեր՝ «Հիվանդանոցում այդ **քույրին** բոլորը ճանաչում են» / «Հատուկ սեր ուներ իր ավագ **քրոջ** նկատմամբ», «Փողոցը կոչեցին Ազնավուրի **անունով**//**անվամբ**» / «Ես շատ հայտնի **անունով** մարդ է», «Քանի՞ **անգամից** կարող ես այս քարերը տեղափոխել» / «Մի **անգամվա** համար չարժե այդքան գումար ծախսել», «Քանի՞ **ընկերով** եք գնալու» / «Հպարտանում եր իր **ընկերոջով**»²¹:

ՈՃԱԿԱՆ ԶՈՒԳԱՁԵՎԵՐ: Իհարկե, գործառական կամ ոճական զանազանություններ ունեն գրեթե բոլոր հոլովական զուգաձևերը, քանի որ դրանց եզրերը ունեն ոճական տարբեր երանգավորումներ. մեկը

²⁰ Խոսակցական լեզվում երբեմն հանդիպում են նաև սեռականի կրկնակի վերջավորությամբ փոխանվանական ձևեր՝ *այսօրվանինից, երեկվանինից, այսօրվանինով, երեկվանինով*. «Ո՞նց անենք, որ այսօրվա օրը **երեկվանինից** լավ լինի», «Ընտիր ապրանք ա. անցյալ **տարվանինից** շատ ավելի լավն ա»:

²¹ Իմաստային հիմունքով զուգաձևության յուրօրինակ դրսևորում կարելի է համարել նույն անվան հատուկ և հասարակ տեսակների հոլովական ձևերը: Հայտնի է, օրինակ, որ **Գարուն, Գալուստ, Մանուկ, Ոսկի** հատուկ անձնանունները, հատկանվան իմաստային յուրահատկությամբ պայմանավորված, ենթարկվում են միմիայն **ի** հոլովման, ըստ որում, անհնչունափոխ հիմքակազմությամբ (Գարուն-Գարունի, Գալուստ-Գալուստի, Մանուկ-Մանուկի, Ոսկի-Ոսկիի), իսկ դրանց՝ համանուն հանդիսացող հասարակ անուն տեսակները պատկանում են այլևայլ հոլովումների՝ ըստ անհրաժեշտության ենթարկվելով հնչյունափոխության (գարուն-գարնան, գալուստ-գալստյան//գալուստի//գալստի, մանուկի-մանկան, ոսկի-ոսկու):

սովորաբար առավել գրական է, մյուսը՝ առավել խոսակցական (անկյունի/անկյան, բանալի/բանալու, թոռան/թոռի, հայելի/հայելու, կամրջի/կամուրջի, սկետուրից/սկեսրոջից, Լոռուց/Լոռիից նն), մեկը հնաբանություն է, մյուսը՝ համեմատաբար նոր կազմություն (դստեր/դուստրի, սգո/սգի, տիկնանց/տիկինների, անձանցից/անձերից, աստծո/աստծու, Կիլիկիո/Կիլիկիայի, Վանա/Վանի նն), մեկը գրական է, մյուսը՝ բարբառային (կաշվի/կաշու, կաշվից/կաշուց, սկետուրի/կեսուր, ընկերոջ/ընկերի, քրոջ/քվոր, Լոռի/Լոռու) նն:

Այս զուգաձևերի միջև իմաստային սկզբունքային տարբերություններ չկան: Կան ոճական-արտահայտչական տարբերություններ, որոնք ի հայտ են գալիս խոսքային մակարդակում՝ գործածության մեջ: Օրինակ՝ «Կաթողիկոսը զայրացած էր և ուզում էր նամակ գրել հոռոմների **կայսեր/կայսրին**»: Ընդգծված հոլովաձևերի միջև չկա իմաստային տարբերություն, բայց կա ոճական-արտահայտչական որոշ զանազանություն՝ **կայսեր** ձևը ակնհայտորեն ավելի գրական-գրքային է. որոշ հանդիսավորություն է հաղորդում խոսքին, ստեղծում է պատմական միջավայր: Նույնատիպ օրինակներ են հետևյալները՝ «Ապրի՛ր այնպես, որ արժանանաս **աստծո/աստծու** բարեհաճությանը», «Որովհետև **աստծո/աստծու** կամքը այս է», «Ֆրանսիան առևտրային հարաբերություններ է ունեցել **Կիլիկիայի/Կիլիկիո** հայոց թագավորության հետ», «Հրավիրված **տիկնանց/տիկինների** մի մասը չսպասեց ընթրիքին», «Բարի **լույսի/լուստ** հետ մի աքաղաղ մատաղ կանենք աստծուն», «Փշրվեց **հույսի/հուստ** վերջին նշույլը», «Նախագահի **մամլո/մամուլի** ասուլիսը շատ կարճ տևեց» նն: Եվ հակառակը՝ խոսակցական կամ բարբառային ձևերը խոսքը դարձնում են հասարակ, երբեմն՝ անմիջական ու մտերմիկ՝ «Տատը թրջոց դրեց **թոռի/թոռան** այրվող ճակատին», «Նույն **կաշուց/կաշվից** էր պատրաստված նրա կապարձը», «Ձեր **անունին/անվանը** մեռնեմ, ձեր արևին դուրբան», «Ես երգիչ **հրի**, սրի, շահ չունեմ քո սիրուց գատ...»//«Կրակ թափելով եղջյուրներից **հրո**»:

Հասկանալի է, որ գործառական նշանակությամբ պայմանավորված՝ նշված զուգաձևերի մի մասը ունի նաև զուտ կապակցական դեր, որը ձևավորվել է լեզվի զարգացման նախորդ փուլերում և փոխանցվել է ավանդույթով, ինչպես՝ *Կիլիկիո կաթողիկոսություն/թեմ/առաջնորդարան, Վանա լիճ/տառեխ/ծով/կատու, պատվո պահակ/լեզեռն/շքանշան, խնդրո առարկա, սգո արարողություն/սրահ, Լոռվա ձոր/դաշտ/սարահարթ/բնաշխարհ, Շուշվա աղցան/կոլոլակ, Գյումրվա խաշ/աղաթ/հարսանիք/քյալլա/«շլապկա», տիկնանց տիկին, առավոտ լուստ, ի սեր/փառք/մարդ աստծո, հրո ճարակ* նն:

Լեզվի զարգացման ընթացքում աստիճանաբար ու տևականորեն մշակվում ու հղկվում են կանոններն ու օրինաչափությունները: Դրանց հիմքում լեզվի զարգացման ներքին միտումներն են, որոնք բխում են մտքի արտահայտման միջոցները բարելավելու և զարգացնելու, մարդ-

կային հաղորդակցումը կատարելագործելու անհրաժեշտությունից: Այդ միտումների արգասիք են հոլովման զուգաձևություններում **ի** հոլովման ընդլայնումը, հոլովային և հիմքային զուգաձևերում բառի ուղիղ ձևի և անհնչյունափոխի հիմքերի զարգացումը, իմաստային և ռճական զուգաձևերի ընձեռած գործառական լայն հնարավորությունները. արտասանական էներգիայի տնտեսում, հաղորդակցման սեղմ և մատչելի «ուղիղ» լեզվական ձևերի զարգացում, արագ և ազդեցիկ խոսքի ձևավորում են: Լեզվական զուգաձևությունների առաջացումն ու փոփոխությունները լեզվի բնականոն զարգացման արդյունք են:

ЮРИЙ АВЕТИСЯН – Принципы и виды дифференциации флективных спряжений существительных в современной системе восточно-армянского литературного языка. – В ходе развития языка в звательной системе современного литературного восточно-армянского языка образуются и развиваются новые звательные варианты, порождающие звательные дуализмы. Причинами их возникновения являются масштабы доминирования глагола **ի (u)**, взаимопроникновения традиционно передающихся основ спряжений, лежащие в их основе параллелизма, в частности, развитие нефонетических базовых образований, параллельное употребление форм на смысловой и функционально-стилистической основе. На этом основании классифицируются типы словоизменительных форм: 1. Флективные спряжения по структуре родительного и дательного падежа единственного числа за счет расширения спряжения **ի (u)** (*սյան/սյունի, այգու/այգիի, սկեսրոջ/սկեսուրի, ծննդան/ծննդի*), 2. Спряжения основы с наклонными спряжениями с разными окончаниями (*կղզուց/կղզիից, շարժանք/շարժումով, երջանկությունք/երջանկությունով*), 3. Базовый параллелизм - наклонные перегибы с одинаковым окончанием, но разными базовыми спряжениями. (*մարզի/մարզի, օրից/օրվանից, գրչով/գրչով, օրով/օրվանով, Լոռիում/Լոռում*), 4. Смысловой параллелизм - параллелизм, обусловленный разным значением слова (*օրի/օրվա, տարու/տարիի, ժամից/ժամվանից, զիշերով/զիշերվանով*), 5. Стилистический параллелизм - параллелизм с разными стилистическими и экспрессивными показателями (*սգն/սգի, դասեր/դասարի, Լոռի/Լոռում*). Все это подробно обсуждается и описывается в статье.

Употребление словоизменительных спряжений представляет собой непрерывный грамматический процесс. Эта часть армянской морфологической системы, наряду с системой спряжения глаголов, делает ее, пожалуй, самым богатым разделом армянской грамматики.

Ключевые слова: развитие, флективное, параллельные формы, флективные спряжения, семантический, стилистический, основной, фонетический, нефонетический, диморфный

YURI AVETISYAN – The Principles and Types of Equivalent Forms of Declension in the Noun System of Modern Literary Eastern Armenian. – In the course of the development of the language in the vocative system of modern literary Eastern Armenian, new vocative variants are formed and developed, bringing forth vocative dualities. The reasons for their occurrence are the scope of the dominance of the **ի (i)** case, the interpenetrations of the traditionally transmitted equivalent forms of declension, the underlying declensions, and the development of non-phonetic based formations, and the parallel use of forms on a semantic and functional-stylistic basis. On this basis, the varieties of vocative equivalent forms are classified as follows: 1.

Equivalent forms of declension - according to the composition of the singular genitive case, which is conditioned by the expansion of the **ի (i)** equivalent form (այսն/այունի, այգու/այգիի, սկեսրոջ/սկեսուրի, ծննդան/ծննդի), 2. Conjugations of equivalent forms - oblique conjugations with different endings (կղզուց/կղզիից, շարժմամբ/շարժումով, երջանկությամբ/երջանկությունով), 3. Basic equivalent forms - oblique inflections with the same ending but with different basic equivalent forms (մարգիչի/մարգչի, օրից/օրվանից, գրչով/գրիչով, օրով/օրվանով, Լոռիում/Լոռում), 4. Semantic equivalent forms – they are conditioned by different meanings of the word (օրի/օրվա, տարու/տարիի, ժամից/ժամվանից, գիշերով/գիշերվանով), 5. Stylistic equivalent forms – they are with different stylistic-expressive meanings (սգո/սգի, դասեր/դուստրի, Լոռվա/Լոռու). Those are thoroughly discussed and described in the article.

The formation and use of case equivalent forms is a continuous grammatical process. This part of the Armenian morphological system, parallel with the verb conjugation system, probably makes it the richest field of the Armenian grammar.

Բանալի բառեր – կորոնավիրուսային բառապաշար, հաղորդակցական գործիք, նոր իրավիճակ, բժշկական տերմիններ, հանրաճանաչություն ստացած բառեր, ոճաարտահայտչական երանգավորում արտահայտող բառեր, ինքնամեկուսանալ, բառակապակցություն տերմիններ, դիպվածային նորակազմ բառեր, ոչ խոսքային միջոցներ

Յուրաքանչյուր լեզվի բառապաշար հարափոփոխ է, շարժուն՝ պայմանավորված հասարակական կյանքում տեղի ունեցող քաղաքական, գիտատեխնիկական, սոցիալական գործընթացներով, ինչպես նաև համաշխարհային իրադարձություններով, և լեզուն ընտրում է այդ ամենին արձագանքող բառապաշար:

Աշխարհին պատուհասած կորոնավիրուսային աղետին վերաբերող բառերը չէին կարող մուտք չգործել նաև մեր լեզու: «Քովիդ-19» հա-

մավարակով պայմանավորված՝ հասարակական կյանքում ստեղծվեց նոր իրավիճակ. մարդիկ ստիպված էին մեկուսանալ տանը, աշխատել և սովորել հեռավար, դադարեցնել միջանձնային և խմբային շփումները: Անհրաժեշտաբար լեզու թափանցած նոր բառերի իմաստները համապատասխանում են ստեղծված իրողություններին, հասարակության նոր պահանջմունքներին: Կորոնավիրուսի բռնկման ժամանակաշրջանում առաջացած նոր բառերն ու բառակապակցություններն էլ սույն հոդվածի ուսումնասիրության նյութն են:

Այս դեպքում «կորոնա» օտար բառույթի շուրջ համախմբված են այն լեզվատարբերը, որոնք կա՛մ նոր բառեր ու արտահայտություններ են, կա՛մ նոր փոխառություններ են, կա՛մ իմաստային նորաբանություններ են, որոնք լեզվակիրներին համար կամա թե ակամա դարձան հաղորդակցման միջոցներ: Քանի որ ասպարեզում հանգամանակից ուսումնասիրություն չկա, միայն թռուցիկ անդրադարձ է կատարվել այս ժամանակաշրջանի բառապաշարին¹, ուստի մեր նպատակն է ուսումնասիրել պանդեմիա-համավարակի ազդեցությունը մեր լեզվի վրա. ինչպես է մեր լեզուն արձագանքել նոր բառերի առաջացմանը, պարզաբանել այդ բառերի և արտահայտությունների կազմավորման առանձնահատկությունները, ինչպես են դրսևորվել դրանց ոճաարտահայտչական դերն ու նշանակությունը հայերենի լեզվական համակարգում, լեզվական միջոցներից բացի՝ վիրուսին առնչվող ոչ խոսքային ինչ միջոցներից են մարդիկ օգտվել համաճարակի ժամանակ:

Ուսումնասիրության համար նյութեր վերցրել ենք համացանցից, թերթերից, առողջապահության նախարարության պաշտոնական կայքէջից, ինչպես նաև Առողջապահության համաշխարհային կազմակերպության կայքէջից (ԱՀԿ)²: Բառերի մի մասը փոխառյալ տերմիններ են, մյուս մասը նորակազմ բառեր են, բառերի մեկ այլ խումբ լեզվում գոյություն ունեն, բայց ձեռք բերեց նոր՝ լրացուցիչ իմաստներ: Քանի որ այդ բառերը արտահայտում էին կորոնավիրուսային ժամանակաշրջանի իրողություններն ու երևույթները, բառերի այդ խումբը կոչվեց կորոնավիրուսային բառապաշար: Իսկ ինչո՞ւ կորոնավիրուս: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2020 թ. փետրվարին հայտարարեց, որ նոր վիրուսը պետք է կոչվի կորոնավիրուս, քանի որ 1968 թ. գիտնականները մանրադիտակով զննելիս վիրուսը տեսել էին արևային թագի տեսքով³, այնուհետև կորոնան թարգմանվեց թագ թագավարակ, թագավարակիչ, թագավիրուսակիր, թագաժահր: Ի դեպ, «կորոնա» բառը փոխառված է ռուսերենից, իսկ անգլերեն բառարաններ-

¹ Տե՛ս Մ. Սարգսյան, Ն. Խաչիբաջյան, «Կորոնա» բաղադրիչով նորակազմ բառերի քննություն, «Լեզու և լեզվաբանություն հանդես», № 1, 2021, էջ 69, Ա. Ղարսյան, Նոր բառեր և բառակապակցություններ արդի հայերենում՝ պայմանավորված ՔՈՎԻԴ-19-ով, «Լեզու և խոսք», № 1(1), 2021, էջ 76, «Նոր բառեր», Չ պրակ, Եր., 2021, էջ 91:

² Տե՛ս <https://hy.wikipedia.org/wiki/COVID-19>:


³ Տե՛ս [monitoring-group-report.pdf](#) :

րում թագ-crown-ն է: «Ռուս-հայերեն բառարանում» այսպես է բացատրված «КОРОН/А ի. 1. թագ, պսակ... 3. աստղգ. լուսապսակ, պսակ. солнечная - արևապսակ, արևի լուսապսակ»⁴:

Մեր նպատակն է բացահայտել նոր բառերը, քննել դրանց նոր իմաստները, վերլուծել և կատարել համեմատություն բժշկական այն տերմինների հետ, որոնք արձանագրված են եղել նախկինում:

Բառապաշարը հարստանում է, համարվում է նոր բառերով, իսկ ինչպես հայտնի է, բառապաշարի հարստացումը կատարվում է երկու ճանապարհով՝ ներքին և արտաքին: Արտաքին ճանապարհը տարբեր լեզուներից կատարված փոխառություններն են, ինչպես՝ քովիդ (COVID), QR կոդ, լոքդաուն(lockdown), դելտա շտամ (delta shtam), ալկոգել (alkogel) ևն, իսկ ներքին ճանապարհը լեզվի հնարավորություններով բառակազմության եղանակով, նոր բառեր կազմելն է, նաև լեզվի տարբեր փուլերից կատարված փոխառությունները (օրինակ՝ ժահր բառը, որը պարսկական ծագում ունի՝ zabar-թոյն⁵, գործածական է բարբառներում, նշանակում է թոյն, մահադեղ⁶): Այս արմատով են կազմվել մի շարք բառեր թագաժահր, թագաժահրակիր, պսակաժահր, թագաժահրախտ, ժահրախտ: «Գորոնա ժահրախտը ժահրային հիւանդութիւն մըն է» (horizonweekly. ca. 27. 01. 2020):

«Գորոնա» բառույթի շուրջը միավորված են լեզվական այն միջոցները, որոնք «կորոնա»-ի հետ ոչ միայն իմաստային զանազան հարաբերություններ են արտահայտում, այլև ոճաարտահայտչական հնարավորություններ են դրսևորում: Բացի այս, նշյալ իմաստային դաշտը լրացնում են ոչ խոսքային միջոցները. դրանք միավորված են նաև ըստ իրենց տարբեր գործառույթների:



⁴ Ա. Ս. Ղարիբջյան, Ռուս-հայերեն բառարան, Եր., 1977, էջ 401:

⁵ Տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 2, Եր., 2010, էջ 135:

⁶ Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.1, Եր., 1979, էջ 825:

Երբ կորոնավիրուսը նոր էր թափանցել մեր հասարակական կյանք, այդ երևույթին արագորեն արձագանքելու նպատակով կա՛մ փոխառության ճանապարհով, կա՛մ բառակազմության եղանակներով ստեղծվեցին նոր բառեր ու բառակապակցություններ, որոնք լրացրին բժշկական տերմինահամակարգը: Վիրուսի տարածմանը զուգընթաց՝ ստեղծվեցին նաև այնպիսի բառեր, որոնց միջոցով ընդգծվում էր հասարակական տարբեր խավերի վերաբերմունքը: Դրանք դիպվածային նորաբանություններ էին, որոնք վկայում էին մեր լեզվի բառակազմական մեծ հնարավորությունների մասին: COVID-19-ը թափանցեց հասարակական կյանքի տարբեր ոլորտներ՝ աշխատանքային, կրթական, անձնական, կենցաղային: Լեզուն բախվեց նոր իրողությունների, որոնք տեղի էին ունենում աշխարհում: Հաղորդակցական միջոցները ազդում են բառապաշարի վրա՝ on line, Zoom: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման շրջանում շատ բառեր են գրանցվել էլեկտրոնային բառարաններում, և ամեն տարի նոր բառեր են ստեղծվում՝ տվյալ տարին բնութագրող (2020-2021 թթ): Ըստ հասարակական կյանքի տարբեր ոլորտների՝ կորոնավիրուսային բառապաշարը դասակարգվում է.

1. **Բժշկական նոր տերմիններ,**
2. **Հանրային կյանքին վերաբերող բառեր,**
3. **Ոճաարտահայտչական երանգավորում արտահայտող բառեր,**
4. **Իմաստային նորաբանություններ,**
5. **Կարևորվում է նաև ոչ խոսքային միջոցների դերը. միջոցներ, որոնք կանխարգելում էին վարակի տարածումը:**

1. **Բժշկական նոր տերմիններ:** Քովիդիով պայմանավորված՝ շատ տերմիններ ստեղծվեցին. բառերի տերմինային իմաստի հիմնական բնութագրիչը դարձավ հասկացության ճշգրիտ վերարտադրումը, քանի որ «ճշգրտությունը տերմինային իմաստի անհրաժեշտ պահանջն է. ոչ ճշգրիտ հասկացությունը, և հետևաբար դրա ոչ ճշգրիտ սահմանումը գիտական արժեքից կզրկեր տերմինը և տերմինային իմաստը»⁷: Մակայն այն փաստը, որ որոշ տերմիններ, ինչպես «կորոնա»-ն, գիտության այս ոլորտի համար արդեն ընդունելի հասկացություններից են, ուստի դրանով ստեղծված շատ բառեր վկայում են այն մասին, որ դրանք կազմվել են՝ արտահայտելով բառիմաստի և հասկացության անմիջական կապը: Բառի տերմինային իմաստը ոչ միայն կապված է գիտատեխնիկական առաջընթացի, այլև մարդու կողմից երևույթը ընկալելու ճանաչողական մակարդակի հետ: Ուստի բառերը, որոնք գործածվում են հասարակական կյանքի տարբեր ոլորտներում և արտահայտում են այդ բնագավառին բնորոշ որոշ հասկացություններ, արդեն տերմիններ են: Հենց COVID բառը, որը համաշխարհային ճանաչում գտավ որպես նոր վիրուսի անուն, բժշկական ոլորտում փոխառյալ

⁷ **Էդ. Աղայան**, Տերմինագիտություն, Եր., 1978, էջ 15:

տերմին է: COVID-19 -ը հապավում է: CO – նշանակում է թագ (corona) VI – նշանակում է վիրուս (virus), որը ծագել է լատիներենից, D – նշանակում է հիվանդություն (disease), 19-ը այն տարեթիվն է (2019), երբ հայտնաբերվեց հիվանդությունը⁸:

Այս տերմինը շատ արագ հանրայնացվեց, ինչպես նաև դրանով կազմված շատ այլ բառեր՝ կորոնակենտրոն, կորոնավիրուսակիր, կորոնաճգնաժամ, կորոնավիրուսային, կորոնավարակ, կորոնաթվեր, կորոնապատկեր, կորոնացուցակ են: Այլ հարց է, որ այս բառերը նեղ մասնագիտական ոլորտից դուրս եկան և ձեռք բերեցին հասարակական գործածություն. տեղի ունեցավ բժշկական տերմինի նեղ մասնագիտական իմաստի ընդլայնում՝ պանդեմիա, կոնտակտավոր, վիրուսակիր, կորոնա, քովիդ, կորոնավիրուս, կորոնամեկուսացում են: Բայց կան նորաբանություն տերմիններ, ինչպես նաև հապավումներ, որոնք գործածվում են միայն բժշկական ոլորտում⁹: Դրանք են՝

QR կոդ - Արագ արձագանք (Quick Response)

Դեյտա շտամ- Կորոնայի տեսակներից: *«Դեյտա շտամի արագ տարածման վտանգավորության մասին իրազեկվածությունը թույլ կտա միջոցներ ձեռնարկել ռիսկերը նվազեցնելու համար»:*

ՊՇՌ թեստ- Պոլիմերային շղթայական ռեակցիայի հետազոտություն: *«Գործից դուրս գալու այլընտրանքը ՊՇՌ թեստի բացասական արդյունքը ներկայացնելն է»:*

Պանդեմիա - Համաճարակ: *«Պանդեմիան չպետք է շփոթել էպիդեմիա բառի հետ, որովհետև պանդեմիան վերաբերում է միայն մարդկանց, իսկ էպիդեմիան՝ նաև թռչուններին ու կենդանիներին: Էպիդեմիան ունի տեղային (լոկալ) նշանակություն. համաճարակը տվյալ տարածքով է սահմանափակվում, իսկ պանդեմիան ընդգրկում է ամբողջ աշխարհը»:* *«Պարետատունն ասում է՝ ձեռնոց դրեք... Ինչ «կորոնավիրուսային պանդեմիա» բառակապակցությունը դարձել է սովորական, և մեր սովորական կյանքը հաշված օրերի ընթացքում 180 աստիճան վերածվել է անսովորի...» (Գրական թերթ, 01.05.2020):*

Թթվածնաքաղց - Ծանր սուր շնչառական համախտանիշ:

Նմուշառում - Նմուշառումը կատարվում է քթից, բերանից, թքից՝ հիվանդության ախտորոշման նպատակով: *«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնի Շիրակի մասնաճյուղում որոշում է կայացվել նմուշառում կատարել Մարալիկի հիվանդանոցի 70 աշխատակիցների շրջանում» (Հետք, 2020, 17 ապրիլի):*

Բուժառու - Պացիենտ բառի հայերեն համարժեքն է՝ (պացիենտ-լատիներեն *patients*՝ տառապող բառից), այսօր նշանակում է բուժվող հիվանդ: Հայերեն բուժառու բառը ամբողջությամբ չի արտահայտում երևույթի խորությունը, որովհետև բուժառուն հիվանդանոցում պառ-

⁸ Տե՛ս <https://hy.wikipedia.org/wiki/COVID-19>

⁹ Տե՛ս ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական կայքը (www.moh.am):

կած և բուժվող հիվանդն է, իսկ պացիենտը բուժման կարիք ունեցող հիվանդն է: «Այսօր Նորքի ինֆեկցիոն հիվանդանոցում ունենք 400 բուժառու, մահճակալային ֆոնդը չի բավականացնում» (moh.am):

Կրկնաթեստ - Կրկնակի նմուշառումն է՝ ստուգելու՝ արդյոք ճիշտ է թեստի պատասխանը:

Համախտանիշ - Ախտանիշ (синдром): «COVID -19 կորոնավիրուսի հետևանքով առաջացած հիվանդության համավարակը սկսվել է 2019 թ. նոյեմբերին կամ դեկտեմբերին Չինաստանի Հուբեյ նահանգի Ուհան քաղաքում: Այն 70% -ով նման է ծանր սուր շնչառական համախտանիշի»:

Համավարակ – Համաճարակ: «Պետք է պատրաստվեին վավերագրական ազդեցիկ տեսաֆիլմեր մարդու առողջության ու ճակատագրի վրա համավարակի ունեցած ազդեցության մասին, ինչպես նաև փաստահեն նյութեր» (Research-Covid-19):

Կային տերմիններ, որոնք միայն բժիշկներին էին հայտնի (մասնագիտական բառեր էին), բայց կորոնան ստիպեց, որ դրանք հանրայնացվեն:

ԿՏ (ԿՏ) - Թոքերի համակարգային (տոմագրաֆիկ) ախտորոշում: Վիրուսով վարակված հիվանդները պարտադիր թոքերի ստուգում էին անցնում՝ թոքերի ախտահարման տոկոսը որոշելու նպատակով:

Կորոնավիրուս - Հիվանդության անվանումն է. սուր շնչառական համախտանիշ (SARS) վիրուսային բնույթով հիվանդություն: «Հիվանդությունը կարող է խորանալ՝ հանգեցնելով թոքաբորոքի բազմաօրգանային անբավարարության և մահվան»:

Սատուրացիա - Արյան թթվածնով հագեցվածությունն է: «Այն նորմալում պետք է լինի 95% -ից բարձր(armtims.com)»:

Կորոնավիրուսակիր - Կորոնավարակակիր

Կորոնապատկեր -Կորոնայով հիվանդացածների և առողջացածների ընդհանուր պատկերը:

Կրիչ - Սարք, որով տեղեկատվությունը փոխանցվում է շատ արագ: Այս «կրիչը չի փոխարինում flash տարբերակին: Այսօր Կրիչը ավելի շատ նշանակում է մագնիսային ժապավեն, որի վրա գրվում են արդյունքներ և կարդում դրանք: Նման Կրիչը պահպանում է տեղեկությունը: Թվային դարում Կրիչը բովանդակություն է կրում-պահպանում և փոխանցում»¹⁰: «Փենսիլվանայի նահանգի համալսարանից Մարչել Բոնին հայտարարել է, որ առանց հսկողության թողնված վարակիչ բռնկումները հասնում են «սարահարթի», իսկ հետո սկսում են նվազել, երբ հիվանդությունն ավարտվում է մատչելի կրիչներով» (Wikipedia Covid-19):

Շնչադիմակ - Ռեսպիրատոր: Դիմակ, որը նախատեսված է օդում եղած թունավոր գազերից, գոլորշիներից, փոշուց պաշտպանելու համար:

Քովիդ - Հիվանդության անվանումը:

¹⁰ Դ. Գյուրջինյան, Զարմանալի հայերեն, 2020, Եր., էջ 115:

Վարակակիր- Վիրուսակիր: «...65 հոգու թեստավորելիս հայտնաբերել են 8 վարակակրի, սակայն նրանցից ոմանք անմիջապես որոշել են կրկնակի թեստ հանձնել ...ու մեկ օրվա տարբերությամբ կրկնաթեստի պատասխանը եղել է բացասական» (aravot.am) 2020/09/09/: Բժշկական տերմինների մեջ են մտնում պատվաստանյութերի անվանումները՝ Astrazeneka, Fayzer, Sputnik, Moderna, Sinovak:

Ալկոգել (alkogel) - Հակամանրէային ախտահանիչ միջոց (ալկոհոլային հիմքով). «Ալկոգելի հասանելիությունը բաժանմունքներում խնդրահարույց է» (aravot.am, 02/23):

Բառակապակցություն-տերմիններ: Բառակապակցություն-տերմինների մեջ կան այնպիսիք, որոնք նորաբանություններ են (գրոյական հիվանդ), կան հասարակությանը հայտնի բառակապակցություններ՝ այլ ոլորտներում գործածվող՝ կարմիր գոտի (դիվ.), կանաչ գոտի (Էկոլոգ.) ևն, որոնք համավարակի ժամանակ ձեռք բերեցին լրացուցիչ իմաստներ:

Առաջին գծի թեստ: «2020 թ. մարտից ռադիոլոգիայի ամերիկյան քոլեջը խորհուրդ է տալիս, որ CT-ն չօգտագործել սկրինինգի համար որպես COVID-19 ախտորոշման առաջին գծի թեստ» (Wikipedia.org/wiki/covid-19):

Բացասական թեստ, դրական թեստ (live news.am): Զրոյական հիվանդ: «Կան տարբեր տեսություններ, թե որտեղից կարող էր առաջանալ առաջին դեպքը, այսպես կոչված գրոյական հիվանդը (Wikipedia.org/wiki/covid-19)», **գրոյական պացիենտ:** «Չինաստանում հայտնաբերվել է Covid-19-ի գրոյական պացիենտը» (jam-news.net/am):

Կարմիր գոտի: 1. Մեկուսացված բուժհիմնարկներ հիվանդների համար նախատեսված, որտեղ միայն բժիշկները կարող էին մտնել: 2. Նշանակում է՝ այն տարածքները, երկրները, որոնք ունեն վարակի տարածման բարձր ցուցանիշ: «Մա խիստ մտահոգիչ է, և սրա հետևանքով մենք հայտնվում ենք տարբեր կարմիր գոտիներում, որի արդյունքում ավելի քիչ թվով զբոսաշրջիկներ են գալու Հայաստան» (moh.am, 04.08, 2-20, 17-ն- Aris):

Նարնջագույն գոտի: Հիվանդության տարածման միջին մակարդակ: «Եվրամիության չափորոշիչների համաձայն՝ այժմ Հայաստանը նարնջագույն գոտում է, ռիսկային կարմիրից ընդամենը մեկ քայլ հեռու» (azatutyun.am/a/31952161.html):

Կանաչ գոտի: Այն տարածաշրջանը կամ երկիրը, որտեղ հիվանդության ցածր մակարդակ է:

Կորոնավիրուսային ալիք: «Վերջին ամսվա ընթացքում նկատվում է կորոնավիրուսային ալիքի անկում» (moh.am):

Ցածր սաստուրացիա: «Ցածր սաստուրացիա ունեցող հիվանդները հոսպիտալացվել են» (moh.am):

Հետքովիդյան համախտանիշ: «Մարդկանց 10-20%-ի մոտ հիվան-

դուրսնից ապաքինվելուց հետո նկատվում են միջնաժամկետ և երկարաժամկետ հետևանքներ, որոնք հայտնի են որպես հետքովիդյան համախտանիշ» (*unicef.org/Armenia*):

Կորոնավիրուսային թոքաբորբ: «Կորոնավիրուսային թոքաբորբը իր բնույթով վիրուսային է, ի տարբերություն այլ թոքաբորբերի» (*unicef.org/Armenia*):

Թոքաբորբային ալիք: Սա քովիդի հետևանք է, երբ ամբողջովին ախտահարվում էին թոքերը: Թոքերի դիսթրես համախտանիշ: Թոքերի անբավարարություն, որը հանգեցնում է մահվան:

Բազմաօրգանային անբավարարություն: Բոլոր օրգանների ախտահարություն:

Կորոնավիրուսային համաճարակ նն:

Ինչպես օրինակներն են ցույց տալիս, բժշկական նոր տերմինների մի մասը փոխառվել է անգլերենից, մյուս մասը նորակազմ բառեր են, ընդ որում՝ բարդ բառերը կա՛մ կազմված են հայերեն արմատներով, կա՛մ կորոնա + հայերեն արմատ կաղապարով: Բառակապակցություն-տերմինների համար հիմնական կաղապարը ածական+գոյական կառույցն է:

2. Հանրային կյանքին վերաբերող բառեր: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման շրջանում շատ բառեր արձանագրվեցին էլեկտրոնային բառարաններում, և տվյալ տարին բնութագրող նոր բառեր ստեղծվեցին: Քանի որ հայերենը բառակազմական մեծ հնարավորություններ ունի, ուստի այդ ճանապարհով տեղի է ունեցել բառապաշարի արդիականացում: Վերջին երկու տարիներում բավական շատ նոր բառեր են ստեղծվել, որոնք արագ հանրային ճանաչում ստացան: Դրանք բարդ բառեր են, որոնցում առաջին բաղադրիչը հիմնականում «կորոնա» բառն է, որը միայն լրացման դեր է կատարում: Ինչպես նշում է Մ. Աբեղյանը. «...մասերից առաջինն ըստ իմաստի լինում է լրացում երկրորդի, այսինքն՝ բարդ բառի գլխավոր նշանակությունը երկրորդ մասի մեջ է, առաջինը միայն որևէ կողմից որոշում, լրացնում է երկրորդի իմաստը»¹¹: Բարդ բառերը գերակշռում են, որովհետև մի քանի արմատների միաձուլումից առաջացած նոր բառը ավելի հասկանալի է դառնում հասարակությանը: Բառի ձևը և նրա իմաստը ամբողջական պատկերացում են տալիս նոր իրողության մասին:

Բառերը վերաբերում են առողջապահական, տնտեսական, քաղաքական, կրթական բնագավառներին:

«Եթե դպրոցները 10 օր էլ փակ մնան, ծնողները կորոնավիրուսի պատվաստանյութը կգտնեն ավելի շուտ, քան գիտնականները» (*հմգ.*):

Առաջնավարակակիր- Կորոնայով վարակված առաջին հիվանդը: «Կորոնավիրուսով վարակված առաջնավարակակիրը ՀՀ-ում գրանցվեց մարտի 1-ին» (*jam-news.net/am*):

Կորոնակենտրոն - «Հիվանդանոցի վերածումը կորոնակենտրոնի

¹¹ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 201:

պարալիզացրել է հանրապետությունում ինֆեկցիոն հիվանդությունների արդյունավետ կառավարումը» (aravot.am):

Կորոնաճգնաժամ - «Հայտնի են այն քաղաքները, որոնք արդյունավետ պայքարել են կորոնաճգնաժամի դեմ» (aravot.am):

Կորոնաշարք, կորոնացուցակ - «Կորոնացուցակի առաջատարները ԱՄՆ-ն, Բրազիլիան են» (5-րդ ալիք, 22.07.2020):

Կորոնացուցանիշ - «Մտահոգիչ են կորոնացուցանիշները և զանգվածային հիվանդացումը» (Արմնյուզ, 10.07.2020):

Կորոնայրահոս- «Օրվա կորոնայրահոսը համառոտ» (TV Արմենիա, 22.07.2020):

Թագաժահր-թագավարակ - «Անձ մը, որ որևէ ախտանշան չունի, կարող է իր վրա կրել թագաժահրը» (Ժամանակ օրաթերթ, 2020, հուլիսի 22):

Թագավարակիչ - տե՛ս կորոնավարակակիր:

Պարետատուն - Այն վայրը, որտեղ զբաղվում են կորոնավիրուսային ճգնաժամի հետ կապված հարցերով: «ՀՀ պարետատունն անորոշ ժամկետով արգելել է հուլիսի 25-ից դեպի Եգիպտոս չվերթը» (Ժամանակ օրաթերթ, 2020, հուլիսի 22):

Գործածություն ստացան հետևյալ **բառակապակցությունները**.

Ճգնաժամային հաղորդակցություն: Ճգնաժամային հոդորդակցումը իրականացվում էր առցանց տարբերակով: «Ճգնաժամային հաղորդակցություն իրականացնող ինստիտուտները պետք է ունենան տեղեկատվական հոսքի մատուցման հստակ սխեմա» (bjc.am/wp-content/uploads/2021/10):

Սոցիալական (ֆիզիկական) տարածք (անգլ.՝ social distancing): Դա առնվազն վեց ոսոնաչափ հեռավորությունն է՝ COVID 19-ի տարածումը կանխելու համար: Այս բառակապակցությունը գործածվել է փիլիսոփայության և հատկապես հոգեբանության ոլորտում (հմց.): Նշանակել է տարածություն, որը հաստատվում է անհատների կողմից խմբերի կամ մարդկանց շփման ժամանակ: Առանձնապես խոսքային և հաղորդակցական էթիկետում է գործածվում: Նաև՝ **ճգնաժամային հեռահաղորդակցություն, կորոնավիրուսային թոքաբորբ, կորոնավիրուսային ալիք, կորոնավիրուսային համավարակ, հակապատվաստումային արշավ, հակապատվաստումային խմբեր, պատվաստումային քաղաք** ևն:

Անհայումային առաքում, առցանց առաքում: Նպատակն այն է, որ մարդիկ շփում չունենային՝ վարակից խուսափելու համար: Բանկային ոլորտում գործածության մեջ մտան հետևյալ բառակապակցությունները՝ **առցանց վարկ, առցանց բանկ, առցանց վաճառք, առցանց գործարք** ևն: Թեպետ այս բառակապակցությունները կային, բայց հասարակության շրջանում նոր բովանդակություն ստացան: «Իրականացնում են առցանց շփման առաքում, որպեսզի նվազագույնի հասցվի շփումը մարդկանց միջև» (moh.am):

Կրթական և աշխատանքային ոլորտին վերագրվող բառեր՝ **հեռա-**

վար ուսուցում, կրթության հեռուսուցում, էլեկտրոնային մատյան, հեռավար դասեր, հիբրիդային ուսուցում, հեռավար կրթական հարթակ, առցանց կրթություն (տե՛ս ՀՀ ԿԳՄՄՆ պաշտոնական կայքէջը. «Տեղեկատվություն», www.escs.am):

3. Ոճաարտահայտչական երանգավորում արտահայտող բառեր:

Կան հեղինակային-անհատական նորակազմություններ. դրանք դիպվածային նորակազմ բառեր են, որոնց իմաստը հասկանալի է միայն տեքստերում, և որոնք արտահայտում են հոդվածագրի վերաբերմունքը երևույթի հանդեպ: «Անհատական նորակազմությունների մի մասը ստեղծվում է նյութի անմիջական թելադրանքով, իրականացնում է հաղորդակցական կամ արտահայտչական գործառույթ և տեսականորեն նախադրյալ չունի դառնալու ընդհանուր գործածական»¹²:

Դիպվածային բառերը գնահատողական արժեք ունեն. արտահայտում են հոդվածագրի անհատական վերաբերմունքը կորոնավիրուսային իրողության նկատմամբ: Այդ բառերը ոճական զանազան երանգավորում են արտահայտում տեքստերում (առանձնապես առցանցներում են կիրառված)՝ խոսքին հաղորդելով երգիծական, հումորային բնույթ: Այս բառերով ընդգծվում են «կորոնա» երևույթին հասարակական տարբեր խավերի վերաբերմունքը, ինչպես՝ կորոնաֆորիա, կորոնամարզում, կորոնասամառ, կորոնագարուն, կորոնաֆուտբոլ, կորոնաֆաշիստ, կորոնապար, կորոնաթայմ, կորոնադիահերձարան, կորոնահումոր, կորոնաստորիզմ, կորոնավիճակ, կորոնագերություն, կորոնագում, կորոնադար, կորոնահասցե, կորոնամեկուսացում, կորոնամահձակալ, կորոնամոդա, կորոնագատիկ, կորոնակեղծիք, կորոնաժամանակներ, կորոնակալիպսիզ, կորոնաֆեյք, կորոնաթեյ ինֆողեմա (այս բառերի մի մասը արձանագրված են ներքոհիշյալ հոդվածում)¹³:

Հաղորդակցական միջոցները՝ Zoom, online, ևս ազդեցին բառապաշարի վրա՝ առցանց քննություն, առցանց հարցազրույց, առցանց դաս, հեռուստակոնֆերանս, գիտաժողով, դասախոսություն, օնլայնի փոխարեն, զում ծնունդ, զում հանդիպում, զում հարսանիք, զում ինջույք ևն: «Այս տարվա վերջին զանգին բոլորս միանում ենք զումզանգին (Zoom-ին) և սեղմում ենք տան զանգերը» (1 lurer.am): «Էջմիածնում նշանդրեքի ժամանակ կորոնատարոսիկներ էին բաժանում (հսց)»:

Կորոնահերոս - «Վրացահայ տիկնիկագործը, գյուղում մեկուսացած, կորոնահերոսներ ու կորոնատիկնիկներ է ստեղծում» (aravot.am):

Քովիդացնել - «Վերջում բոլորիս քովիդացնելու են ու նստեցնեն տանը (հսց.)»:

Ինչպես տեսնում ենք, դիպվածային այս բառերը կազմվել են բառակազմական տարբեր միջոցներով՝ ածանցում՝ համավարակ, վիրու-

¹² Յու. Ավետիսյան, Լ. Թեյան. Ա. Մարգարյան և ուրիշներ, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Եր., 2016, էջ 63:

¹³ Տե՛ս Մ. Մարգարյան, Ն. Խաչիբաբյան, նշվ. աշխ., էջ 69:

սիկ, բառաբարդում՝ կորոնագատիկ, կորոնաամառ, բարդ ածանցավոր կորոնակեղծիք, կորոնագերություն ևն: Բոլոր բառերի համար հիմնական արմատը «կորոնան» է, մյուս արմատները բացահայտում են կորոնային վերագրվող երևույթներ:

4. Իմաստային նորաբանություններ: Նորաբանությունները միայն այն բառերը չեն, որոնք նոր են ստեղծվում թե՛ փոխառության, թե՛ լեզվի ներքին հնարավորությունների ճանապարհով, այլ նաև լեզվում առկա բառերի նախկին իմաստին նոր իմաստ հաղորդելն է: Կան բառեր, որոնք գործածվել են, սակայն քովիդով պայմանավորված՝ նոր ժամանակաշրջանին համապատասխան ձեռք են բերել այլ իմաստներ. տեղի է ունեցել բառիմաստի ընդլայնում: «Անշուշտ, բառապաշարի իմաստաբանական զարգացումը ոչ միայն բառերի նորանոր իմաստ ստանալն է, այլև որոշ իմաստների հնացումը, սակայն իմաստաբանական զարգացման համար առավել էականը և գերակշռողը նոր իմաստների առաջացումն է, բառապաշարի զարգացման ուղիներից մեկն էլ սա է՝ իմաստաբանական նորաբանություններ ստանալը»¹⁴:

Իմաստային նորաբանություններ կարելի է համարել հետևյալները.

Կարանտին (բժշկ.): «1. Վարակիչ հիվանդությունների (համաճարակների) տարածումը կանխելու նպատակով հիվանդների և նրանց հետ շփում ունեցած անձանց ժամանակավոր մեկուսացումը: 2. Բուժական կետ՝ համաճարակ տարածված վայրից եկած մարդկանց, նավերը, ապրանքները ևն ստուգելու՝ զննելու համար, մեկուսարան»¹⁵:

Այս բառի իմաստը ընդլայնվել է. սկզբնապես նշանակել է ժամանակ, 40-օրյա վիճակ (իտալ. quarante giorni -40 օր): Բառը առաջին անգամ գործածվել է 14-րդ դարում Վենետիկում, երբ այլ երկրներից նավերը գալիս էին նավահանգիստ. 40 օր հետաձգվում էր դրանց մուտքը ծով (հմց.):

Կորոնայի ընթացքում այն ժամանակահատվածն է, երբ սահմանափակվում էր ոչ միայն տեղաշարժը, այլ երկրներից եկած մարդկանց շփումը, այլև առհասարակ շփումը՝ միջանձնային, խմբային:

Համաճարակ - Այս բառը լայն տարածում ստացավ: Էդ. Ադայանի բառարանում այսպես է բացատրված. «1. ան, ամեն ինչ ճարակող լափող՝ ոչնչացնող... 4.գ. Որևէ վարակիչ հիվանդության լայն տարածումը: 5. Ընդարձակ տարածում գտած երևույթ»¹⁶:

Հայկազյան բառարանում գրված է. «Համայն ճարակեալ, ծախեալ, կերեալ 1.ան, ամեն ինչ ճարակող լափող, ոչնչացնող»¹⁷: Մալխասյանի բառարանում նշված է. «Համաճարակ հիւանդութիւններ, որոնցով մի երկրում միաժամանակ շատերն են հիվանդանում՝ միմեանցից վարակ-

¹⁴ Էդ. Ադայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 198:

¹⁵ Էդ. Ադայան, Արդի հայերենի առձեռն բացատրական բառարան, Եր., 2014, էջ 627:

¹⁶ Նույն տեղում, էջ 696:

¹⁷ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Եր., 1981, էջ 17:

վելով»¹⁸: Թերևս այս բառը գործածվում էր միայն զանազան կարգի հիվանդությունների տարածման ժամանակ, օրինակ՝ խոզի գրիպ, թռչնագրիպ են, սակայն այսօր համաճարակը վերագրվում է հենց քովիդին, որը «սպառնում էր» մարդկային կյանքերին:

COVID 19-ը այսօր համաշխարհային երևույթ է, և հենց այդ բնույթով էր պայմանավորված ոչ միայն տարբեր երկրներից մարդկանց տեղաշարժը այլ երկրներ, այլև շփումը, մեկուսացումը, ինքնամեկուսացումը, համաճարակի ժամանակ խիստ սահմանափակումները երկրի բոլոր քաղաքացիների համար:

Պարետ - «1. Կայազորային և պահակային ծառայության ճշգրիտ կատարման, հասարակական վայրերում զինծառայողների կարգապահության ևն հսկողության գործը վարող զինվորական պետ:

2. Ամրոցի կամ ամրությունների ամբողջ շրջանի բոլոր զորքերի պետ:

3. Զինծառայողների ու զինամթերքների փոխադրելուն և զորքերի շարժման ճշտությանը հետևող զինվորական:

4. Հասարակական շենք՝ հիմնարկ-ձեռնարկության՝ գործարանի ևն շենքերի հսկողությունն ու պահպանությունն իրականացնող պաշտոնյա»¹⁹:

Կորոնավիրուսային ժամանակահատվածում նշանակում է կառավարության կողմից հաստատված պաշտոնատար անձ, ով պատասխանատու էր քովիդի հետ կապված բոլոր միջոցառումների համար (իրադրային է):

Դիմակ (mask)- Էդ. Աղայանի բառարանում գրված է. «Սովորաթղթից կամ այլ նյութերից շինված մարդու կամ կենդանու դիմապատկեր, որ մարդիկ դնում են իրենց երեսին»²⁰ (ի դեպ, ոչ մի բառարանում արձանագրված չէր դիմակի բժշկական դերը):

Դիմակը (face covering) դեմքը փակելն է հիվանդությունից խուսափելու համար:

Դիմակը վիրուսից պաշտպանվելու լավագույն միջոցն էր և ամենապահանջված «ապրանքը»:

Բժիշկների անհրաժեշտ «գործիք»-ից այն ձեռք բերեց համաշխարհային (գլոբալ) նշանակություն շնչառական ապարատներով՝ ռեսպիրատորներով դիմակներ, դեմքի պաշտպանական վահաններ, միանգամյա գործածության դիմակներ, նորաձև դիմակներ՝ պատրաստված զանազան կտորներից, որոնք դարձան պերճանքի միջոցներ: Բայց ոչ միայն. համաճարակի տարածման ժամանակ, երբ մարդիկ դժվարությամբ էին ձեռք բերում դիմակներ (մասկաներ), այն վերածվեց բիզնեսի լավագույն միջոցի. մեծացավ նրա տնտեսական նշանակությունը: «Հաստատվեց դիմակա-ձեռնոցային ռեժիմ» (հսկ):

¹⁸ Ստ. Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Եր., 2010, էջ 25:

¹⁹ Էդ. Աղայան, Արդի հայերենի առձեռն բացատրական բառարան, էջ 985:

²⁰ Նույն տեղում, էջ 275:

Կտրուկ ավելացավ ոչ միայն դիմակների ու ձեռնոցների, այլև հեռախոսների, գաջեթների, նոութբուքների, պլանշետների վաճառքը, քանի որ կրթությունը և աշխատանքը տեղափոխվեց Zoom հարթակ: Դա էական դեր խաղաց ՀՀ տնտեսության զարգացման վրա (փոքր ու միջին ձեռնարկատիրական գործունեություն ծավալող ընկերությունները սկսեցին արտադրել դիմակներ), մեծացավ այդ ապրանքների պահանջարկը:

Ալիք – «1. Ջրի մակերեսին բարձրացող շերտ, կոհակ:

2. Իր շարժումով կամ ձևով ջրի կոհակի նման զանգված:

3. Տատանողական շարժում ֆիզիկական միջավայրում:

4. Ալիքանման ծալք:

5. Իրար հաջորդող և իրար վրա բարձրացող շերտեր (հողի, ավազի ևն)»²¹:

Ալիք բառը նոր իրողության պայմաններում ձեռք է բերել կրկնավարակի իմաստ: «Կորոնավիրուսային ալիքը մեկ շաբաթվա ընթացքում էլի կաճի, աշխատում ենք դիմագրավել ալիքին» (moh.am):

Ինքնամեկուսացում - Երբ մարդը ինքնական մեկուսանում է շրջապատից²²: Տերմինը հայտնի էր դեռևս 1940 թ., որը գործածվում էր հոգեբուժական պրակտիկայում և ուներ չեզոք բնույթ²³: Համաճարակի ժամանակ պաշտոնապես ընդունվեց որպես տերմին. այն դարձավ վիրուսի դեմ պայքարի եղանակներից մեկը: Ինքնամեկուսացումը մարդուն զրկեց սովորական ազատությունից, հաճույքներից, հարազատների հետ շփվելու իրավունքից, ճանապարհորդելու հնարավորությունից:

Այսպիսով, «բառերն էլ, ինչպես մարդիկ, փոփոխություններ են կրում իրենց կյանքի ընթացքում՝ մեծանում են ու ծերանում, հարստանում են ու աղքատանում, ընդլայնում են իրենց իմաստը կամ նեղացնում, փոխում են իրենց բովանդակությունը»²⁴:

Բացի այս դասակարգումից, կարելի է առանձնացնել «Կորոնա» բառույթի շուրջը համախմբված **թեմատիկ խմբեր**:

ա. Վիրուս կրող մարդկանց խմբեր՝ կորոնավիրուսակիր, կորոնավարակակիր, առաջնավարակակիր, գրոյական հիվանդ, կոնտակտավոր, վիրուսակիր, թագավարակիչ, թագավարակակիր, համավարակակիր, պսակաժահրակիր:

բ. Համաճարակի հետ կապված՝ մարդկանց զբաղմունքի և վարքականի անվանումներ՝ բուժառու, պարետ, պացիենտ, քովիդ ակտիվիստ:

գ. Առարկաների անվանումներ՝ դիմակ, ռեսպիրատոր, շնչադիմակ, կրիչ, հեռահար ջերմաչափիչ:

դ. Համաճարակի հետ կապված հիվանդությունների անվանումներ՝ կորոնա, համավարակ, թագավարակ, թագաժահր, ժահրախտ, վիրու-

²¹ Նույն տեղում, էջ 18:

²² Տե՛ս նույն տեղը, էջ 451:

²³ Տե՛ս **Антеро Натри**, Типы неологизмов в русском языке периода коронавирусной инфекции COVID-19, Университет Тампере, 2021, էջ 34:

²⁴ **Լ. Հախվերդյան**, Զրույցներ լեզվի մասին, Եր., 1986, էջ 35:

սիկ, դելտա շտամ, քովիդ, կորոնամարագմ, կարանտին, կորոնավիրուս, պսակաժահր:

ե. Մարդկանց վարքականոնի դրսևորման եղանակներ՝ կորոնաֆորիա, կորոնապանիկա, կորոնաֆեյթ, կորոնակեղծիք:

Լեզվական միջոցների ուսումնասիրությունից բացի, կան միջոցներ, որոնք նպաստել են կորոնավիրուսային համաճարակից խուսափելուն:

5. Ոչ խոսքային միջոցներ: Բացի լեզվական միջոցներից, կորոնավիրուսի ժամանակ մեծ նշանակություն ստացան նշանանային համակարգերը:

1. Գձանշումները զանազան վայրերում՝ խանութներ, դեղատներ, հիվանդանոցներ են: Դրանք 1.5 մ ֆիզիկական հեռավորություն էին ապահովում. նախազգուշական միջոցներ էին մարդկանց համար վարակից խուսափելու նպատակով:

2. Կայուն ժապավենները նստարաններին փակցված, որոնք ևս ապահովում էին սոցիալական կամ ֆիզիկական տարածություն:

3. Հեռահար ջերմաչափում: Աշխատավայրերում, կրթական բոլոր օջախներում սկսեցին գործել հեռահար ջերմաչափման սարքերը: Հեռահար նշանակում է հեռավար կետերից հարվածող:

4. Բարևելու ձև: Միջազգային պրակտիկայում սկսեց գործել արմունկներով ու բռունցքներով միմյանց հպվելով բարևելու ձևը: Մարդիկ հարկադրված էին այդպես մեկը մյուսին բարևել՝ վարակից գերծմնալու նկատառումներից ելնելով:

Այս նշանային համակարգերը ևս հնարավորություն էին տալիս, որքան անհրաժեշտ է, նախազգուշական միջոցներ ձեռնարկելու:

«Կորոնա» բառայթի շուրջը խմբավորված բառերի ու բառակապակցությունների (շուրջ 122 բառ և բառակապակցություն) այս քննությունը վկայում է այն մասին, որ համաշխարհային իրադարձությունները ևս լեզվի վրա մեծ ազդեցություն են գործում, և լեզուն յուրովի է արձագանքում դրանց: Համաճարակի ընթացքում ստեղծված բառերը, բառակապակցությունները, ինչպես նաև ոչ խոսքային միջոցները տեղեկություն են հաղորդում հասարակական նշանակություն ունեցող երևույթի մասին, որն անհրաժեշտ է մարդկանց կողմնորոշելու, իրենց գործելակերպը կարգավորելու համար: Իսկ նշյալ բառերը, մեր կարծիքով, ժամանակի ընթացքում գործածությունից դուրս կզան՝ դառնալով կորոնավիրուսային ժամանակահատվածը բնութագրող պատմաբաներ, և կարձանագրվեն միայն բառարաններում:

АНАИТ АДИЛХАНЯН – Коронавирусная лексика как «инструмент» коммуникации. – Статья посвящена влиянию на словарный запас (лексику) армянского языка в результате беспрецедентной атаки на мир COVID – 19. В связи с новой обстановкой с лексемой «корона» были образованы новые слова и словосочетания, были заимствования из английского языка, имело место расширение

смысла действующих слов. Эту коронавирусную лексику классифицировали согласно употреблению и функциям: медицинские термины, признанные обществом слова и словосочетания, слова, выражающие стилистическую ценность, а также тематические группы: группа людей, носителей вируса, наименования занятости и правил поведения людей в связи с пандемией, названия предметов, названия болезней, связанных с эпидемией.

Этот анализ (около 122 слов и словосочетаний) свидетельствует о том, что мировые события оказывают также большое влияние на язык, и язык по своему реагирует на них. Во время пандемии образованные слова и словосочетания, а также невербальные методы передают информацию о явлении, имеющем общественное значение, что необходимо для ориентировки людей, урегулирования их жизнедеятельности. А слова со временем выйдут из употребления, став архаизмами, характеризующими период коронавирусной пандемии 21-ого века, и зафиксированы в словарях, дополнив словарный состав армянского языка.

Ключевые слова: лексема «корона», коронавирусная лексика, медицинские термины, признанные обществом слова и словосочетания, пандемия, самоизоляция, невербальные средства, вирус, мировые события, тематические группы

ANAHIT ADILKHANYAN – *Coronavirus Vocabulary as a Communication “Tool”*. – The article is dedicated to the impact of COVID – 19, which has plagued the word without precedent, on the vocabulary of the Armenian language. Due to the created new situation, new words and phrases were created with the foreign word “korona”, borrowings from English were made, the meanings of the words in the vocabulary were expanded. We have classified this coronavirus vocabulary according to the function, medical terms, words and phrases that have become public, expressing stylistic nuances, also according to thematic groups, groups of people carrying the virus, the occupation of people related to the epidemic, the names of the code of conduct, the names of objects, the names of diseases related to the epidemic. This study (about 122 words and phrases) proves that world events also have a great influence on the language, and it reacts to them in its own way. The words created during the pandemic, idioms, as well as non-verbal means, convey information about a phenomenon of social importance, which is necessary to orientate people and regulate their actions. And the words will go out of use over time, becoming historical words characterizing the coronavirus period of the 21st century and will be recorded in dictionaries, replenishing the vocabulary of the Armenian language.

Key words: coronavirus vocabulary, communication “tool”, medical terms, new situation, popular memorized words, words expressing stylistic coloring, self-isolation, phraseological terms, touchy new words, non-verbal means

ՀԱՅ ՀՆՉՅՈՒՆԱՅԻՆ ՈՃԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՎԱԼՏԵՐ ԲԵՐԲԵՐՅԱՆ

Հայերենի հնչյունային, հնչյոթային համակարգի ուսումնասիրությամբ զբաղվել են տարբեր լեզվաբաններ: Կատարվել են լաբորատոր մի շարք փորձարկումներ: Հիմնավոր քննվել են հատկապես ձայնավորների, բաղաձայնների, ձայնակապի, երկհնչյունների դիրքային արտասանության տարբերությունները և այլ հարցեր: Հայերենը հնչյունական համակարգի բնույթով համարվում է բարեհունչ լեզու: Այն ունի նաև երաժշտականության բարձր տվյալներ:

Ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանությունը նկարագրում և դասակարգում է հայոց լեզվի արդի փուլի հնչյունական համակարգը, բացահայտում լեզվում կատարվող հնչյունական գործընթացները, հնչյունների զանազան կարգի փոփոխությունները, նրանց առաջացման պատճառները, օրինաչափությունները¹: Կարևորվում է տվյալ խոսքաշարում ձայնավոր և բաղաձայն հնչյունների կիրառման հաճախականությունը, ձայնավոր և բաղաձայն հնչյունների հարաբերակցությունը, առոգանությունը և այլն:

Սույն հոդվածում ներկայացված են հնչյունային ոճագիտության զարգացման հիմնախնդիրները: Ուսումնասիրվել են հայոց լեզվի հնչյունային ոճագիտության մասին գրված կարևոր աշխատանքները, տարբեր հետազոտություններում առկա դրույթները: Անդրադարձ է կատարվել հնչյունային ոճագիտության հիմնական բաղադրիչներին՝ բաղաձայնայնոյթ, առձայնայնոյթ, նմանաձայնայնություն: Մեթոդաբանական հիմք են դարձել եղած տեսական դրույթների համադրումը և վերլուծությունը: Գիտական գրականության նյութը ներկայացված է ժամանակագրական սկզբունքով:

Բանալի բառեր – *հնչյունային ոճագիտություն, բաղաձայնայնոյթ, առձայնայնոյթ, նմանաձայնայնություն, արտահայտչականություն, ոճական արժեք, պատկերավորման միջոց*

Հնչյունային ոճագիտությունը ուսումնասիրում է հնչյունական համակարգի արտահայտչական հնարավորությունները: Եթե ոճագիտության մնացած բաժինների (բառային, քերականական) վերաբերյալ հարուստ քննական նյութ կա, ապա հնչյունային ոճագիտության իբրև ոճագիտության առանձին բաժնի վերաբերյալ հետազոտությունները ավելի սահմանափակ են. հնչյունային ոճագիտությունը համակողմանիորեն չի բնութագրվել: Ոճագիտության այս բաժնին անդրադարձել են քչերը: Հետազոտված չեն հայոց լեզվի հնչյունային ոճագիտական

¹ Տե՛ս Ա. Սուքիասյան, Զ. Սուքիասյան, Մ. Ֆելեքյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 2017, էջ 23:

մտքի զարգացման ընթացքն ու հիմնախնդիրները: Հաշվի առնելով վերոգրյալը այս աշխատանքը համարում ենք այժմեական:

Նորագույն շրջանի ոճագիտական առաջին աշխատանքներում ներկայացվում էին զուտ լեզվական գիտելիքներ, ինչը, կարծում ենք, սկզբնական շրջանի համար բնական էր և պատճառաբանված, բայց, իհարկե, բավարար չէր ոճագիտական մտքի զարգացման համար²: Այսպես, Մ. Ասատրյանը, Ս. Աբրահամյանը իրենց ոճագիտական աշխատանքներում անդրադարձել են արտասանական և հնչերանգային բնույթի սխալներին, գրական արտասանական աղավաղումներին, ուղղախոսական անճշտություններին³: Հնչյունի ոճական արժեքի վերաբերյալ կարևոր դրույթներ կան ոչ միայն տեսական աշխատանքներում, այլև առանձին հեղինակներին նվիրված գործնական ուսումնասիրություններում⁴: Դրանք, սակայն, մեր կարծիքով, առավելապես առնչվում են հնչյունաբանությանը և ոչ թե հնչյունային ոճագիտությանը:

Չուտ լեզվական մակարդակի սահմանումներին հաջորդեցին ոճաբանական վերլուծություններ, մշակվեց գիտական տերմինաբանություն ոլորտի վերաբերյալ:

Հնչյունային ոճագիտության վերաբերյալ աշխատանքներից առանձնանում է Ֆ. Խլղաթյանի «Հնչյունական ոճաբանություն»⁵ ծավալուն հոդվածը: Հեղինակը համակողմանիորեն անդրադարձել է լեզվի արտահայտչական, հուզական հնարավորություններին, դրանց ներգործությանը: Ի տարբերություն շատ լեզվաբանների, որոնք հնչյունային ոճագիտության մասին խոսելիս հիմնականում շեշտը դնում էին ուղղախոսական համակարգի, արտասանական նորմերի, դրանց խախտումների վրա և հնչյունական միջոցների ոճական կիրառությունները կարծես թողնում էին ստվերում՝ Ֆ. Խլղաթյանը ոչ միայն խորությամբ ուսումնասիրել է հնչյունական-արտասանական այդ երևույթների ոճական հնարավորությունները, այլև, իբրև առաջին փորձ, առանձնացրել է որոշ խմբեր, կատարել դասակարգումներ, բաժանումներ: Ըստ լեզվաբանի՝ հնչյունային ոճագիտության հնարավորությունները բաժանվում են երկու խմբի. առաջինում միավորվում են այն երևույթները, որոնք նպաստում են հեղինակային միտումի համաձայն խոսքի հնչյունական կողմի կազմակերպմանը և դրսևորվում են հնչյունների ու հնչյունախմ-

² Նորագույն շրջան ասելով նկատի ունենք 1950-ական թթ. մինչև մեր օրերը ընկած ժամանակահատվածը: Ի դեպ, հենց 1950-ական թթ.-ից է սկսել դասավանդվել «Հայոց լեզվի ոճաբանություն» դասընթացը հայաստանյան բուհերում:

³ Առավել մանրամասն տե՛ս Մ. Ասատրյան, Խոսքի կուլտուրայի մասին, Եր., 1958, ինչպես նաև՝ Ս. Աբրահամյան, Աշակերտի խոսքի զարգացում, Եր., 1973:

⁴ Տե՛ս Ա. Աբրամյան, Հնչյունաբանության և հնչյունախոսության մի քանի հարցերը ռուս և հայ լեզվաբանության մեջ, «Լեզվի և ոճի հարցեր». հոդվածների ժողովածու, 1960, I, էջ 315-336: Ռ. Թոխմախյան, Ժամանակակից հայերենի բառային շեշտի բնույթը, «Լեզվի և ոճի հարցեր». հոդվածների ժողովածու, 1975, III, էջ 123-207 և այլն:

⁵ Տե՛ս Ֆ. Խլղաթյան, Հնչյունական ոճաբանություն, «Լեզվի և ոճի հարցեր». հոդվածների ժողովածու (6), Եր., 1982:

բերի տարբեր գուգորդումներից ծնվող զանազան «էֆեկտների» ձևով, իսկ երկրորդ խումբը կազմում են խոսքի արտաբերական կողմին (արտասանությանը) առնչվող երևույթները⁶: Լեզվաբանը առանձնացրել է **բարեհնչությունը**, որը անվանել է նաև **գեղահնչաբանություն** (инструментовка), **հնչահանգությունը** (звукопись), և նշել, որ հայոց լեզվի հնարավորությունները այս ասպարեզում բավական մեծ են: Հողվածագիրը նկարագրել է հնչունական կրկնությունները: Ըստ նրա՝ դրանք բանաստեղծության մեջ դրսևորվում են բաղաձայնային, առձայնային, հանգի ձևով: Նա քննադատաբար է անդրադարձել հնչունային ոճագիտությանը վերաբերող տարբեր հարցերի: Վստահ կարող ենք ասել, որ մինչ օրս Ֆ. Խլղաթյանի ծավալուն հողվածը հնչունային ոճագիտության ասպարեզում չի կորցրել իր արդիականությունը և տեսական հարուստ աղբյուր է ոճագիտական ուսումնասիրությունների համար:

Հայ ոճագիտական մտքի պատմության մեջ անդրադարձ է կատարվել հնչունային ոճագիտության հետևյալ հիմնական բաղադրիչներիին՝ *բաղաձայնայնոյթ, առձայնայնոյթ, նմանաձայնայնություն, հնչերանգ, ելևէջում, դադար, ռիթմ, հանգ, տեմպ, շեշտ*: Ըստ մեր ձեռքի տակ եղած տեսական աղբյուրների՝ ներկայացնենք լեզվաբանների ուշարժան դիտարկումները լեզվական վերոնշյալ իրողություններից մի քանիսի վերաբերյալ: Գիտական գրականության նյութը ներկայացված է ժամանակագրական սկզբունքով:

Բաղաձայնայնոյթ: Ըստ «Ոճաբանական տերմինների բառարանի»՝ բաղաձայնայնոյթը նույն կամ նույնորակ բաղաձայն հնչյունների կուտակումն է խոսքի բարեհնչության, պատկերավորության, ռիթմիկ հնչեղության ու մեղեդայնության, ինչպես նաև բնական ինչ-ինչ երևույթների լսողական խաբկանք առաջացնելու նպատակով⁷: Կարևորվում է նման հնչյունների ճիշտ ընտրությունը՝ խուլ կամ ձայնեղ, շրթնային կամ ռնգային, նույն շարքի կամ հարևան շարքերի բաղաձայնների կրկնությունը և այլն:

Հնչունային ոճագիտության այս բաղադրիչը, ինչպես սկզբնական շրջանում նկատել են լեզվաբանները, առավել բնորոշ է գեղարվեստական խոսքին, մասնավորաբար՝ չափածոյին: Մովորաբար դիտարկվում է բանաստեղծական բնագիրը՝ նկատի ունենալով հնչունական հատկանիշներով իրար մոտ հնչյունները: Մ. Պետրոսյանը, անդրադառնալով հայ հին մատենագրության մեջ հնչունական այս միջոցների ոճական կիրառություններին, բերում է բնագրային օրինակներ և վերլուծում դրանք: Նա առաջիններից է, որ փորձում է ձայն/հնչյուն-բովանդակություն առնչություններում քննարկել հարցը: «Հնչունական միջոցները ինքնանպատակ չեն,- գրում է նա,- դրանք ավել կամ պակաս չափով առնչվում են ասույթի բովանդակության հետ, իսկ առանձին

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 84:

⁷ Տե՛ս Ֆ. Խլղաթյան, Ոճաբանական տերմինների բառարան, Եր., 1970, էջ 16:

դեպքերում արտաքին հնչյունական տպավորությունն այնպիսի պատ-
րանք է ստեղծում, որ թվում է, թե տվյալ պահին առկա է այն առարկան
կամ երևույթը, որի մասին խոսվում է (Ճչ-կանչ-խանչ ձևույթներում
նույն կամ նմանահնչյուն բաղաձայնների հաճախականությունը հի-
շեցնում է խոզի խառաչը, բուխ-բխ կապակցությունները՝ ակունքից
բխող ջրի ձայնը)»⁸: Հեղինակն ընդգծում է, որ դեռևս անտիկ աշխարհի
ճարտասանները ոճի կարևոր հատկանիշների շարքին էին դասում
բաղաձայն և ձայնավոր հնչյունների զանազան զուգորդումները, ո-
րոնք խոսքը դարձնում են կշռույթավոր, բարեհնչյուն, արտահայտում
են զգացմունքային և իմաստային հարուստ նրբերանգներ:

Հետագա ուսումնասիրողները ավելի խորացրին հարցի մասին ե-
ղած ուշագրավ դիտարկումները:

Էդ. Ջրբաշյանը իրավացիորեն նշում է, որ բաղաձայնույթը չպետք
է դառնա ինքնանպատակ լեզվական խաղերի միջոց, ինչպես երբեմն
վարվել են ձևապաշտական պոեզիայի ներկայացուցիչները⁹: Այն պի-
տի բխի ստեղծագործության բովանդակությունից նպատակ ունենա-
լով ստեղծելու որևէ տրամադրություն, երաժշտականություն: Հայ գրա-
կանությունը, ըստ հետազոտողի, լի է բաղաձայնույթի դրսևորումնե-
րով. որպես բաղաձայնույթի առաջին կատարյալ նմուշներ մատնանշ-
վում են Գր. Նարեկացու, Ն. Շնորհալու գործերը: Բաղաձայնույթի հնա-
գույն դրսևորումներից է համարվում բոլորիս քաջածանոթ Վահագնի
ծնունդը պատկերող երգը (*«Երկնէր երկին, // Երկնէր երկիր, // Երկնէր
եւ ծովն ծիրանի. // Երկն ի ծովուն ունէր // Եւ զկարմրիկն եղեգնիկ...»*):
Բաղաձայնույթի կիրարկման օրինակներ են առկա հին և միջնադար-
յան, նոր, նորագույն շրջանի հայ գրականության մեջ: Հնչյունային մի-
ջոցների նպատակային կրկնության դիմել են ինչպես արևելահայ
(Թումանյան, Տերյան, Շիրազ, Մահյան և այլք), այնպես էլ արևմտահայ
հեղինակներ (Վարուժան, Մեծարենց և այլք): Օր. Վարուժանի «Ցորյա-
նի ծովեր» բանաստեղծությունում տեսնում ենք **h** հազագային հնչյունի
կրկնությամբ, բանաստեղծի երևակայությամբ ստեղծված կենդանի հո-
վերի պատկերը. *«Հովէ ր կանցնին.- // Ու ցորյաններս հուշիկ հուշիկ
կարթննան. // Իրենց խորքեն կը հոսի դող մանսահման»*: **Օ** հնչյունի
կրկնության բնութագրական օրինակ բերենք Մահյանի պոեզիայից.
*«Օտներից մանկություն է ծորում // Օերպերից՝ ծաղիկ ու ծիածան: //
Օալվեձալ լեռները ծրարել, // Օալվել է երկինքը կապուտակ...»*: Այլ հե-
տազոտողներ հանգամանորեն անդրադարձել են բաղաձայնույթի ո-
ճական այսպիսի դրսևորումներին, արևմտահայ կամ արևելահայ այս
կամ այն հեղինակի առիթով փորձել են վեր հանել գեղարվեստական
խոսքի բովանդակային-գաղափարական առանձնահատկությունները՝
պայմանավորված հնչյունային-ոճական այդ հնարանքով:

⁸ Մ. Պետրոսյան, Լեզվի և ոճի հարցեր, Եր., 1980, էջ 53:

⁹ Տե՛ս էդ. Ջրբաշյան, Հ. Մախչանյան, Գրականագիտական բառարան, Եր., 1980, էջ 43:

Ս. Մելքոնյանը հավելում է, որ բաղաձայնության արտահայտչական արժեքն ավելի է մեծանում, երբ համապատասխանում է խոսքի բովանդակությանը¹⁰: Նա բերում է օրինակներ, որոնցում կրկնվող բաղաձայնը լինում է տարբեր դիրքերում՝ բառասկզբում, բառամիջում, բառավերջում: Այսպես, օրինակ, Չարենցի հետևյալ տողերում առկա է *հ, ղ* հնչյունների կուտակում. «Հրոտ, հրաշեկ ոսկին արևի՝ // Հրդեհված հոգու հովն է երևի... // Հուր հովը հոգու՝ հրդեհված հիմա - // Լեռնային վանքի խաչերի վրա»: Ոճական այսպիսի կիրառությունները ամփոփ մեկնաբանված են լեզվաբանների կողմից:

Ս. Մարությանը որպես *բաղաձայնություն* համարժեք տերմին օգտագործում է *բաղաձայնների հանգիստություն* արտահայտությունը¹¹: Սակայն այդ տերմինը լայն գործածություն, տարածում չունեցավ: Լեզվաբանը հարցի ուսումնասիրության ոլորտում գրեթե չի հավելում նոր բան:

Այլ ուսումնասիրողներ փորձել են տեսականորեն համակարգել նյութը և որոշակիորեն դասակարգել այն: Գ. Ջահուկյանը, Ֆ. Խլղաթյանը բաղաձայնության գործածության դեպքերը բաժանել են երկու խմբի՝ ա) բաղաձայնություն օգտագործվում է բնության երևույթների ձայնական տպավորություններ ստեղծելու նպատակով, բ) բաղաձայնների կրկնությունը սոսկ հնչյունախաղ է և միայն ուժեղացնում է բանաստեղծության երաժշտականությունը¹²: Վերոբերյալ բաժանումը ներկայացված է նաև Լ. Եզեկյանի «Ոճագիտություն»¹³ ձեռնարկում, բայց որևէ լրացուցիչ մեկնաբանություն լեզվաբանը չի հավելում: Հետևապես դժվար է պնդել՝ արդյո՞ք ընդունելի է այս դասակարգումը հեղինակի համար:

Ժամանակակից լեզվաբանների կարծիքով, սերտ առնչության մեջ լինելով բառընտրության և խոսքի բովանդակության ինչ-ինչ կողմերի հետ՝ բաղաձայնություն ոչ միայն ստեղծում է բազմաձայնություն, այլև նպաստում է ձայնապատկերի կառուցմանը, ընթերցողի ուշադրությունը հոգեբանորեն կենտրոնացնում է այս կամ այն մտքի կամ գեղարվեստական պատկերի վրա¹⁴: Այս միտքը հաստատելու համար բերվում են համապատասխան օրինակներ և վերլուծվում: Օր.

Աջնան մշուշում շշուկ ու շրշուն...

... Անտես ու հուշիկ իմ շուրջը շրջում

Եվ շշնջում ես և անուշ շրշում... (Վ. Տերյան)

Այստեղ շ շփական հնչյունի առատությունը, ըստ ուսումնասիրողների, և՛ բազմաձայնության, և՛ պատկերի ստեղծման խթան է: Նկատելի է նաև, որ «Շշուկ և շրշուն» բանաստեղծությունում գուցակցելով առձայնությունը և բաղաձայնությունը՝ ստեղծվել է աշնանային տրամադ-

¹⁰ Տե՛ս Ս. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 65:

¹¹ Տե՛ս Ս. Մարության, Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., 2000, էջ 189:

¹² Տե՛ս Գ. Ջահուկյան, Ֆ. Խլղաթյան, Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., 2007, էջ 82:

¹³ Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Եր., 2006:

¹⁴ Տե՛ս Հ. Ջաքարյան, Յու. Ավետիսյան, Ոճագիտություն: Տեքստագիտություն: Հայոց լեզվի պատմություն, Եր., 2018, էջ 17:

րություն: Միևնույն խոսքաշարում սրանց համակցումը բնականոն է:

Այսպիսով՝ ընդհանուր նկարագրական դիտարկումներից հարցի ուսումնասիրությունը հանգում է համեմատաբար խորը և փաստարկված վերլուծության: Այն նույն ճանապարհն է անցել նաև օտար լեզուներում: Բաղաձայնային՝ որպես հնչյունային ոճագիտության հիմնական բաղադրիչի ոճական-արտահայտչական յուրահատկություններին ավելի վաղ են անդրադարձել օտար, մասնավորաբար ռուս և անգլիացի լեզվաբանները¹⁵: Բաղաձայնային լայնորեն կիրառվել է անգլիական գրականության զարգացման տարբեր փուլերում՝ թե՛ արձակում (օր.՝ *And then came Black Leclure, to lay his heavy hand on the bit of pulsating puppy life, to press and prod and mould till it became a big bristling beast, acute in knavery, overspilling with hate, sinister, malignant, diabolic.* (Ձեկ Լոնդոն)), թե՛ չափածոյում (օր.՝ *Wind whines and whines the shingle, // The crazy pierstakes groan; // A senile sea numbers each single // Slimesilvered stone* (Ձեյս Ջոյս)): Բաղաձայնային կիրարկման յուրօրինակ ձևեր տեսնում ենք դարձվածքային արտահայտություններում (օր.՝ *blind as a bat, tit for tat, last but not the least, as good as gold pretty as a picture, dead as a doornail, bag and baggage, bread and butter, between the devil and the deep blue sea*), ստեղծագործությունների վերնագրերում (օր.՝ *"Sense & Sensibility", "Pride & Prejudice"*), պոեզիայում (օր.՝ *I love your hills and I love your dales, I love your flocks a-bleating*) և այլուր: Դրանք հանգամանորեն ուսումնասիրվել են մասնագետների կողմից¹⁶:

Առձայնային: Առձայնային բանաստեղծականությունն ու մեղեդայնությունն ստեղծելու նպատակով նույն կամ նույնորակ ձայնավորների կուտակումն է¹⁷: Ի տարբերություն բաղաձայնային առձայնային գործածականությամբ աչքի չի ընկնում: Ի սկզբանե լեզվաբանները նկատել են, որ առձայնային հաճախ զուգակցվում է բաղաձայնային հետ: Լեզվաբանները համեմատաբար քիչ են անդրադարձել առձայնային:

Ն. Վիրաբյանը, Լ. Մարգարյանը առձայնային մասին խոսելիս բերում են հետևյալ օրինակը (նույնօրինակ վերլուծություն առկա է մի շարք լեզվաբանների մոտ). ու ձայնավորի բազմակի կրկնությունը վ և շ բաղաձայնների հետ ստեղծում է հերոսների ողբերգական ճակատագրերը սզացող միալար ձայնի տպավորություն Թումանյանի «Անուշ» պոեմի նախերգանքում, որը կրկնվում է և վերջին՝ 6-րդ երգում¹⁸:

— Վուշ-վո ւշ, Անո ւշ, վուշ-վո ւշ, քուրի կ,
Վո ւշ քու սերին, քու յարին...
Վուշ-վո ւշ, Մարո , վուշ-վո ւշ, իգի՛ թ,
Վո ւշ քու սիրած սարերին...

¹⁵ Առավել մանրամասն տե՛ս Լ. Galperin, Stylistics, M., 1977, էջ 126:

¹⁶ Առավել մանրամասն տե՛ս P. Simpson, Stylistics, UK, 2004, V. Zhukovska, English stylistics: fundamentals of theory and practice, Ukraine, 2010, E. Sachkova, Lectures on English Stylistics, M., 2012:

¹⁷ Տե՛ս Ֆ. Խլղաթյան, Ոճաբանական տերմինների բառարան, էջ 11:

¹⁸ Տե՛ս Ն. Վիրաբյան, Լ. Մարգարյան, Հայոց լեզու: Ոճաբանություն, Եր., 2007, էջ 6:

Քիչ գործածվելու վերաբերյալ շատ հիմնավոր է լեզվաբանների բացատրությունը: Ըստ Գ. Ջահուկյանի, Ֆ. Խլղաթյանի՝ քիչ գործածության հիմնական պատճառը առձայնության և պատկերվող երևույթի իմաստային-հուզական կապի թուլությունն է. այն չի կարող նույնպիսի հուզական լիցք կրել, ինչպես բաղաձայնությո՞ւրը, և օգտագործվում է հիմնականում բարեհնչություն ստեղծելու նպատակով¹⁹:

Առձայնության օրինակներ կան Շնորհալու, Նարեկացու, Մեծարենցի, Տերյանի, Իսահակյանի, Վարուժանի, Չարենցի, Շիրազի և ուրիշների գործերում: Բայց նայնպես, դժվար է միանշանակ պնդել, որ ձայնավորների բազմակի գործածությունը լրացուցիչ արտահայտչականություն է հաղորդում տեքստին: Այսպես, օրինակ՝

*Գոհար վարդն վառ առեալ
ի վեհից վարսիցն արփենից...*

(Նարեկացի)

*Նավակներ մեկնեցան ամենն ալ, բաղձանքով ակաղձուն.
Հեռացան ամենն ալ՝ ծրփանուտ Երազիս արփունքեն...*

(Մեծարենց)

*Երազիս տեսա՝ օրո՛ր ու շորո՛ր
Քարվանն էր անցնում զնգալով անո՛ւշ:
Սարերի փեշով ոլո՛ր ու մոլո՛ր
Քարվանն էր անցնում զնգալով անո՛ւշ:*

(Իսահակյան)

Կա ձայնային հարստություն, կա որոշակի ռիթմական բազմաձայնություն, և դա խոսքին արտահայտչականություն է հաղորդում միմիայն բովանդակության հետ շատ որոշակի զուգահեռությամբ: Եվ ուսումնասիրողի խնդիրն է նկատել ու վեր հանել այդ կապն ու առնչությունը:

Թ. Շահվերդյանը առձայնությո՞ւր որակում է որպես հնչյունային գործիքավորման հիմնական հնար: Լեզվաբանը իրավացիորեն նշում է, որ հայերենում բաղաձայնների համեմատությամբ ձայնավորները, քանակապես քիչ լինելով, ավելի հաճախ են գործածվում (հատկապես ա ձայնավորը), և առանձին դեպքերում նրանց կրկնությունը այս կամ այն համատեքստում ոճական որևէ գործառույթ չի կատարում, այլ պարզապես պայմանավորված է հայերենի հնչյունական առանձնահատկություններով²⁰:

Հետազոտողները փաստում են, որ մեր լեզվում առձայնության նկարագրության ճշգրիտ չափանիշներ չկան, քանի որ առձայնությո՞ւր դժվար ճանաչելի է, դրսևորմամբ՝ խնդրահարույց:

Օտար գրականության մեջ նույնպիսի սկզբունքներով է կատարվում քննությունը: Բերենք առձայնության բնութագրական օրինակներ անգլիական բանաստեղծական խոսքից, որոնցում նկատում ենք [e], [ei] կրկնություն: Այսպես՝

¹⁹ Տե՛ս Գ. Ջահուկյան, Ֆ. Խլղաթյան, նշվ. աշխ., էջ 83:

²⁰ Տե՛ս Թ. Շահվերդյան, Ոճագիտություն, Եր., 2010, էջ 52-53:

Tenderly bury the fair young dead. [e]
 Tell this soul with sorrow laden if within the distant
 A idenn,
 It shall clasp a sainted maiden whom the angels named
 Lenore-
 Clasp a rare and radiant maiden, whom the angels named
 Lenore? [ei]

Այսպիսով՝ ձայնական հարստությունը հայերենին բնորոշ առանձնահատկություն է: Եվ առձայնությո՞ւր մեր գեղարվեստական չափածոյում ընդգծված ու շատ գործածվող արտահայտչական միջոցներից չէ: Դա է պատճառ նաև, որ ոճագիտական գրականության մեջ հաճախակի անդրադարձ չի եղել, և բավարար չափով չի ուսումնասիրվել հարցը:

Նմանաձայնություն: Նմանաձայնությունը հնչյունական հնարանք է, որը նպատակ ունի որոշ հնչյունների կրկնության, կուտակման միջոցով «լսելի դարձնել» որևէ գործողություն, շարժում, բնության որևէ տեսարան²¹: Հնչյունների կրկնության այս տարատեսակը հնարավորություն է ընձեռում խոսքը տպավորիչ ու արտահայտիչ դարձնելու, այն ունի ոճական որոշակի դեր, գործողությանը հաղորդում է երանգ, հուզականություն:

Պ. Պողոսյանը մեզանում թերևս առաջինն է ներկայացրել խոսքում բնաձայնությունների ոճական գործածությունը: Ըստ նրա՝ բնաձայնությունները բնույթով տարբեր են դատողական խոսքի մասերից, դրանց սպասարկող խոսքի մասերից, ձայնարկություններից ու կամային բառերից²²: Մրանք ոճագետը անվանում է ոչ լիարժեք բառեր: Խոսքում բնաձայնությունները (*վրշշ, բրխկ, չրխկ, դրռռ, հաֆ, միառու և այլն*) դիտարկվում են նախադասության կապակցությունից դուրս ձևեր: Դրանք հանդես են գալիս, այսպես ասած, խորհրդանշային (սիմվոլիկ) արժեքով:

Չայ ոճագիտական տերմինաբանության մեջ առկա են թե՛ **նմանաձայնություն**, թե՛ **բնաձայնություն** անվանումները: Մրանք զուգընթաց, համաժամանակ գործածվել են համարվելով հանձնարարելի տարբերակներ: Ինչպես նկատեցինք, Պ. Պողոսյանը գործածում է բնաձայնություն տերմինը, իսկ, օրինակ, Ա. Մարությանը խրախուսելի է համարում *նմանաձայնական* տերմինի օգտագործումը *բնաձայնական*-ի փոխարեն՝ հետևելով Հ. Նազարեթյանի դիտարկմանը, այն է՝ «ոչ մի նմանաձայնական բառ բնական ձայնի ճիշտ և ճիշտ նույնական վերարտադրությունը նույնաձայնություն չէ, այլ նրա մոտավոր հնչյունական նմանակումն է»²³:

Լ. Եգեկյանի դիտարկմամբ՝ այս դեպքում կրկնվում է ոչ թե մեկ հնչյունը, այլ մի քանի հնչյուններ միաժամանակ կամ բառի մի մասը, ինչպես *վազվզել, ծլծլալ, կոխկոխել* և այլն: Նա բերում է Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի Ջանգու գետի նկարագրությունը, ինչը բնաձայնական բառերի գործածության հաջող օրինակ է, այսպես՝ «Հրով ու

²¹ Տե՛ս Էդ. Ջրբաշյան, Հ. Մախչանյան, նշվ. աշխ., էջ 220-221:

²² Տե՛ս Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, I, Եր., 1990, էջ 333:

²³ Ա. Մարության, նշվ. աշխ., էջ 187:

սրով, բոցով, բրով, փոնչալով, մոնչալով, խոնչալով, քարի, քարափի գլուխ վեր հատելով, իր փորը խցկելով... ճչալով, ճոնչալով, թնդալով, դորդալով, սառցահատ գետինը պոկելով, պոճոկելով, քրքրելով, բամբաչելով, սրթսրթացնելով, վրթվրթացնելով, կրակված աչքերը արնով լիքը, աստամները դրճտացնելով, դնգոնգացնելով...», որ չի գալիս ամեհի Ջանգին, որ Ձորագեղ մտնում...»²⁴: Լեզվաբանի վերլուծությունը էապես կշահեր այն դեպքում, եթե պատմական ժամանակաշրջանը նկատի ունենալով՝ բնաձայնական բառերի գործածությունը կապեր առհասարակ «Վերք Հայաստանի» վեպի բովանդակության հետ:

Թ. Շահվերդյանի այն կարծիքը, որ հայ գեղարվեստական գրականության մեջ այս արտահայտչամիջոցը լայն տարածում չի գտել և հանդիպում է երբեմն, իհարկե ունի իր բացատրությունը²⁵: Լեզվաբանը, կարծում ենք, սա հայտնում է՝ նկատի ունենալով առհասարակ լեզվի մեջ նմանաձայնության գործածությունը: Նմանաձայնությունը ակտիվ գործածություն ունի գրականության որոշակի ժանրերում, սեռերում, մասնավորաբար՝ մանկական բանաստեղծություններում, ինչպես

- | | |
|--------------------------|----------------------------|
| Ծիտը ծառին ծլվում է. | - Ծուղրուղո լ. |
| - Ծի վ, ծի վ, ծի վ. | Աքլորը զիլ կանչեց թառին. |
| Բազեն գլխին պտտվում է. | Ճի կ-ճի կ, ճի կ-ճի կ, |
| - Վո ւյ, վո ւյ, վո ւյ... | Զարթնեց մթնում ծիտը ծառին: |
- (Աղայան) (Թումանյան)

Վերոբերյալ բանաստեղծությունները ընթերցվում են հաճույքով. հեղինակները դիմել են նմանաձայնությունների ճիշտ, տեղին գործածության: Կենդանիների, թռչունների մասին գրված բանաստեղծությունների լեզվին հատուկ է նմանաձայնական բառերի հաճախակի գործածությունը:

Անգլերենում տարբերակվում են նմանաձայնության բառային (lexical) և ոչ բառային (nonlexical) ձևեր²⁶: Բառային ձևերը լեզվում ճանաչելի ձևերն են, ինչպես՝ *դղրդոց, թրմփոց, ճաքճոց, բզզոց, տզզոց* և այլն, իսկ ոչ բառային ձևերը հնչյունական այն խմբերն են, որոնք ընդօրինակում են ձայնը առանց որևէ լեզվական առնչության, ինչպես գործարկվող մեքենայի ձայնը՝ *vroom vroom* կամ *brrrrrm brrrrrm* և այլն: Առանձնացվում են նաև տեսողական և լսողական ձևեր: Օր.՝ *miaow, mrruh, prrrup, mrow, yowl, mrrrrrr* համապատասխան տարբերակներից կարելի է մոտավոր պատկերացում կազմել կատվի, նրա վարքի մասին: Մա դիտարկվում է որպես տեսողական ձև: Ոգևորված ընթերցելիս հաճախ մենք ընդօրինակում ենք տեքստում մարդու կամ կենդանու ձայնը: Մա արդեն լսողական ձևն է. տարածված են հատկապես *meow*-ը կամ *wow*-ը: Ինչպես նկատում ենք, հայ լեզվաբանության մեջ նմանօրինակ դասակարգումներ չկան:

²⁴ Լ. Եզեկյան, նշվ. աշխ., էջ 117:
²⁵ Տե՛ս Թ. Շահվերդյան, նշվ. աշխ., էջ 53:
²⁶ Տե՛ս P. Simpson, Stylistics, 2004, էջ 67:

Այսպիսով, հնչյունների արտահայտչական հնարավորությունները սահմանափակ են, այդուհանդերձ դրանք անտեսել չի կարելի: Լեզվաբանները որպես խոսքի հնչյունական համակարգի կառուցման անհատական բաղադրիչներ առանձնացնում են բաղաձայնությո՞ւր, առձայնությո՞ւր, նմանաձայնությունը՝ կարևորելով նաև արտասանական ավելի փոքր տարրերը: Հնչյունային ոճագիտության բաղադրիչների (բաղաձայնությո՞ւր, առձայնությո՞ւր, նմանաձայնություն) կիրառումը ինքնանպատակ չէ, այլ՝ բովանդակության պահանջ: Հնչյունների գործածությունը իմաստային տարբեր երանգներ կարող է հաղորդել խոսքին: Այսօր հնչյունային ոճագիտության առանձին միավորներ պահանջում են խորը քննություն, ինչպես նաև հանրայնացում:

ВАЛЬТЕР БЕРБЕРЯН – *Из истории армянской фонетической стилистики.* – Разные лингвисты изучали фонологическую систему армянского языка, выполняя ряд лабораторных исследований. Армянский язык гармоничен по своему фонетическому строю. Он также имеет высокие данные о музыкальности.

Фонология современного армянского языка описывает и классифицирует фонетический строй современного этапа армянского языка, выявляет фонетические процессы, происходящие в языке, изменения разного порядка звуков, причины их возникновения, закономерности.

В статье представлены проблемы развития фонетической стилистики. Были изучены работы, написанные о фонетической стилистике армянского языка, положения в различных исследованиях. Были затронуты основные компоненты фонетической стилистики: аллитерация, ассонанс, звукоподражательное слово. Методологической основой является сочетание и анализ существующих теоретических положений.

Ключевые слова: *фонетическая стилистика, аллитерация, ассонанс, звукоподражательное слово, выразительность, стилистическое значение, образ*

VALTER BERBERYAN – *From the History of Armenian Phonetic Stylistics.* – Different linguists have studied phonetic system of Armenian, performing many laboratory tests. Armenian is a harmonious language by the nature of the phonetic system. It has high musicality data as well.

The phonology of the modern Armenian language describes and classifies the phonetic system of the modern stage of the Armenian language, reveals the phonetic processes taking place in the language, changes in different order of sounds, reasons for their occurrence, as well as patterns.

The article presents the problems of phonetic stylistics development. We have studied the works written about phonetic stylistics of the Armenian language, the provisions in various researches. Reference has been made to the main components of phonetic stylistics: alliteration, assonance, onomatopoeic word. The methodological basis is the combination and analysis of existing theoretical provisions.

Key words: *phonetic stylistics, alliteration, assonance, onomatopoeic word, expressiveness, stylistic value, image*

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԵՎ ԾԻՍԵՐԳԱՅԻՆ
ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ

ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Կուտակային¹ (կումուլյատիվ) հեքիաթը հայկական բանահյուսության՝ մինչ օրս քիչ ուսումնասիրված տեսակներից է: Որպես հեքիաթի ենթաժանր՝ կուտակային հեքիաթները առանձնացվում են ըստ դիպաշարերի ոչ թե բովանդակային, այլ կառուցվածքային հատկանիշների: Ելակետը որոշակի կայուն կրկնություններով կուտակվող հյուսվածքն է, որը սյուժեի յուրաքանչյուր օղակում նոր բաղադրիչ է ներառում: Կուտակային նույնաբնույթ կառուցվածք հատուկ է նաև ժողովրդական ծիսերգերի չափածո որոշ կառույցների, որոնցում մոտիվային կրկնությունները հուշում են ծագումնաբանական ընդհանրությունների մասին:

Հնդվածում միջտեքստային քննության են ենթարկվում մի շարք կուտակային հյուսվածքներ՝ հեքիաթներ ու երգեր, ինչպես նաև՝ Հովհ. Թումանյանի մշակված և փոխադրած կուտակային հյուսվածքների բարձրարվեստ մշակումները՝ համադրելով դրանք ժողովրդական տարբերակների և ծիսերգային բանահյուսության այլ նմուշների հետ: Դիտարկվում է կուտակային շղթայի զարգացման տրամաբանությունը՝ ծննդի և մահվան, արարման և քայքայման հաջորդական օղակներով, շղթայի ձևավորման տրամաբանությունը՝ ելնելով կենսանորոգման և կենսապտույտի տրամաբանությունից, որն առանցքային է նաև ամանորյա և հարսանեկան ծիսական բանահյուսության համար: Սրանով էլ պայմանավորվում է կուտակային հեքիաթների ծագումնաբանական ընդհանրությունը բարեկենդանյան ու հարսանեկան ծիսական բնագրերի հետ, և հասկանալի է դառնում հարսի, փեսայի և պսակի մոտիվների առատությունը քննարկվող կուտակային կառույցներում:

Բանալի բառեր - կուտակային հեքիաթ, ծիսերգ, «Էս էն է», «Գացեք-տեսեք», «Ծիտր», «Պոչատ աղվեսը», «Հեքիաթ-հեքիաթ պապս», շղթայական կառույց, արարում, ոչնչացում, հարս ու փեսա

Կուտակային հեքիաթները² երեխաների ամենասիրելի ժանրերից են, որոնք, հետաքրքիր, արկածային պատումներ լինելուց բացի, նաև

¹ **Կուտակային հեքիաթը** այլ կերպ կարող է անվանվել նաև **շղթայական հեքիաթ** (ռուս. *цепевидная сказка*)՝ նկատի ունենալով պատումի շղթայական բնույթը: Մեզ համար ավելի ընդունելի է կուտակային տարբերակը, քանի որ այստեղ շեշտադրվում է նաև պատումի որոշակի կուտակումներով զարգացող սյուժեն (յուրաքանչյուր նոր օղակում մինչ այդ հյուսված կուտակային բնագիրը ավելանում է ևս մեկ բաղադրիչով, որ հարստացնում է կուտակային արձակ կամ չափածո հյուսվածքը հաջորդ կրկնության ժամանակ), որն այս տիպի դիպաշարերի գլխավոր հատկանիշն է:

² Կուտակային հեքիաթներն Աարնե-Թոմփսոն-Ութերի միջազգային նշացանկում դասակարգված են 2000-2100 թվահամարների ներքո: Տե՛ս **Hans-Jörg Uther**, *The Types of International Folktales. A Classification and Bibliography*, Helsinki, Academia Scientiarum Fennica, 2004, 3 volumes: FF Communications 284; 285; 286:

շատ կարևոր դեր են կատարում երեխաների հիշողության և խոսքի զարգացման հարցում: Որոշակի կրկնություն-կուտակումներով հյուսվող դիպաշարը պատումի՛ն հաղորդում է գրավչություն, թեթևություն, արկածայնություն, որոշ դեպքերում նաև՝ երգիծական բնույթ, իսկ դիպաշարի մեջ հյուսվող պատումի կրկնությունը՝ յուրաքանչյուր նոր բաղադրիչի ավելացման ժամանակ, նպաստում է կուտակվող շղթայի օղակների հաջորդականությունը մտապահելով վերականգնելու հմտությանը, որի շնորհիվ զարգանում են նաև երեխայի հիշողությունն ու տրամաբանությունը: Կուտակային հեքիաթների ամենից բնորոշ և տարածված օրինակներից են «Գնդիկ-բոքոնիկը», «Շաղգամը» և մի շարք այլ նմանատիպ դիպաշարեր, որոնք սովորաբար կրտսեր տարիքի երեխաներին պատմվող առաջին հեքիաթներից են:

Հայ ժողովրդական հեքիաթները հարուստ են կուտակային դիպաշարերով: Դրանց մի մասը լայն ճանաչում են ձեռք բերել Թումանյանի հիանալի մշակումների շնորհիվ: Ժողովրդական կուտակային հեքիաթների հիմքով ստեղծված արձակ և չափածո ստեղծագործությունները Հովհ. Թումանյանի երկացանկում կրտսեր տարիքի երեխաների սիրելի պատումների թվում են: Այդպիսիք են, օրինակ, «Կիկոսի մահը», «Ծիտը»³, «Պոչատ աղվեսը» հյուսվածքները, որոնցում խոսքի և գործողության կրկնությունները աստիճանական կուտակումներով ստեղծում են պատումի շղթայական մի շրջանակ:

Կուտակային հեքիաթները սովորաբար հեքիաթի մյուս տեսակներից առանձնանում են իրենց կառուցվածքով, սակայն բովանդակությամբ կարող են շատ տարբեր լինել: Ռուս հայտնի հեքիաթագետ Վլադիմիր Պրոպյան առանձնացնում է կուտակային հեքիաթների 11 տիպ: Ըստ այդմ՝ շղթայական պյուժեն կարող է առաջանալ մեկը մեկի հետևից ուղարկվող կերպարներով (ինչպես, օրինակ, «Կիկոսի մահը» հեքիաթում), փոխանակությունների շղթայով (ինչպես, օրինակ, «Ծիտը» հեքիաթում), կերակրման շղթայով, ձեռքբերումների, հերթով խրճիթ հրավիրվելու, չնչին բանի համար իրենք իրենց կոտորելու (ինչպես, օրինակ, «Մուկիկի մահը» երկում) և այլ ճանապարհներով⁴:

Կուտակային հեքիաթների այս թվում է շատ պարզ և հաճախ բառախաղ հիշեցնող պատումները զարմանալիորեն հեքիաթի ժանրաձևում վաղազույններից են և սնվում են հնագույն ծիսապաշտամունքային աշխարհից, ուր կրկնությունը խոսքի պաշտամունքայնությունը և հմայականությունը շեշտադրելու հիմնական միջոցն էր⁵, որտեղ աշ-

³ Պատահական չէ, որ Թումանյանի «Ծիտը» հեքիաթը արդեն երկար տարիներ տեղ է գտնում դպրոցականների առաջին դասարանի «Մայրենի»-ի դասագրքերում և շատ օգնում է երեխաների խոսքի ու հիշողության զարգացմանը:

⁴ Տե՛ս **Ս. Պրոպյան** **В. Я.** Кумулятивная сказка // Фольклор и действительность, СПб., «Азбука», 2021, էջ 331-354:

⁵ Տե՛ս **Ռ. Հ. Խաչատրյան**, Կրկնակների ու կրկնությունների գործառույթը ծիսերգերում // Պատմա-բանասիրական հանդես, 1991, № 2, էջ 123:

խարհը՝ առարկաները, բնությունը, կենդանական, թռչնային և մարդկային ուղորտները, մեկը մյուսով սնվող կամ մեկը մյուսին գոհաբերվող, մեկը մյուսով պայմանավորված մի համակարգ էր դիտվում՝ կյանքմահ շղթայի հաջորդական օղակներով, փոխանակում-ընծայաբերմամբ կյանքի ու աշխարհի հավասարակշռությունն ապահովող:

Ասվածի տրամաբանությամբ փորձենք միջտեքստային քննության ենթարկել կուտակային մի քանի հեքիաթների դիպաշարեր հայ և անգլիական բանահյուսությունից՝ գրական մշակումների և ժողովրդական տարբերակների դիտարկմամբ զուգադրելով դրանք ծիսերգային բանահյուսության և ժողովրդական չափածոյի կուտակային բնույթի հյուսվածքներին:

Վնասման կամ ոչնչացման շղթա. «Էս էն է», «Գացեք-տեսեք»

Հովհ. Թումանյանի ստեղծագործական աշխարհում կա մի շատ ուշագրավ չափածո գործ՝ «Էս էն է», որը անգլիական ժողովրդական հայտնի կուտակային մանկական չափածո երգային հեքիաթի փոխադրություն է՝ «Սա այն տունն է, որ կառուցել է Ջեքը» վերնագրով: Մյուսժեի ժողովրդական սկզբնաղբյուրը տեղ է գտել ինչպես հեքիաթների նշացանկում⁶, այնպես էլ ժողովրդական երգերի շարքում: Թումանյանը, իհարկե, հայացրել է հայտնի անգլիացի Ջեքին և ներկայացրել որպես վարպետ Օհան:

«Էս էն է» ստեղծագործությունը սկսվում է վարպետ Օհանի կառուցած տնից և այդ տան մեջ պահվող ցորենից: Բերենք մի հատված.

1

Էս էն տունն է, որ շինել է վարպետ Օհանը:

2

Էս էն ցորենն է, որ պահած է էն տանը,

Որ շինել է վարպետ Օհանը:

3

Էս էն մուկն է, որ կերել է էն ցորենը,

Որ պահած է էն տանը,

Որ շինել է վարպետ Օհանը:

4

Էս էն կատուն է, որ բռնել է էն մկանը,

Որ կերել է էն ցորենը,

Որ պահած է էն տանը,

Որ շինել է վարպետ Օհանը⁷:

Կուտակային հյուսվածքը շարունակվում է մեկը մյուսին հաջորդող մոտիվներով. ցորեն, որ կերել է մուկը, կատու, որ բռնել է մկանը,

⁶ Տե՛ս ATU 2032 «This Is the House That Jack Built»: Տե՛ս **Hans-Jörg Uther**, The Types of International Folktales:

⁷ **Հովհ. Թումանյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Եր., Հայաստանի ԳԱ հրատ., 1990, էջ 304-306:

շուն, որ գգել է կատվին, կով, որ հարու է տվել շանը, աղջիկ, որ կթել է կովին, տղա, որ ամուսնացել է աղջկա հետ, տերտեր, որ պսակել է տղային, աքլոր, որ արթնացրել է տերտերին, Վարպետ Օհան, որ մորթել է աքլորին:

Ինչպես տեսնում ենք, հաջորդական այս շղթան հիմնականում կապվում է մեկը մյուսով սնվող, մեկը մյուսին վնասող հերթական օղակներով: Այս շղթայում առանձնանում են ամուսնացող աղջկա ու տղայի և նրանց պսակող տերտերի կերպարները (*«...աղջիկ, որ կթել է էն կովը... / ...տղա, որ ուզել է էն աղջկան... / ...տերտեր, որ պսակել է էն տղին...»*⁸), սակայն սրան կանդրադառնանք մի փոքր ուշ:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրողները, մանկական այս երգը ամենին սովորական կենցաղային հյուսվածք չէ, այլ եղել է ծիսական երգ: Այն ծագել է հրեական հիմնից՝ «Չաղ Գաղյա» Սեփեր Հազադայում, որն ունի իր դանիական, անգլիական տարբերակները⁹: Ստեղծագործության ժողովրդական տարբերակը՝ «Մի մատղաշ այծ»¹⁰, շատ մոտ է հայկական բարեկենդանյան կուտակային կառուցվածքով նոխազերգությանը (այծերգությանը)՝ «Գացեք-տեսեք» վերնագրով, որը ևս ծիսական բնույթ է կրել (*Գացեք-տեսեք ով է կերել էձը, / Գացին տեսան գելն է կերել էձը...*): Սովորաբար կուտակային բնագրերով այսպիսի ծիսերգերը կատարվել են Ամանորին՝ «տիեզերական ծառի» մոտ¹¹: «Գացեք-տեսեք» ծիսերգը ազգագրագետներ Սրբուհի Լիսիցյանը և Էմմա Պետրոսյանը կապում են Սպանդարամետի տոների հետ¹², որն աղերսվում էր անդրաշխարհի, մահվան գաղափարին¹³: Ըստ Սրբուհի Լիսիցյանի՝ «նախապես սա եղել է երգ, որը երգվել է այժի գոհաբերության ժամանակ: Այս երգը երգել է երգչախումբը՝ պարելով պտտվելով գոհասեղանի առջև՝ Դիոնիսոսի՝ հայկական Սպանդարամետի տոնի ժամանակ»¹⁴: Ըստ Էմմա Պետրոսյանի՝ նոխազերգության հիմքում ընկած է ծիսական կերակրման գաղափարը: Բանագետ Ռախսա Խաչատրյանը հիշյալ երգի առնչությամբ գրում է. «Ավարտ — սկիզբ երկշարային ծավալման այս հաջորդությունը՝ մեկը մյուսին ուտելու, ոչնչացնելու հերթագայությամբ գայլ/այծ, այծ/թուփ, ժանգ/թվանք, յուղ/ժանգ, կատու/մուկ, այլ տարբերակներում գայլ/այծ, այծ/թուփ, ջուր/ուրթ, արագիլ/օձ, օձ/հող, հող/խսան բառային սեղմ արտահայտություններով ու

⁸ Նույն տեղում:

⁹ St u Halliwell-Phillips J. O., **Popular Rhymes and Nursery Tales: A Sequel to the Nursery Rhymes of England**, London, 1849, էջ 6:

¹⁰ St u նույն տեղը:

¹¹ St u **Петросян Э.** Боги и ритуалы древней Армении, Ер., 2004, էջ 71:

¹² St u **Лисицян С.** Старинные армянские пляски и театральные представления, т. 1, изд. Академия наук Армянской ССР, Ер., 1958, էջ 79; **Է. Պետրոսյան**, «Գացեք տեսեք» պարերգի իմաստաբանությունը, ՀՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական նստաշրջան, Զեկուցումների թեզիսներ, Եր., 1982, էջ 12:

¹³ St u **Ռ. Հ. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 129:

¹⁴ **Лисицян С.** Старинные пляски и театральные представления армянского народа, т. 1, с. 79.

կառուցվածքի ռեչիտատիվ բնույթով, բացահայտ նշում են կրկնակի ծիսակատարողական արժեքը, որն անպայմանորեն նախանշում էր հակիրճ այդ իրողությունների ընդհանուր իմաստաբանությունը՝ ծնունդ—մահ—ծնունդ»¹⁵.

Հուղն էր իսնին
Իսան՝ յըղին,
Յողն էր ժանգին,
Ժանգն էր թրին,
Թուրն էր կիլուն,
Կելն էր իձուն,
Էձն էր թփին,
Թուփն էր իգուն,
Իգուն դիրուն,
քոլ բարի, քոլ բարի, քոլ բարի, քոլ¹⁶:

Ուշագրավ է, որ «Գացեք-տեսեք» նոխազերգության տարբերակներում սննդային այս շղթայում դարձյալ ի հայտ են գալիս հարսի և փեսայի կերպարները¹⁷: Այսպիսի օրինակ մենք տեսնում ենք ծիսերգի Տավուշից գրառված տարբերակում.

Քյնցեք տեսեք ո՞վ է տարել կատուն,
Քյնցինք տեսանք հարսն է տարել կատուն:
Հարսն ու կատուն, կատուն ու կուկը,
Մուկն ու յուղը, յուղն ու ժանգը,
Ժանգն ու սուրը, սուրն ու գայլը,
Գայլն ու այծը, այծն ու այգին
Մեզ պնրիզենթան, ծեզ պնրի գատիկ¹⁸:

Կուտակման հաջորդ օղակում հիշվում է նաև փեսան («Քյնցեք տեսեք ո՞վ է տարել հարսին, / Քյսցինք տեսանք փեսեն է տարել հարսին»): Իսկ ահա փեսային տարել է Աստված («Քյնցեք տեսեք ո՞վ է տարել փեսին, / Քյնցինք տեսանք աստո՞ծ է տարել փեսին»¹⁹):

Կատվին հարսն է տարել, հարսին փեսան է տարել, փեսային աստված է տարել... Կյանք-մահ հաջորդական այս օղակներում փեսան ակնհայտորեն զոհի իմաստաբանությամբ է հանդես գալիս: Փեսան հարսանիքի համատեքստում կյանքի շարունակականությունն ապահովող այն զոհն է (հմմտ. Փեսա-Քրիստոս նույնացումը սրբազան ամուսնության համատեքստում), որի սիմվոլիկ զոհաբերումը պետք է ապահովի կյանքի շարունակականությունը, նոր աճն ու պտղավորու-

¹⁵ Ռ. Հ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 129:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Ծիսերգում տարեպտույտի խորհրդանշական-գեղագիտական արտահայտումների մասին ուշագրավ քննություն է կատարել Լիլիթ Սիմոնյանը: Տե՛ս Լ. Սիմոնյան-Մելիքյան, Տոմարային ծիսաշար, հ. 2, Եր., 2007, էջ 173-215:

¹⁸ Է. Խենյան, Տավուշ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 21, Եր., 2000, էջ 214-215:

¹⁹ Նույն տեղում:

մը²⁰, որն էլ հարսանիքի առանցքային գաղափարն է:

Արարման և ձեռքբերումների շղթա. «Պոչատ աղվեսը», «Հեքիաթ-հեքիաթ պապս»

Եթե վերոնշյալ սյուժեներում շղթայական պատումը զարգանում է մեկը մեկին ոչնչացնող կամ վնասող օղակներով, ապա այլ սյուժեներում շղթան արարման և ձեռքբերումների բնույթ է կրում: Ընդհանրապես, աշխարհի իրերի ու երևույթների փոխկապակցվածության և փոխայամանավորվածության մասին հնուց ի վեր բազմաթիվ ու բազմատեսակ տեքստեր են ստեղծվել: Ահա մի հատված հին հնդկական պոեզիայի մի բնագրից, որտեղ սերմից սկսվող փոխկապակցման շղթան ի վերջո արարում է մարդուն.

Այժմ սերմերի ծնունդի մասին:

Պրաջապատիի սերմը աստվածներն են:

Աստվածների սերմը՝ անձրևը:

Անձրևի սերմը խոտերն են:

Խոտերի սերմը՝ սնունդը:

Մսնդի սերմը սերմն է²¹:

Արարման այս շղթայի յուրաքանչյուր օղակ նաև յուրօրինակ զոհ է: Դա սննդային շղթայի բնական շարունակականությունն է: Յուրաքանչյուր նախորդը սնվում-արարվում է հաջորդով, յուրաքանչյուրը սերմ սնունդ է դառնում մյուսի համար:

Եթե քննարկված կուտակային շղթաներում մեկը մյուսին ուտելու-ոչնչացնելու, մեկը մյուսից արարվելու կառույցը զարգանում է ինքնաբերաբար, ապա մյուս սյուժեներում, որոնց կանդրադառնանք ստորև, առկա է միջնորդ կերպարը, որի կատարած փոխանակումների ճանապարհով է զարգանում նույնաբնույթ շղթան: Այսպիսիք են Թումանյանի մշակած «Օիտը», «Պոչատ աղվեսը», որոնցում մի դեպքում ծիտը, մյուս դեպքում աղվեսը, որպես միջնորդ փոխանակություններ կատարելով, կայացնում են շղթայական այս կառույցը: Փոխանակություն կատարող այս կերպարը որոշակիորեն օժտված է տրիքստերային հատկանիշներով: Սա հատկապես ակնհայտ է «Օիտը» հեքիաթի ժողովրդական այն տարբերակներում, որոնցում ծիտը, ինչ-որ բան տալով, թվում է բարություն է անում, սակայն վերադարձին փոխարենը ինչ-որ բան խլում է իր տվածի փոխարեն, որոշ տարբերակներում նույնիսկ վնաս է հասցնում (օր.՝ հանում է աշուղի աչքը²²): Այսպիսի հակասականությունը՝ մարդկանց մշակութային օգուտ բերող, բայց նաև վնաս-

²⁰ Այս մասին տե՛ս **Фрейденберг О. М.** Поэтика сюжета и жанра, М., 1997, էջ 67-68: **Ն. Խ. Վարդանյան**, Խաչի իմաստաբանությունը հարսանեկան թագվորագովքերում, «Էջմիածին», 2014, Ը (օգոստոս), էջ 88-98:

²¹ «Հին արևելքի պոեզիա», Եր., 1982, ԵՊՀ հրատ., էջ 299:

²² Տե՛ս **Մ. Հայկունի**, Կենդանական վեպեր. ժողովրդական առակներ, Վաղարշապատ, 1907, Մասն Ա, «Աշղ Այիլոր», էջ 17:

սող, հատուկ է առասպելական տրիքստերային կերպարներին²³:

«Պոչատ աղվեսը». Թումանյանի մշակմամբ հանրահայտ հեքիաթում փոխանակություններ կատարող կերպարին տրիքստերայնությունն այնքան էլ բնորոշ չէ: Այստեղ փոխանակությունների շղթայի նպատակը կաթ ձեռք բերելն է. աղվեսը պետք է պառավին կաթ բերի, որ ստանա իր պոչը: Մտունդ հայթայթելու ճանապարհն այստեղ ևս շղթայական կառույցով է զարգանում. կաթի դիմաց կովը խոտ է ուզում, խոտի դիմաց արտը ջուր է ուզում, ջրի դիմաց ջրհորը կուժ է ուզում (ժող. տարբերակում ջրհորն աղջիկ է ուզում²⁴), կուժի դիմաց աղջիկը հուլունք է ուզում, որը տալիս է չարչուն, և կայանում է փոխանակությունների շղթան: «Պոչատ աղվեսի» Հայկունու գրառած տարբերակում կուտակային շղթան ավելի է մեծանում. այստեղ շղթան հասնում է մինչև հատիկը (կուտը). չարչին ձու է ուզում, հավը կուտ է ուզում, որը տալիս է կալվորը²⁵: Մի դեպքում սկսվում («Էս էն է» հյուսվածքում), մյուս դեպքում վերջանում է սերմնահատիկով²⁶:

«Ծիտը» հեքիաթում փոխանակությունների շղթան ներառում է ոչ միայն սննդային բաղադրիչներ. փշի դիմաց՝ լոշ, լոշի դիմաց՝ գառ, գառան դիմաց՝ հարս, հարսի դիմաց՝ սագ ստացող ծիտը ի վերջո կորստի և ձեռքբերումների ճանապարհով աշուղ է դառնում և պատմում իր պատմությունը՝ կուտակային երգի միջոցով.

Ծընգը, մընգը,
Փուշիկ տվի, լոշիկ առա,
Լոշիկ տվի, գառնիկ առա,
Գառնիկ տվի, հարսիկ առա,
Հարսիկ տվի, սագիկ առա,
Սագիկ առա, աշուղ դառա...²⁷

²³ Փոխանակություններ կատարող կերպարի տրիքստերային էությունն առավել ակնհայտ է «Ծիտը» հեքիաթի այն տարբերակներում, որոնցում թոչնի փոխարեն հանդես է գալիս աղվեսը: Հեքիաթի իմերթական տարբերակում աղվեսը, որ հարսանքավորներին է տալիս եզր, գիշերը գաղտնի մորթում է եզր, դանակը դնում հարսի գրպանը: Առավոտյան «գտնում է հանցավորին» և փախցնում, տանում (տե՛ս Сборник материалов для описания местностей и племен Кавказа, 1904, № 33, «Проказы лисы», էջ 63-65):

²⁴ Ըստ երևույթին ժողովրդական տարբերակը պահպանել է ջրին (ջրարգել վիշապին) աղջիկ գոհաբերելու սովորույթի հիշողությունները: Թումանյանն իր մշակման մեջ փոխել է երեխային անհասկանալի այս մոտիվը: Այստեղ ջուրը կուժ է ուզում, որն աղջկա մոտ է:

²⁵ Տե՛ս **Ս. Հայկունի**, Կենդանական վեպեր. Ժողովրդական առակներ, Մասն Ա, «Աղուէս ու պառա», էջ 9:

²⁶ Ամերիկացի մարդաբան Ջեյմս Սկոտը իր ուսումնասիրություններից մեկում պետության կազմավորումը քոչվոր կյանքից նստակյացին անցնելը, կապում է ցորենի մշակման սկզբնավորման հետ (տե՛ս **Скотт Дж.** Против зерна: Глубинная история древнейших государств, М., «Дело», 2020): Ուշագրավ է, որ քննարկվող կառույցներում էլ պատումների մի մասը ցորենով է սկսվում և կամ ցորենով վերջանում՝ որպես տան բարեկեցության սկիզբ և որպես ձեռքբերումների շղթայի առաջին կամ վերջին կարևորագույն օղակ:

²⁷ **Հովհ. Թումանյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Եր., «Գիտություն», 1994, էջ 177:

Ժողովրդական հեքիաթի այս երգային հատվածը ասվել է նաև հեքիաթից անկախ՝ որպես մանկական խաղերգ.

Փուշը տվի, լոշը առա,
Լոշը տվի օխչարն առա,
Օխչար տվի, չոնգուրն առա,
Ցնգլի, ցնգլի,
Իս հաստ մանեմ, դուն բարակ²⁸:

Անվերջ կրկնվող այս կուտակային հյուսվածքը, եթե նույնիսկ չափածոյի տեսք չի ընդունում, ինչպես, օրինակ, «Պոչատ աղվեսում», միննույնն է, իր կրկնությունների առատությամբ, իսկ թումանյանական մշակման մեջ նաև հանճարեղ գրչի չտեսնված գորությամբ որոշակի երաժշտականություն ու հանգավորում է ստանում, որը երեխաների համար պատումը դարձնում է գրավիչ և դյուրըմբռնելի. «-Աղբյուր, աղբյուր, ջո՛ւր տուր ինձ, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա. խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա. կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներինս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՛րտեղ էիր»²⁹:

Շղթայական փոխանակության այս սկզբունքը տեսնում ենք նաև «Հեքիաթ, հեքիաթ պապս»՝ հայկական ժողովրդական բանահյուսությանը բնորոշ չափածո սկսվածքում: Եթե հեքիաթասացությունը մի յուրօրինակ ծես համարենք, ապա այս ծեսի պատումն անշուշտ հեքիաթի չափածո սկսվածքը կլինի, որը հետագայում առանձնացել է հեքիաթից և ինքնուրույն կյանք ստացել՝ որպես մանկական խաղերգ կամ որպես երգիծական երգ³⁰:

Այստեղ էլ, ինչպես «Էս էն է» փոխադրության մեջ, ամեն ինչ սկսվում է հատիկից՝ բրինձ, կուտ: Հեքիաթասաց պապի պատումով զինված, նախշուն ձին նստած՝ ասացողը մեկնում է Երևան՝ հավերի համար կուտ կամ բրինձ բերելու: Յուրօրինակ փոխանակման շղթան ամեն օղակում նոր ձեռքբերմամբ է զարգանում.

Հեքիա թ, հեքիա թ պապս,
Զաշոք քուռակ տակս,
Հեծնեմ էրթամ Երևան,
Գինին խմեմ գերանամ,
Հավերուս չալթուկ բերեմ,
Հավերս ինձի հավկիթ ածեն,
Հավկիթը տանեմ դարբնին տամ,
Դարբինը ինձ տանակ տա,
Տանակը տանեմ չոբնին տամ,
Չոբանն ինձի գառ տա,

²⁸ Գ. Տեր-Աղեքսանդրեան, Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, Թիֆլիս, 1885, էջ 33:

²⁹ Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, էջ 212:

³⁰ Տարբերակները տե՛ս Ռ. Գրիգորյան, Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, Եր., ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1970, էջ 262-269:

Գառը տանեմ աստծուն տամ,
Աստված ինձի աղբեր տա...³¹

Յորենով սկսվող տարբերակը հացի արարման շղթայական պատումն է զարգացնում.

Աստված ինձի ցորեն տա,
Յորենը տանեմ ջաղցին տամ,
Ջաղացը ինձի այլուր տա,
Այլուրը տանեմ ջրին տամ,
Ջուրը ինձի խմոր տա,
Խմորը տանեմ թնրին տամ, թնդիրն ինձի հաց տա...³²

Չափածոյի տարբերակները բազմազան են և ընդգրկում են հարուստ շղթայական մոտիվաշարեր. բրնձի դիմաց՝ ձու, ձվի դիմաց՝ դանակ, դանակի դիմաց՝ գառ, գառան դիմաց՝ ախպեր: Փոխանակությունների այս շղթան ներառում է երկրագործական, կենդանական և մարդկային դրսևորումներ: Նրանց միավորողը ծնելու, ստեղծելու, արարելու հատկանիշն է. արտը՝ խոտ, ցորեն, բրինձ, կուտ է տալիս, հավը՝ ձու, կովը՝ կաթ: Մարդկային կերպավորումներում ևս ակնհայտ է արարող, ստեղծող հատկանիշը՝ որոշակի առասպելական ըմբռնումներով պայմանավորված. կալվորը, հացթուխը, հովիվը, դարբինը կյանքի ծանրությունը կրող և արարող կենսական այն կերպարներն են, առանց որոնց չի կարող ապրել մարդը: Թերևս միակ կերպարը, որ ստեղծող չէ, չարչին է, և սա է հենց այն կետը, երբ փոխանակությունը առևտրի է վերածվում՝ փոխանակության երևույթի պատմական զարգացման վերջին փուլը:

Հարսն ու փեսան կուտակային շղթայում

Կուտակային այս հյուսվածքներում որպես փոխանակող կողմ է հանդես գալիս նաև աստված: «Հեքիաթ-հեքիաթ պապս» չափածոյում վերջին ընծան՝ գառը, աստծուն է տրվում՝ փոխարենը «ախպեր» կամ ցորեն ստանալով: Սա ակնհայտորեն մատաղի տրամաբանությունն է, որը ևս մի յուրօրինակ փոխանակություն է աստծո հետ: Նման մի փոխանակության օրինակ է մեզ տալիս նաև «Ծիտը» կուտակային հեքիաթը, որտեղ գառան դիմաց ծիտը հարս է ստանում: Հարսանիքում գառան գոհաբերությունը նորապսակների կենսաստեղծությանն է ուղղված. «Գացեք-տեսեք»-ում, ինչպես տեսանք վերը, Աստված տանում է փեսային: Հարսն էլ, փեսան էլ հարսանիքում վերածնվող, անցումային ծես ապրող կերպարներ են: Գառան և հարսի փոխանակության այս մոտիվը տեսնում ենք նաև հայոց հարսանեկան երգերում, որոնցում հարսանիքն էլ որպես մի յուրօրինակ առևտուր է ներկայացվում.

³¹ Ռ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 264:

³² Նույն տեղում:

Ես խմել եմ, գառ եմ առել,
Գառս տվել, ձագ եմ առել.
Առևտուրս շնորհավոր³³:

Անցումային ծես ապրող, իր տարածքում մեռնող և փեսայի տարածքում վերածնվող հարսի կերպարը և հարսի փոխարեն ասածուն գառ նվիրաբերելը լիովին համահունչ են հնագույն ծիսական ըմբռնումներին³⁴: Ծիտը առասպելաբանության մեջ երկու աշխարհների բանբերն է, այսաշխարհի և այլաշխարհի կապն ապահովողը. պատահական չէ, որ հեքիաթի իմերթական տարբերակում ծիտը յոթը սարի հետևից է գալիս³⁵, իսկ դա հեքիաթի հայտնի այլաշխարհքն է:

Թերևս մնում է պարզել միայն, թե ինչու են հիմնականում սննդային շղթա ներկայացնող այս կառույցներում հայտնվում հարսի, փեսայի և ամուսնության մոտիվները: Երկրագործական և հարսանեկան երգերի ընդհանրության մասին գիտական գրականության մեջ քանիցս խոսվել է: Պրոպը նկատում է, որ հարսանիք անելը անհրաժեշտ է համարվել հողի պտղաբույսունն ապահովելու նպատակով³⁶: Հարսանեկան և երկրագործական երգերի առնչություններին են անդրադարձել Ի. Ի. Ջեմցովսկին³⁷, Լ. Լ. Իվաշնևան³⁸: Սննդային արարման և ոչնչացման շղթային բնորոշ մոտիվներով զարգացող վերոնշյալ կառույցներում ակնհայտ է երկրագործական շերտը արտի, ցորենի ու կալվորի մոտիվներում, որոնցով հաճախ սկսվում կամ վերջանում է կառույցը: Շղթայական այս կառույցում հարսանեկան մոտիվի առկայությունը պայմանավորված է հատկապես երկրագործական և հարսանեկան ծիսական բնագրերի ընդհանուր մոտիվաշարերով, որոնք աղերսվում են աճի, բեղմնավորման և պտղաբերության գաղափարներին: Սննդի ընդունման, ծիսական սնման և ամուսնության ծեսի իմաստաբանական ընդհանրությունների վերաբերյալ ուշագրավ վերլուծություն է կատարել Օ. Ֆրեյդենբերգը: Ըստ այդմ՝ նախնական մտածողության համաձայն՝ և՛ ծիսական սնման, և՛ ամուսնության (ոչ միայն մարդկային ամուսնության, այլ ծառերի, երկնային մարմինների) հիմքում ընկած է

³³ Գ. Սահակյան, Ռ. Հովհաննիսյան, Խաչը՝ թիկունքիս, Յոթվերքը՝ սրտիս // ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գիտական աշխատություններ, 2008, № 11, էջ 7-16:

³⁴ Հարսի՝ որպես մեռնող-հառնողի մասին տե՛ս Ն. Վարդանյան, Հարսանեկան լացերգերի ծիսական իմաստաբանությունը. մահվան այլաբանական խորհրդապատկերների քննություն, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2020, № 3 (660), էջ 96-108:

³⁵ Տե՛ս Сборник материалов для описания местностей и племен Кавказа, 1903, № 32, часть 2, էջ 135-137:

³⁶ Տե՛ս Пропп В. Я. Русские аграрные праздники (Опыт историко-этнографического исследования), Л., 1963, էջ 54:

³⁷ Տե՛ս Земцовский И. И. К проблеме взаимосвязи календарной и свадебной обрядности славян // Фольклор и этнография. Обряды и обрядовый фольклор, Л., 1974, էջ 147-154:

³⁸ Տե՛ս Ивашева Л. Л. О взаимосвязи календарной и свадебной поэзии // Русский фольклор XVI, Историческая жизнь народной поэзии, Л., 1976, էջ 191-199:

տարեպտույտի՝ նոր տարվա, նոր կյանքի արարման, մահվան և վերածննդի գաղափարը³⁹: Այսպիսով, ամուսնությունն ու աճի խորհրդաբանությամբ հանդես եկող հարսի ու փեսայի կերպարները այս սյուժեներում կյանքի շարունակականության, կենսանորոգման անհրաժեշտ օղակներից են, որոնցով ամբողջանում է կենսաշրջանի կուտակային կառույցը:

Ամփոփում

Քննությունը ցույց է տալիս, որ տարբեր ժանրաձևերում, չափածոյի և արձակի տարբեր դրսևորումներով և գեղարվեստական արտահայտման երգիծական, արկածային արտահայտումներով ի հայտ եկող կուտակային այս կառույցները, որ այսօր զվարճալի մտավարժական իսաղ են հիշեցնում, պահպանել են մարդու վաղ մտածողության ուշագրավ դրսևորումներ՝ կենսապտույտի, կյանքի շարունակականության, աննդային արարման և ոչնչացման շղթայի վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ, ինչպես ծիտը, որ վերջում աշուղ-հեքիաթասաց դառնալով՝ պատմում է հեքիաթը (Հայկունու գրառած տարբերակում այս երգով «հեքիաթասաց» ծիտը սկսում է դրամ վաստակել («Օտի վուտի փուշը»⁴⁰), այնպես էլ հեքիաթասաց պապը կյանքի զարգացման փոխկապակցված այս շղթայի պատումի կրողն է դառնում: Կուտակային այս սյուժեները ամբողջացնում են կենսական շրջանակը՝ ցորենից սկսվող, փոխկապակցված, մեկը մեկից սերող և մյուսով սնվող բաղադրիչների անքակտելիությամբ զարգացող. դա ըստ էության շատ նման է հեքիաթի կառույցին ընդհանրապես, որտեղ հերոսի ճանապարհի շրջանակն էլ յուրօրինակ փոխանակությունների մի շղթա է՝ գոհողության և ձեռքբերման, որի ավարտին էլ գրեթե միշտ հարսի ձեռքբերումն ու ամուսնությունն է՝ կյանքի շարունակականությունն ապահովող:

НВАРД ВАРДАНЯН – Некоторые параллели между кумулятивными сказками и ритуальными песнями. – Кумулятивные или цепевидные сказки относятся к наименее изученным видам армянского фольклора. Как поджанр сказок - кумулятивные сказки выделяются не столько по содержанию, сколько по структурным особенностям повествования. Исходной является накапливающаяся с определенными устойчивыми повторениями структура, включающая в себя новый компонент на каждом цикле сюжета. Подобная кумулятивная структура характерна и для композиции некоторых народных обрядовых песен, где повторение мотивов предполагает генеалогическую общность сюжетов.

В статье интертекстуальным методом рассматривается ряд кумулятивных текстов сказок и песен. В рассматриваемом материале мы также написали о высокохудожественных обработках кумулятивных сюжетов Оганеса Туманяна, рассматривая их параллельно с фольклорными версиями и другими образцами обрядового фольклора. В статье изучается принцип развития кумулятивной цепи с

³⁹ Տե՛ս Փրէյճենբերգ Օ. Մ., նշվ. աշխ., էջ 53-82:

⁴⁰ Տե՛ս Գ. Տեր-Աղեքսանդրեան, նշվ. աշխ., էջ 412-413:

последовательными звеньями рождения и смерти, творения и распада, принцип формирования цепи, основанной на логике жизненного цикла, которая также является главной идеей новогоднего и свадебного обрядового фольклора. Именно это определяет генеалогическую общность кумулятивных сказок с новогодними и свадебными обрядовыми текстами и выявляет обилие мотивов, связанных с невестой, женихом и свадьбой в рассматриваемых кумулятивных структурах.

Ключевые слова: *кумулятивная сказка, обрядовая песня, «Вот оно», «Идите-смотрите», «Воробей», «Бесхвостая лиса», «Сказка-сказка, это моя бабушка», цепная структура, творение, разрушение, жених и невеста*

NVARD VARDANYAN – *Some Parallels Between Cumulative Tales and Ritual Songs.* – Cumulative or chain tales are among the least studied types of Armenian folklore. As a subgenre of fairy tales, cumulative tales stand out not so much in content as in structural features of the narrative. The initial structure is a structure accumulating with certain stable repetitions, which includes a new component at each cycle of the plot. A similar cumulative structure is also characteristic of the composition of some folk ritual songs, where the repetition of motives suggests a genealogical commonality of plots.

The article examines a number of cumulative texts of fairy tales and songs using the intertextual method. In the studied material we have also included highly artistic adaptations of cumulative plots by Hovhannes Tumanyan, examining them among the folklore versions and other examples of ritual folklore. The article studies the principle of the development of a cumulative chain with successive links of birth and death, creation and decay, the principle of the formation of a chain based on the logic of the life cycle, which is also the main idea of New Year and wedding ritual folklore. This is what determines the genealogical commonality of cumulative tales with New Year and wedding ritual texts and reveals the abundance of motives associated with the bride, groom and wedding in the cumulative structures under consideration.

Key words: *cumulative tale, ritual song, “Here it is”, “Come and see”, “Sparrow”, “Tailless Fox”, “Fairy tale, this is my grandfather”, chain structure, creation, destruction, bride and groom*

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՖԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ
ՀԵՌՈՒՍՏԱԲԱՆԱՎԵՃԵՐՈՒՄ**

ԼԻԱՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Քաղաքական կյանքի առասպելականացումը միշտ զբաղեցրել է մարդու ստեղծագործ միտքը: Տարիներ շարունակ հետազոտողները խորհել են քաղաքական միֆերի և դրանց գործառնությունների ձևակերպման հարցերի շուրջ: Միֆը, մշտապես մեկնաբանվելով որպես անգիտակցական գործունեության արդյունք և երևակայության ազատ խաղի դրսևորման ձև, այսօր էլ համարվում է յուրաքանչյուր քաղաքական ուժի զինանոցի անբաժանելի մասնիկը և օգտագործվում է նոր իրականության ստեղծման ու կառուցարկման համար¹: Միֆերն ազգային ինքնության կառուցվածքում այնպիսի տեղ են գրավում, որ որոշ իմաստով կարող ենք պնդել՝ առանց այդ մտահորինվածքների անհնար է պատկերացնել ազգային ինքնությունների կառուցարկումը²:

Քաղաքական միֆերի կիրառելիության տիրույթը մեծացել է տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման, ապրելու մշակույթի պարբերական փոփոխելիության ֆոնին, ինչը առաջ է բերել դրանք մշտապես ուսումնասիրության հղացքում պահելու խնդիր: Այսինքն նույնիսկ ռացիոնալացմանը զուգընթաց մարդը չի ազատագրվում դիցարարության դրսևորումներից և տարբեր սոցիոմշակութային իրավիճակներում ստեղծում է նորանոր միֆեր: Սա է պատճառը, որ ժամանակակից սոցիալ-քաղաքական և մշակութային միֆերի կառուցվածքը, բովանդակությունն ու գործառնությունը դառնում են սոցիալական փիլիսոփայության, քաղաքագիտության, հոգեբանության, սոցիոլոգիայի և մշակութաբանության ուսումնասիրության առարկա³: Այս հանգամանքն էլ պայմանավորում է հոդվածի արդիականությունը: Ուսումնասիրության նպատակն է մերօրյա իրականությունից վերցրած օրինակների հիման վրա ուսումնասիրել նախընտրական քարոզարշավների, մասնավորապես արդյունավետ արտահայտման ձևաչափ համարվող նախընտրական հեռուստաբանավեճերի ժամանակ կիրառվող մանիպուլյացիոն տեխնոլոգիաները և դրանց հիման վրա ձևավորված քաղաքական միֆերը: Հոդվածի մեթոդաբանության հիմքում ընկած են վերլուծության, համեմատության, ընդհանրացման, արխիվային տեսանյութերի, ինչպես նաև գիտական այլ հրապարա-

¹ Տե՛ս **Հ. Կեսոյան**, Սոցիալական միֆերի ձևավորման առանձնահատկությունները ժամանակակից հասարակությունում, «Արդի հոգեբանություն», № 2 (2), 2018, էջ 56:

² Տե՛ս **Ս. Չաքարյան**, Հայոց առաքելության առեղծվածը // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», № 1 (28), 2019, էջ 3:

³ Տե՛ս **Կ. Յարայան**, Սոցիալական դիցարարությունը որպես իրականության կառուցարկման ձևաչափ // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», № 1(37), 2022, էջ 18:

կումների համադրման մեթոդները: Հետազոտությունից հետևում է, որ 2018 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրություններում թեկնածույուն ներկայացրած ուժերը հիմնականում փորձել են կառուցարկել դավադրության, հերոս-փրկչի, ոսկե դարի, հեղափոխությունների մասին ավանդական միֆերը: Դրանք կառուցվել են մանիպուլյացիոն մի շարք տեխնոլոգիաների կիրառմամբ:

Բանալի բառեր – քաղաքական միֆեր, հեռուստաբանավեճ, դավադրության միֆ, հերոս-փրկչի կերպար, մանիպուլյացիոն տեխնոլոգիաներ, սոցիալական իրականություն, հանրային գիտակցություն, սոցիալ-հոգեբանական ազդեցություն, ՉԼՄ-ներ

Քաղաքական միֆերը մարդկության քաղաքակրթության պատմության անբաժան ուղեկիցն են եղել, սակայն դրանք սկսեցին լայնորեն օգտագործվել 20-րդ դարի երկրորդ կեսին, երբ աշխարհում իշխում էին նիհիլիստական տրամադրությունները, և կար մարդկանց բացատրություն տալու, հետպատերազմյան թռիչքից հուսալքված հասարակության մեջ կրկին հույս արթնացնելու խնդիր: Դրանք միտված էին բացատրելու ապրելու մշակույթի նոր փոփոխությունները և դրանցից բխող սոցիալ-տնտեսական քառսը: Առհասարակ միֆերի կիրառելիությունը կարևորվում է տվյալ հասարակության համար օրհասական իրավիճակներում, սոցիոմշակութային ճգնաժամերի ընթացքում, երբ մարդու գիտակցությունը արագ փոխվող, անորսալի սոցիալական իրականությունում կողմնորոշվելու համար հիմնվում է միֆի՝ որպես իրականության առավել կայուն և հուսալի արտացոլման վրա, այլ խոսքով՝ երբ անհատներն ունեն ընտրություն կատարելու և կողմնորոշվելու խնդիր⁴: Այսօր էլ, չնայած տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը, քաղաքացիական հասարակության ձևավորմանը, բազմակարծության և ժողովրդավարության մթնոլորտին, միֆերը շարունակում են կիրառվել քաղաքական մանիպուլյացիայի նպատակով: Խոսք հաղորդող սուբյեկտներն այսօր մտքերին տալիս են այն բոլոր հատկանիշները, որոնք անհրաժեշտ ու բավարար են մտակառույցները քաղաքական միֆ դարձնելու համար⁵: Սա ժամանակին կանխատեսել էր հետազոտող Մ. Էլիադեն, երբ բացատրում էր միֆերի էությունը. «Դրանք կարող են փոփոխվել, ազատվել հին ձևերից, հարմարվել նոր մշակույթին, բայց ամբողջովին անհետանալ չեն կարող»⁶: Միֆերը կարելի է ակտուալացնել, այսինքն՝ կյանքի կոչել, կամ էլ կրկին «քշել» ենթազիտակցության խորքերը՝ նրանց առջև հզոր պատվար դնելով⁷: Իս-

⁴ Տե՛ս Մ. Դեմիրճյան, Միֆր ժամանակակից Հայաստանի քաղաքական համակարգում // «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», № 2 (32), 2020, էջ 55:

⁵ Տե՛ս Գ. Հակոբյան, Կորոնավիրուսային համավարակի խոսույթի իմացաբանական որակման շուրջ // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», № 1(34), 2021, էջ 52:

⁶ Элиаде М. Аспекты мифа, М., 2010, с. 53.

⁷ Տե՛ս Վ. Հովհաննիսյան, Քաղաքական միֆերը որպես տեղեկատվական պատե-

կապես, ինչ-որ առումներով դրանք փոխել են իրենց էությունը: Եթե նախկինում քաղաքական միֆերը կիրառվում էին հասարակությունների համար խիստ ճգնաժամային և անցումային ժամանակներում, ապա այսօր դարձել են յուրաքանչյուր քաղաքական գործչի քաղաքական զինանոցի առօրեական և անբաժան գործիքը: Միֆերը փոխել են նաև իրենց գործառական նշանակությունը. եթե տարիներ առաջ դրանք պարտրված էին «մոգական շղարշով» և առաջանում էին ինքնաբուխ, ապա այսօր դարձել են նախապես մշակված, պլանավորված և թիրախավորված սոցիոմշակութային իրականություն ստեղծելու կամ վերախմաստավորելու կառուցարկման գործիքներ, որոնք, ազդելով հանրույթի գիտակցության վրա, նրան զգում են տեղեկատվական թակարդը, կառավարում սոցիալական վարքագիծը և որպես վերջնարդյունք՝ մղում որոշակի գործողությունների՝ հասցնելով ցանկալի արդյունքի⁸: Տեղին է հիշատակել հետազոտող Է. Կասիրերի խոսքերը. «Նոր քաղաքական առասպելներն այլևս ինքնաբուխ կերպով չեն առաջանում, դրանք անզուսպ երևակայության վայրի պտուղներ չեն: Ընդհակառակը, արհեստական ստեղծագործություններ են՝ ստեղծված հմուտ ու ճարպիկ «վարպետների» կողմից»⁹:

Այսօր քաղաքական առասպելը լայնորեն օգտագործվում է քաղաքականության մեջ որպես հասարակության և քաղաքական սուբյեկտների միջև հաղորդակցման ձև, երբեմն այն հետևողականորեն ներմուծվում և շահագործվում է որպես իշխանության ու քաղաքականության լեգիտիմացման հզոր փաստարկ¹⁰: Եվ իհարկե, եթե նախկինում միֆերը ստեղծվում էին քաղաքական թիմերի և առաջնորդների կողմից, իսկ դրանց տարածման հարթակը զանգվածային լրատվամիջոցներն էին, ապա այսօր հաճախ հենց ՁԼՄ-ներն են նոր իրականության ստեղծման և տնօրինման պատասխանատուն՝ դրանով իսկ դառնալով քաղաքական առասպելների ստեղծման սոցիալ-հոգեբանական յուրօրինակ հարթակ: ՁԼՄ-ների միֆաստեղծ էությունը նույնպես բազմիցս ուսումնասիրվել է տարբեր հետազոտողների կողմից¹¹: Հնդվածում փորձ է արվել մեր իրականությունից վերցրած օրինակների միջոցով ցույց տալ՝ ինչպես է աշխատում միֆը նախընտրական քարոզարշավների ժամանակ: Որպես հետազոտության օբյեկտ ընտրել ենք քաղա-

րազմների միջոց // «21-րդ դար», թիվ 3, 2008, էջ 124:

⁸ Տե՛ս Լ. **Բաբաջանյան**, Առասպելը որպես ամբոխի մարդու սոցիոմշակութային իրականության կառուցարկման գործիք. // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», № 3 (18), 2015, էջ 14:

⁹ **Кассирер Э.** Техника современных политических мифов. «Вестник Московского университета». Сер. 7, № 2, М., 1990, с. 61.

¹⁰ Տե՛ս Կ. **Մելքոնյան**, **Է. Ասրիյան**, Հայաստանյան «թավշյա» հեղափոխության միֆերը // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», № 3 (27), 2018, էջ 77:

¹¹ Մեզանում ՁԼՄ-ների և միֆերի կապի ուսումնասիրությամբ զբաղվել են Ջ. Սարգսյանը, Է. Ասրիյանը, Հ. Բայադյանը, Ն. Մելքոնյանը, Հ. Ծատրյանը և այլք:

քական դիսկուրսի ամենից շատ կիրառվող ժանրերից մեկը՝ հեռու-տաբանավեճը՝ դիտարկման հղացքում ունենալով դրա ազդեցիկ և արդյունավետ էությունը: Բանավեճը՝ իբրև մշակութային կյանքի անբաժանելի մաս, առանձնակի սրությամբ երևան է գալիս հատկապես հասարակության զարգացման բեկումնային շրջաններում¹²: Այն խոսքային հաղորդակցության կարևորագույն ձևերից է, որի մասնակիցները, հակառակ տեսակետներ ու գաղափարներ արտահայտելով, ձգտում են հասնել փոխհամաձայնության կամ փոխհամոզման¹³: Վիճաբանությունների յուրօրինակ «պայթյուններ» են նկատվում հատկապես հասարակության զարգացման շրջադարձային, առավելապես ժողովրդավարական վերափոխումներով հարուստ փուլերում, երբ հասարակական կարծիքն ակտիվորեն քննարկում և վերլուծում է տեղի ունեցող իրադարձությունները, փորձում իմաստավորել ու գնահատել կատարվող փոփոխությունները, բուռն վեճերով արձագանքում հնի ու նորի պայքարին, ավանդական արժեքների վերանայմանն ու նորերի արմատավորմանը¹⁴: Բանավեճի, դրա գործառույթների և տեսակների վերաբերյալ կան բազում տեսություններ: Ռուս հայտնի տրամաբան Ս. Պոլարնինն առանձնացնում է բանավեճերի հինգ տեսակ. 1.վեճեր, որոնց արդյունքում պետք է բացահայտվի ճշմարտությունը, 2.վեճեր, որոնց նպատակն է համոզել ընդդիմախոսին որևէ գաղափար, 3.վեճեր, որտեղ պետք է անպայման հաղթել, 4.վեճի սիրահարների համար նախատեսված վեճ՝ հանուն վեճի և 5.վեճ-խաղ, որի նպատակը բանավեճողների միտքը մարզելն է¹⁵: Պետք է նկատենք՝ այսօր քաղաքական կյանքում գործիչների միջև հանրային վեճերը հիմնականում միտված են հակառակորդին «սևացնելու» միջոցով հասարակությանը ներշնչել որոշակի գաղափարներ և մղել որոշակի գործողությունների: Բանավեճի նպատակի ընդգծումը կարևոր է, քանի որ փաստարկման բնույթն անմիջականորեն կախված է հենց բանավեճի նպատակից, որին հետամուտ են վիճող կողմերը¹⁶: Մերօրյա հակամարտություններում մրցող կողմերի դիրքորոշումների մատուցման հիմքում ընկած են մի շարք հաղորդակցային տեխնոլոգիաներ, որոնք հենվում են տարբեր կարծրատիպերի, առասպելների և գաղափարախոսությունների վրա¹⁷:

¹² Տե՛ս **Դ. Պետրոսյան**, Գրական բանավեճերը 20-րդ դարակգրի հայ մամուլում, Եր., 2007, էջ 3:

¹³ Տե՛ս **Ս. Հովհաննիսյան**, «Դեբատ» ուսուցման մեթոդի առանձնահատկությունները // «Հայագիտական հանդես, պատմություն և մշակույթ», № 1, 2021, էջ 230:

¹⁴ Տե՛ս **Հ. Հովհաննիսյան**, Բանավեճի տեսություն և արվեստ. փիլիսոփայական քննախոսություն, Եր., 2019, էջ 9:

¹⁵ Տե՛ս **Դ. Պետրոսյան**, նշվ. աշխ., էջ 19:

¹⁶ Տե՛ս **Հ. Հովհաննիսյան**, Վիճաբանության և փաստարկման փոխհարաբերության հարցի շուրջ // «Բանբեր Երևանի համալսարանի», № 3 (84), 1994, էջ 5:

¹⁷ Տե՛ս **A. Hakobyan**, Armenian Digital Communications in Karabakh War of 2020: Critical Discourse Analysis // «Բանբեր Երևանի համալսարանի» □ Սոցիոլոգիա», № 1 (33), 2021, էջ 32:

Գաղտնիք չէ, որ այսօր բանավեճերը տեղափոխվել են մեղիա տիրույթ, սակայն, բացի տեղեկատվական շոու լինելուց, նպաստում են քաղաքական գործիչների իմիջի ստեղծմանը, քաղաքական շատ հարցերի անձնավորմանը, օրակարգի ձևավորմանը: Մասնավորապես ազդեցիկ են հեռուստաբանավեճերը, երբ հռետորները կարողանում են օգտագործել իրենց խոսքի ողջ ներուժը՝ դրան ավելացնելով նաև ճիշտ ընտրված հռետորիկա: 1960 թ. սեպտեմբերին կայացած Քենեդի-Նիքսոն նախընտրական առաջին հեռուստատեսային բանավեճից ի վեր, որը քաղաքական և լրատվական նոր ավանդույթի սկիզբ դրեց ոչ միայն ԱՄՆ-ում, այլև ժողովրդավարական շատ երկրներում, առավել կարևորվեցին նախընտրական հեռուստաբանավեճերի ազդեցությունը, դերն ու նշանակությունը¹⁸: Հեռուստաբանավեճերը միտված են բանավիճող թեկնածուների, նրանց գաղափարների, տեսլականների մասին տեղեկություններ տալուն: Այդ տեղեկությունները, ըստ էության, հանրության կամ նրա մի հատվածի համար կարող են քաղաքական գիտելիքների նոր չափաբաժին պարունակել: Դա տեղի է ունենում ոչ միայն պարզապես հեռուստաբանավեճը դիտելու շնորհիվ, այլև հաղորդումից հետո լրատվական հոսքերի միջոցով այդ բանավեճի և բանավիճող կողմերի վերաբերյալ փարձագետների կամ լրագրողների մեկնաբանություններին ծանոթանալու միջոցով¹⁹:

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ այսօր հեռուստաբանավեճերը, մասնավորապես նախընտրական հեռուստաբանավեճերը խիստ արդիական են: Բանավեճի ընթացքում քաղաքական գործիչները կարող են օգտագործել մանիպուլյացիոն մի շարք տեխնոլոգիաներ, որոնց նպատակը ցանկալի միջերի ստեղծումն է, քանզի միջերի ազդեցությունից չի կարողանում խուսափել նույնիսկ գրագետ և պատրաստված լսարանը:

Քաղաքական կյանքի թատերայնացումը եղել և մնում է սոցիոմշակութային իրականության կազմակերպման հիմնարար սկզբունքներից մեկը, քանի որ սոցիալական հարաբերություններն ինքնին ձևավորվում են հենց թատերայնացման, բեմականացման սոցիոմշակութային աշխատակարգի միջոցով²⁰: Թեև մեր իրականությունում ամեն օր ստեղծվում են քաղաքական միջեր, սակայն դրանք իրենց կիրառելիության գագաթնակետին հասնում են քաղաքական կարևորագույն իրադարձություններից առաջ, երբ հասարակությունն ունի ընտրություն կատարելու խնդիր՝ հեղափոխություններ, իշխանափոխություններ,

¹⁸ Տե՛ս **Մ. Հակոբյան**, Նախընտրական հեռուստաբանավեճերը որպես քաղաքական լրատվության աղբյուր // «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», 2020, № 1 (31), 2020, էջ 92:

¹⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 95:

²⁰ Տե՛ս **Լ. Բաբաջանյան**, Քաղաքական կյանքի բեմականացման փոխակերպումները արդի քաղաքական գործընթացների համատեքստում // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», № 1 (28), 2019, էջ 31-42:

աշխարհակարգի փոփոխություններ և իհարկե ընտրություններ՝ տեղական կամ ինքնակառավարման մարմինների, նախագահական, խորհրդարանական և այլն: Վերջին տարիներին տարածում է գտել զանգվածային գիտակցության մանիպուլյացիան, որի իրականացման հիմնական գործիք են զանգվածային լրատվամիջոցները, էլեկտրոնային և սոցիալական մամուլը, համացանցը: Հանրության վրա թաքնված ազդեցության գործառույթը իշխանությունը իրականացնում է հիմնականում ՋԼՄ-ների միջոցով²¹: Սրանով է բացատրվում նաև այն, որ միջերի տարածման ամենից արդյունավետ սոցիալ-հոգեբանական հարթակը զանգվածային մեդիան է: Որպես միջաստեղծման արդյունավետ ժանր, ինչպես նշվեց, օգտագործվում է հեռուստաբանավեճի ժանրը: Հայ հասարակությունը նույնպես սովոր է հեռուստաբանավեճերի ձևաչափին, քանի որ գրեթե բոլոր ընտրություններից առաջ դրանք կազմակերպվել են: Վերջիններս թողել են իրենց ազդեցությունը հասարակության վրա: Որպես ազդեցիկ բանավեճի օրինակ կարող ենք հիշատակել 2003 թվականի նախագահական ընտրությունների երկրորդ փուլից առաջ տեղի ունեցած հեռուստաբանավեճը նախագահի թեկնածուներ Ստեփան Դեմիրճյանի և Ռոբերտ Քոչարյանի միջև: Թեև այնտեղ ձևաչափն այլ էր, սակայն, ըստ էության, այն բանավեճ էր հասարակության մեջ ամենից շատ աջակցություն ունեցող երկու թեկնածուների միջև: Բանավեճից հետո հասարակությունը երկար քննարկում էր նրանց արտահայտած մտքերն ու գաղափարները: Այս առումով տարբերվում են նախագահական ընտրությունները, քանի որ ընտրությունն անձնավորված է, ինչը հեշտացնում է գաղափարների տարածման գործընթացը, սակայն Հայաստանի Հանրապետությունում 2018 թվականի իշխանափոխությանը հաջորդած արտահերթ խորհրդարանական ընտրություններն ապացուցեցին, որ դրանք էլ կարող են լինել ադմկահարույց և իրարամերժ: Ընտրություններից առաջ տեղի ունեցած «թավշյա» հեղափոխությունը դարձել էր նոր իրականություն կառուցելու առհավաստյա: Այն բացառիկ էր, քանի որ նախկինում թշնամին սովորաբար արտաքին էր (Ադրբեջան, Թուրքիա), սակայն 2018-ի իշխանափոխությունը իր հետ բերեց շրջադարձային և սխեմատիկ փոփոխություններ, երբ մատնանշվեց ներքին հակահերոսը՝ ի դեմս ՀՀԿ-ի և Սերժ Սարգսյանի²²: Կյանքի մշակույթի փոփոխությունը, հին կարգերի և նախկին իշխանությունների մերժումը հասարակությանը փողոց էին դուրս բերել: Իսկ իշխող և ընդդիմադիր ուժերի համար նոր հնարավորություն էր ստեղծվել իրենց վրա կրելու հեղափոխության կնիքը և ստանալու հասարակության վստահության քվեն: Ընտրություններին մասնակցելու հայտ էին ներկայացրել 11 կուսակցությո-

²¹ Տե՛ս **Է. Քալանթարյան**, Մանիպուլյացիոն կառավարման ազդեցությունը հասարակական կարծիքի վրա // «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», № 1 (25), 2018, էջ 80:

²² Տե՛ս **Ն. Մելքոնյան, Է. Ասրիյան**, նշվ. աշխ., էջ 77:

յուններ և դաշինքներ, ինչը բնութագրում էր ստեղծված իրավիճակի ժողովրդավարական բնույթը:

Առհասարակ հասարակության քաղաքական կազմակերպման կարևորագույն բաղադրիչը կուսակցական համակարգն է, որը, իբրև քաղաքական ինստիտուտ, ցույց է տալիս հասարակության մեջ դեմոկրատիայի առկայությունը, ինչպես նաև բնութագրում է քաղաքական ընդհանուր համակարգի մյուս հաստատությունների հետ կուսակցությունների հարաբերությունները²³: Բոլոր կուսակցությունները ակտիվ ընտրապայքար էին սկսել՝ օգտագործելով իրենց ձեռքի տակ եղած բոլոր լծակները: Այդ լծակներից ամենաազդեցիկը զանգվածային լրատվամիջոցներն էին, որոնք նպատակ էին հետապնդում կոտրել նախկին միֆերը՝ դրա փոխարեն առաջարկելով իրենց գաղափարները: Նկատենք՝ առհասարակ ԶԼՄ-ներում միֆերի օգտագործումն ակտիվանում է ընտրություններից առաջ, քանի որ կա որոշակի ուժերի կա մ իշխանության գալու, կա մ այդ իշխանությունը պահելու խնդիր: Այս առումով նախադեպային էր Հայաստանի հանրային հեռուստաընկերության կազմակերպած հեռուստաբանավեճը, քանի որ մասնակցում էին իրենց թեկնածությունն առաջադրած դաշինքների և կուսակցությունների ներկայացուցիչները: Թեև բանավեճն ուներ հստակ նախորոշված ձևաչափ, կրքերի թեժացման մթնոլորտում մասնակիցները ոչ միշտ էին դրանք պահպանում: Բանավեճի ընթացքում հյուսվում և կազմաքանդվում էին մի շարք միֆեր, որոնք իրենց ազդեցությունն ունեցան ընտրությունների արդյունքների վրա: Դրա մասին են վկայում բանավեճին հաջորդած բազում քննարկումները տարբեր հարթակներից, որոնք իրենց հերթին սկիզբ էին դնում քաղաքական նոր միֆերի: Ինչպես ցանկացած քաղաքական գործընթացում, այնպես էլ բանավեճերի ժամանակ քաղաքական սուբյեկտը հասարակությանը նախնական հետազոտման է ենթարկում: Ուսումնասիրում է խմբի կառուցվածքը, առաջին հերթին՝ հասարակության պահանջները, մտտիվները, վերաբերմունքը, իր հաղորդած ինֆորմացիայի հանդեպ լսարանի ուշադրությունը, ինչը ավելի է խորացնում դրանց ազդեցության հնարավորությունները²⁴: Թեկնածուների արտահայտությունները, հաճախ կտրվելով համատեքստից, դառնում էին լրատվական հոդվածների վերնագրեր և շահարկվում հասարակության տարբեր շերտերի կողմից:

Թեկնածուները նկարահանման տաղավարում կանգնած էին ըստ քվեաթերթիկում սահմանված հերթականության, ինչը ինչ-որ առումով ընդգծում էր ձայնի իրավունք ստանալու անաչառությունը: Ներկա էին

²³ Տե՛ս **Գ. Քեոյան**, Բազմակուսակցության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում 1990-2000 թթ. (պատմաքաղաքական ակնարկ) // «Բանբեր Երևանի համալսարանի», № 2 (104), 2001, էջ 52-62:

²⁴ Տե՛ս **Վ. Պապոյան, Ջ. Մարգարյան**, Քաղաքական առաջնորդի կերպարի հոգեբանական ընկալումը ժամանակակից հասարակարգում // «Արդի հոգեբանություն», № 2(11), 2022, էջ 59:

11 կուսակցությունների և դաշինքների ներկայացուցիչներ, սակայն հիմնական բանավեճը ծավալվեց Հանրապետական կուսակցության ներկայացուցչի և գործող վարչապետի միջև: Կատարված հետազոտությունից պարզ դարձավ, որ թեկնածուների կողմից հիմնականում ձևավորվել են դավադրության, հերոս-փրկչի, միասնականության և ոսկե դարի միֆերը, իսկ ընթացքում կիրառվել են մի շարք մանիպուլյացիոն տեխնոլոգիաներ:

Պիտակավորում: Առաջին փուլում բանավեճի մոդերատորները երկու բուպեի շրջանակում հնարավորություն տվեցին գործիչներին ներկայացնելու իրենց նախընտրական ծրագիրը և պատասխանելու հարցին, թե ինչու քաղաքացիները պետք է իրենց ձայնը տան տվյալ քաղաքական ուժին: Բանավեճի առաջին բանախոսը՝ ՀՀԿ փոխնախագահ Վիգեն Սարգսյանը, իր ելույթի առաջին իսկ բուպեներից տվեց քաղաքական միֆաստեղծման մեկնարկը: Օգտագործելով մանիպուլյացիոն մի շարք տեխնոլոգիաներ՝ նա անմիջապես սկսեց ձևավորել դավադրության միֆը՝ երկրում տիրող անելանելի վիճակի ողջ պատասխանատվությունը դնելով ներկա իշխանությունների վրա²⁵: Որպես քաղաքական այլընտրանք՝ նա առաջարկեց իրենց թիմը խոստանալով բարդ, բայց բալանսավորված հակակշիռների տնտեսություն: Թեև մոդերատորների տված հարցը նախատեսում էր պատասխան, որը պետք է բացատրեր ինչու քաղաքացիները պետք է հենց իրենց քաղաքական թիմն ընտրեն, Վիգեն Սարգսյանը պատասխանեց «որ չընտրվեն ներկա իշխանությունները» գաղափարի համատեքստում: Ըստ հետազոտող Ն. Մելքոնյանի՝ նման միջոցների նպատակային օգտագործումը հանգեցնում է քաղաքական պայքարի տեղափոխմանը հույզերի և կրքերի իռացիոնալ դաշտ, որտեղ ռացիոնալ հիմնավորում առհասարակ չի էլ ենթադրվում, որտեղ «ո՞ւմ և ինչո՞ւ ես ընտրելու» հարցերի ամենատարածված պատասխանը դառնում է՝ «որպեսզի մյուսը չանցնի»-ն²⁶: Դավադրության միֆի ստեղծման ճանապարհին Վ. Սարգսյանն ամենից շատ կիրառեց պիտակավորման տեխնոլոգիան:

Բանավեճերի ընթացքում քաղաքական ընդդիմախոսին որոշակի «պիտակներ» վերագրելը հնարավորություն է տալիս հասարակության կողմից երևույթները պարզեցված ընկալելու: Վ. Սարգսյանն իր խոսքում որպես պիտակներ օգտագործեց «բռնապետ», «բռնապետություն», «պոպուլիստ» բառերը. «Ով իմ դեմ է, ժողովրդի դեմ է, ով իմ դեմ է, պե-

²⁵ Դավադրության միֆի տեսությունն առաջ է քաշել ֆրանսիացի հետազոտող Ռ. Ժիրարդեն, ըստ որի այն բացահայտում է ժողովրդի «ենթադրյալ» թշնամիներին, որոնք հանդես են գալիս որպես «օբյեկտիվ» բացատրություններ հասարակության մեջ առկա ճգնաժամերի, սոցիալական անհավասարության, ֆինանսական դժվարությունների և այլ արատավոր երևույթների համար: Այն հայտնի է նաև որպես «հակահերոսի» միֆ: Միֆի նպատակը թվացյալ անելանելի իրավիճակ ստեղծելն է, որպեսզի այդ անհնարինության պայմաններում հայտնվի իրական հերոսը՝ իր հետ բերելով բոլոր խնդիրների լուծումները:

²⁶ Տե՛ս Ն. Մելքոնյան, Քաղաքական միֆոլոգիան 2008-ի նախագահական ընտրությունների համատեքստում // «21-րդ դար», № 2, 2009, էջ 94-101:

տության դեմ է, ով իմ դեմ է, հանցագործ է» հասկացությունները բնորոշ են բոլոր բռնապետերին: Պոպուլիզմը գաղափարագուրկ կառավարման միջոց է, որը բռնապետություն հաստատելու ամենակարճ և ուղիղ ճանապարհն է»²⁷: Գործող վարչապետ, «Իմ քայլը» դաշինքի առաջնորդ՝ Ն. Փաշինյանն իր հերթին օգտվեց պիտակավորման տեխնոլոգիայից՝ Վ. Սարգսյանին անվանելով «ԼԳԲՏ համայնքի և կաշառակեր իշխանության ներկայացուցիչ»: Բացի այդ, նրա կողմից որպես պիտակներ օգտագործվեցին «խաղաղույթներ կատարող տնտեսություն», «քաղաքական մահվանը երկու օր մնացած տնտեսություն», «Հանրապետականը աղերսում է ժողովրդին», «կաշառակեր, ազգային արժեքները մերժած իշխանություն» և այլ արտահայտություններ: Պիտակավորման տեխնոլոգիան կիրառեց նաև «Քաղաքացու որոշում» կուսակցության նախագահ Սուրեն Սահակյանը՝ նախկին ուժերին անվանելով «երկիրն ապականած, արդարադատությունը վերացրած, բարու և չարի սահմանները ջնջած, արտագաղթի պատճառ դարձած, հանրային հարաբերությունները աղճատած իշխանություն, ովքեր քաղաքացուն դարձրել են ընտրակաշառքին սպասող իրավագուրկ էակ»: Նա նաև օգտագործեց «ընտրակեղծարար», «սեփական շահերը պաշտպանող հանցագործների խմբակ», «քաղաքական դիակ» պիտակները²⁸: Պիտակների օգտագործումից անմասն չմնացին նաև մնացած բանախոսները: Որպես պիտակներ օգտագործվեցին «մարդափոխություն», «գաղափարագուրկ», «թիթեռի կյանք ունեցող դաշինքներ» արտահայտությունները՝ «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանի կողմից, «դասական ընդդիմություն», «կլասիկ պատգամավոր», «բիզնեսմեն իշխանություն» պիտակները՝ «Լուսավոր Հայաստան» կուսակցության առաջնորդ Էդմոն Մարությանի կողմից, «անձերի, կլանների և ոչ առողջ քաղաքական դաշտ», «քրեաօլիգարխիկ, հանցագործ ռեժիմ», «բանկային, վաշխառուական համակարգի ճիրաններ» արտահայտությունները՝ «Ազգային առաջընթաց» կուսակցության նախագահ Լուսինե Հարոյանի կողմից: «Մասնա ծոեր» համահայկական կուսակցություն առաջնորդ Վարուժան Ավետիսյանն էլ օգտագործեց «թալանված երկիր», «հանցավոր համագործակցություն», «կոռուպցիան որպես համակարգաստեղծ բաղադրիչ», «կրիմինալ բաղադրիչ ունեցող ընտրական օրենսգիրք» և մի շարք այլ արտահայտություններ: Կարող ենք փաստել, որ հիշյալ բոլոր պիտակներն ինչ-որ առումներով ունեցան իրենց ազդեցությունը և հետագայում ակտիվ շրջանառվելով՝ համացանցային մեմերի ստեղծման պատճառ դարձան: Պիտակավորման հնարքը սովորաբար առավել արդյունավետ է լինում և պսակվում է հաջողությամբ, երբ հակամար-

²⁷ Նախընտրական մեծ բանավեճ, Հանրային հեռուստաընկերություն, 2018, 2:49-4:40: <https://www.youtube.com/watch?v=gPRONKHsF6k>

²⁸ Տե՛ս նույն տեղը:

տող կողմերից մեկն ունենում է որոշակի առավելություններ մյուսի նկատմամբ: Օրինակ՝ ավելի մեծ հեղինակություն է վայելում ունկնդիրների շրջանում կամ էլ տրամադրության տակ ունենում է զանգվածային լրատվամիջոցներ²⁹:

Մեղադրանքներ: Հաջորդ տեխնոլոգիան, որը հաճախ կիրառվեց բանավեճի մասնակիցների կողմից, *մեղադրանքներ* տեխնոլոգիան էր: Բանավոր վեճի ժամանակ մեծ նշանակություն են ստանում ներշնչումը, սրամիտ և դիպուկ խոսելու կարողությունը, ինքնավստահ տոնը, արագ մտածելու կարողությունը, որոնք էլ զգալի չափով որոշում են վեճի ելքը: Այս առումով մեծ նշանակություն ունեն նաև միմյանց հասցեին հնչող մեղադրանքները, որի գլխավոր նպատակը, որպես կանոն, ոչ թե հակառակորդ կողմին վերահամոզելն է, ճշմարտության փնտրտուքը, այլ զանգվածների աչքում հակառակորդին հեղինակագրկելը, նոր կողմնակիցներ ձեռք բերելն ու քաղաքական միավորներ կորզելը³⁰: Բանավեճի սկզբում Վ. Սարգսյանն իր խոսքում մեղադրեց Ն. Փաշինյանին հասարակության մեջ շերտագատում առաջացնելու համար, սակայն ինքն էլ դիմեց այդ տեխնոլոգիայի օգնությանը³¹. «Հասարակությունը սևերի և սպիտակների բաժանելու իշխանությունների քաղաքականությունը ոչ այլ ինչ է, քան ներքին թշնամիներ որոնելու և ստեղծելու, այլակարծությունը խեղդելու միջոց: Դեկտեմբերի ընտրությունները այդ վտանգը կանխելու, դրան ոչ ասելու միջոց են...»³²: Ընդ որում՝ նրա մեղադրանքը անձնավորված էր այն անմիջականորեն ուղղված էր Ն. Փաշինյանին: Նա ձեռնամուխ եղավ հակահերոսի կերպարի ստեղծմանը՝ հանձին Նիկոլ Փաշինյանի. «Նիկոլ Փաշինյանն արդեն իսկ թույլ է տվել կոպտագույն սխալներ, որոնք խարխալում են մեր պետության հիմքերը, վանում են դաշնակիցներին, ուժեղացնում հակառակորդներին և ուրախացնում թշնամիներին»³³: Նրան հակադարձեց Ն. Փաշինյանը՝ բազում մեղադրանքներ ուղղելով նախկին իշխանություններին: Այս պարագայում ոչ այնքան տեղեկացված հասարակությունը չի կարող ճշտել այդ մեղադրանքների իրական լինել կամ չլինելը, և նա, հաճախ ունենալով թաքնված համակրանք որևէ թեկնածուի նկատմամբ, կուրորեն հավատում է նրան և այլընտրանքային որևէ կարծիք համարում մերժելի ու դատապարտելի: Մեղադրանք տեխնոլոգիայի խոսուն օրինակ է նաև հարց ու պատասխանի փուլում «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդ Գագիկ Ծառուկյանի կողմից արված արտահայտությունը, որն ուղղված էր «Լուսավոր Հա-

²⁹ Տե՛ս **Հ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 242:

³⁰ Տե՛ս **Поварнин С.** Спор. О теории и практике спора. «Вопросы философии», № 3, 1990, էջ 65-68:

³¹ Հասարակության շերտագատումը, «մենք»-ի և «նրանք»-ի բաժանումը ձևավորում են միասնականության միջր, որի հիմնական նպատակը հանրությին ցանկալի ուղղությամբ տանելն է:

³² Նախընտրական մեծ բանավեճ, 3:00-3:10:

³³ Նույն տեղում, 3:22-3:39:

յաստան» կուսակցության նախագահ Էդ. Մարությանին: Գ. Ծառուկյանն իր խոսքում նշեց, որ բոլորն էլ գիտեն, որ Մարությանն ունի քաղաքական հովանավորներ, և նախքան քարոզարշավը նա դիմել է նրանց: Թեև իրականում այդպես էլ չպարզվեց, թե ինչ նկատի ունեին թեկնածուները, բայց նրանց հաջողվեց հասարակության մեջ որոշակի մոլորություն առաջացնել:

Ընդհանուր առմամբ կարող ենք փաստել, որ գրեթե բոլոր բանախոսների ելույթները կառուցված էին մեղադրանքների վրա: Նրանցից յուրաքանչյուրը մեղադրում էր որևէ ուժի՝ երկրում տիրող սոցիալական խնդիրների ողջ պատասխանատվությունը դնելով նրա վրա: Մուրեն Սահակյանն իր հերթին մեղադրում էր Ն. Փաշինյանին այն հարցում, որ թույլ է տվել, որ թեկնածություն ներկայացրած ուժերի մեջ լինեն նախորդ իշխանության ներկայացուցիչներ: Վ. Ավետիսյանը մեղադրում էր «Մենք» դաշինքի առաջնորդ Արամ Սարգսյանին «նախորդ ռեժիմի փաստաբանը» լինելու մեջ, ով հակադարձեց նրան՝ մեղադրելով անամարդկային, դաժան վերաբերմունքի և հանցագործության քարոզ իրականացնելու մեջ:

Բումերանգ: Երբեմն սեփական դիրքորոշման պաշտպանության լավագույն ձևը հակահարձակումն է, հակառակորդի դիրքերին ու նրա հայացքներին ուղղված արդյունավետ հակահարվածները: Տվյալ հնարքի էությունն այն է, որ ընդդիմախոսի դրույթը, փաստարկը, անգամ ռեպլիկը շուտ են տրվում, գործածվում նրա դեմ: Կրկնապատկվում են փաստարկի ուժը և ներկաների վրա թողած տպավորությունը: Բարդ վիճակի մեջ է հայտնվում ընդդիմախոսը, լսարանի համար ակնհայտ է դառնում նրա ոչ նախանձելի վիճակը³⁴: Բանավեճի անդամները իրենց ուղղված հարցերից խուսափելու համար հաճախ օգտագործում էին բումերանգի տեխնոլոգիան: Օրինակ՝ Ն. Փաշինյանը գործող իշխանություններին ուղղված բոլոր մեղադրանքներն արդարացնում էր «նախկինների ժամանակ ավելի վատ էր» պնդումով: Մասնավորապես հարց ու պատասխանի փուլում մոդերատորների այն հարցին, թե ինչպես է նա պատկերացնում Արցախի ապագան, Փաշինյանը շեշտեց, որ նախորդ իշխանությունները այդ հարցն արդեն իսկ մտցրել են փակուղի՝ չթողնելով որևէ այլընտրանք. «Ես ուզում եմ արձանագրել այն փաստը, որ մեր կառավարությունը մի այնպիսի կետում է ընդունել Ղարաբաղի հարցը, երբ բոլորը սպասում են, որ Հայաստանը պետք է անի միակողմանի և ստորացուցիչ զիջումներ, և դա բանակցային այն կետն է, որում մեզ թողել է նախորդ իշխանությունը»³⁵: Բումերանգի տեխնոլոգիայի հաջողված օրինակ է նաև Լ. Հարոյանի հարցը Էդ. Մարությանին՝ ինչ է նա արել երկրի համար, որին վերջինս պատասխանեց հարցով՝ իսկ դուք ինչ եք արել: Հարցը մնաց անպատասխան և

³⁴ Տե՛ս Հ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 195:

³⁵ Նախընտրական մեծ բանավեճ, 57:42-58:01:

տեխնոլոգիան աշխատեց վերջինիս օգտին:

Հումոր, սրամտություն, ծաղր: Մեփական տեսակետը պաշտպանելու, ընդդիմախոսին հերքելու, ինչպես նաև խոսքն ավելի ուշագրավ ու տպավորիչ դարձնելու գորեղ միջոցներ են հումորն ու սրամտությունը: Հումորը վիճաբանությանը հաղորդում է աշխուժություն, օգնում է հաղթահարելու հոգեբանական արգելքները, հաղորդակցման ընթացքը դարձնում անկաշկանդ, դյուրին ու հաճելի³⁶: Բանախոսները այս տեխնոլոգիայի կիրառումից ևս անմասն չմնացին: Արամ Մարգարյանը Վ. Մարգարյանի ելույթին, որը ներկայացնում էր փաստեր իրենց կառավարման տարիներին երկրում կատարված բարեփոխումների մասին, հակադարձեց հումորով. «Ձեր կառավարման ընթացքում սովորական մեծ էկրանով հեռուստացույցները դարձան պլազմային, կարող եք դա էլ նշել որպես ձեր առավելություն»³⁷: Ն. Փաշինյանը, երբ բանախոսների այն պնդումին, թե երկրում որոշում կայացնող միակ օղակը վարչապետն է, նույնպես հակադարձեց հումորի տեխնոլոգիայի միջոցով. «Եթե որոշում կայացնողը ես եմ, ապա ես որոշում եմ, որ դուք չլինեք խորհրդարանում»³⁸: Վ. Մարգարյանի կողմից արված «դրմփ, դրմփ, հու տնտեսություն», Գ. Ծառուկյանի՝ «Ես քո կլասիկ ցավը տանեմ» արտահայտությունները ևս հումոր տեխնոլոգիայի օրինակներ են, որոնք հետագայում տարածվեցին համացանցում:

Մեփական համոզմունքների երաշխիք և անձնական հեղինակության օգտագործումը: Հեղինակությունների վկայակոչման են դիմում ամենալուրջ գիտական բանավեճերից մինչև առօրյա զրույցներ: Այս պարագայում հեղինակություն վայելում էին այն ուժերը, որոնք մասնակցել էին հեղափոխական գործընթացներին: Ն. Փաշինյանի ելույթները հազեցած էին այս տեխնոլոգիաներով: Հանդես գալով որպես «հաղթած ժողովրդի հաղթած թեկնածու», «հեղափոխության միակ պատասխանատու ուժ»՝ նա իր անձի հետ էր կապում հաղթանակը, թեպետ ընտրությունները խորհրդարանական էին, և հասարակությունը նոր խորհրդարան էր ընտրում, որտեղ որքան կարևոր է կուսակցության առաջնորդը, նույնքան կարևոր է կուսակցական թիմը: Հեղափոխությանը մասնակից լինելու գաղափարը որպես առավելություն ներկայացրին նաև մնացած ուժերը: Դրա մասին են վկայում նրանց արտահայտությունները. «Մենք եղել ենք հեղափոխության առաջնամարտիկներին», «Ես նույնպես մասնակցել եմ հեղափոխությանը», «Մենք եղել ենք Նիկոլ Փաշինյանի կողքին» (Մուրեն Սահակյան), «Ես և իմ համախոսները հեղափոխության արմատական կողմնակիցներն ենք այսօր և այսուհետ», «Մենք կարծում ենք, որ եղել է իրական հեղափոխություն, որի արմատներում կանգնած ենք նաև մենք» («Քրիստոնեա-ժողովրդա-

³⁶ Տե՛ս Հ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 197:

³⁷ Նախընտրական մեծ բանավեճ, 01:43:54-01:44:17:

³⁸ Նույն տեղում, 02:09:13-02:09:18:

կան վերածնունդ» կուսակցության առաջնորդ Լևոն Շիրինյան), «Մենք այն ուժն ենք, որ բացահայտել ենք հեղափոխության դեմ իրականացվող սաբոտաժը Ազգային ժողովում» (Էդմոն Մարության), «Մենք առաջինն էինք, որ դուրս եկանք փողոց ընդդեմ նախկին ռեժիմի» (Լուսինե Հարոյան), «Հեղափոխություն է եղել, ժողովուրդը սպասում է, որ իր կյանքում հեղափոխությունից հետո բան է փոխվելու» (Գագիկ Ծառուկյան): «Մասնա ծոեր» կուսակցության ղեկավար Վ. Ավետիսյանն էլ հեղափոխությունն անվանեց «մեր քաղաքացիական Սարդարապատի հրաշք»: Ի հեճուկս մնացած ուժերի, ովքեր հանդես էին գալիս որպես նոր ուժեր և սատարում էին հեղափոխության գաղափարը, Վ. Սարգսյանը իրենց կուսակցության համար որպես առավելություն նշեց տարիների փորձ ունենալը, 20 տարի շարունակ երկրի անվտանգությունը պահած լինելը: Բանավեճի վերջում նա կրկին դիմեց միասնականության միջին՝ իրենց կուսակցությունը տեղավորելով «մենք» կաղապարի մեջ. «Մենք միակ ուժն ենք, որ չենք վախենում քննադատել Նիկոլ Փաշինյանի քաղաքականությունը և առաջարկած լուծումները: Առջում մեծ վտանգներ կան: Անփորձ, պոպուլիստ քաղաքական ուժին պետք է հակակշիռ քաղաքական ուժ: Ամսի 9-ին առանց վախի գնում ենք և ընտրում Հանրապետականին, մենք շատ ենք, ընտրեք մեզ»³⁹:

Կրկնություն: Այս տեխնոլոգիան թույլ է տալիս խոսքի որոշակի հատվածի վրա կենտրոնացնել ընդդիմախոսի և լսարանի ուշադրությունը, ընդգծել առանձին դրվագների կարևորությունը, հեշտացնել էական հատվածների մտապահումը և ավելացնել խոսքի ներգործող ուժը: Վ. Սարգսյանն իր խոսքի առաջին իսկ բոլորներից օգտագործեց այս հնարը. «Մեր երկրում առկա բազմակարծության, մամուլի ազատության մթնոլորտը թունավորվել է և ավելի կսեղմվի, եթե ղեկտեմբերի 9-ին չկանխենք դա, այլատյացության և փողոցային բառապաշարը քաղաքական դաշտ արդեն ներմուծվել է և կդառնա դոմինանտ, եթե ղեկտեմբերի 9-ին չկանխենք դա, դատարանների և արդարադատության անկախությունը վտանգի տակ է և իսպառ կվերանա, եթե ղեկտեմբերի 9-ին չկանխենք դա, տնտեսությունը գահավիժում է, և անպայման կհայտնվենք ճգնաժամի մեջ, եթե ղեկտեմբերի 9-ին չկանխենք դա»⁴⁰: Նման միջոցի դիմեց նաև Էդ. Մարությանը՝ կրկնելով «Լուսավոր Հայաստանը գալիս է» արտահայտությունը: Մնացած բանախոսները նույնպես իրենց ելույթներում պարբերաբար դիմում էին այս հնարին՝ կրկնելով ոչ միայն որոշակի արտահայտություններ, այլև գաղափարներ, որոնք առաջադրվել են իրենց կուսակցության կողմից: Կրկնության հնարքի կիրառման խոսուն օրինակ են նաև Վ. Ավետիսյանի կողմից բազմիցս արժարծվող «անցումային արդարադատություն» արտահայտությունը, ապա դրա հիմունքների մեկնումը:

³⁹ Նույն տեղում, 3:26:49-3:27:48:

⁴⁰ Նույն տեղում, 4:00-4:50:

Թեկնածուները կիրառում էին նաև *վարկանիշների մանիպուլյացիա, նեգատիվ պարույրի փաստարկման, փաստերի անտրամաբանական շղթա* և այլ տեխնոլոգիաներ:

Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ հիմնական բանախոսների ծրագրերը կառուցվում էին առասպելների կամ հեքիաթների տրամաբանությամբ: Սկզբում նրանք ներկայացնում էին թշնամու կերպարը, որն ուներ դավադրական գաղափարներ: Այս հնարքն էությամբ բավական մոտ է Ջ. Բրաունի նկարագրած «Թշնամու մատնանշում» տեխնիկային: Նման հնարքով նա տվեց «մենք»-ի և «նրանք»-ի բաժանման մեկնարկը, որը պայմանականորեն կարելի է անվանել միասնականության միջ: Առհասարակ «մենք»-ի յուրայինի, հարազատի և «նրանք»-ի ուրիշի, օտարի, թշնամու կերպարների ստեղծումը ազգային ինքնության հարացույցների կառուցարկման պարտադիր ու անհրաժեշտ պայմանն է, քանզի ինքնությունը որպես հայելի արտացոլում է ոչ միայն «մենք»-ի ինքնապատկերացումներն ու ինքնագնահատականները⁴¹: Եվ իհարկե, վերջում եղավ քաղաքական խոստում, որ իրենք հակակշիռ ուժ են լինելու և քննադատելով ներկա իշխանություններին՝ երկիրը տանելու են դեպի առաջընթաց: Այս պարագայում հերոսի կերպարում հանդես է գալիս ոչ թե որևէ անհատ, այլ քաղաքական ուժ, կուսակցություն: Մա միջաստեղծման ավանդական ձևն է, որը բնորոշ է գրեթե բոլոր ընդդիմադիր ուժերին: Միակ թեկնածուն, ով շեղվեց այդ մոդելից, Ն. Փաշինյանն էր: Նա, ի տարբերություն մնացած թեկնածուների, իր խոստումները չէր կապում ապագայի հետ, քանի որ, ըստ նրա միջի՝ հերոսները, արդեն իսկ հաղթելով դավադիր ուժերին՝ հանձին ՀՀԿ-ի, եկել են իշխանության և արդեն իսկ բերում են երկար սպասված ոսկե դարը: Միջը կառուցվեց այս տրամաբանությամբ, քանզի եթե մնացած ուժերի խնդիրը իշխանության գալն էր, ապա նրանց խնդիրը այդ իշխանությունը պահելն էր:

Ամփոփենք: Միջերը ստեղծվում են քաղաքական կյանքի թատերականացման, խորհրդանշական բնույթ հաղորդելու, իրականությունը չափազանցված ներկայացնելու և այլ միջոցներով, որոնք հասարակությանը կարող են ավելի արժանահավատ և իրական թվալ, քան իրականում կան⁴²: Միջերի ստեղծման գործընթացն ակտիվանում է ընտրություններից առաջ, քանի որ քաղաքական ուժերն ունեն իշխանության գալու կամ այն պահպանելու խնդիր: Միջաստեղծման ամենից արդյունավետ սոցիալ-հոգեբանական հարթակն այսօր գանգվածային մեդիան է: Իրենց թեկնածությունն առաջադրած քաղաքական ուժերը մասնավորապես նախընտրում են հանդես գալ հեռուստաբանավեճի ժանրում, քանի որ ցանկացած քաղաքական, առավել ևս նա-

⁴¹ Տե՛ս **Ս. Զաքարյան**, «Մենք»-ի և «Նրանք»-ի կերպարները հայկական էպոսում // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», № 1 (25), 2018, էջ 12:

⁴² Տե՛ս **Ն. Մելքոնյան**, ՋԼՄ-ում կիրառվող մանիպուլյացիոն հնարներն ու սոցիալ-հոգեբանական ազդեցության մեխանիզմները // «21-րդ դար», № 5 (63), 2015, էջ 61:

խընտրական հեռուստաբանավեճ բավականին մեծ հետաքրքրություն է ներկայացնում հասարակագիտական առումով: Թեև շատ տեսաբաններ կարծում են, որ Հայաստանում նախընտրական հեռուստաբանավեճի ավանդույթը դեռ նոր է արմատավորվում, բայց այն հասցրել է դառնալ միջաստեղծման յուրօրինակ միջոց: Դրա լավագույն օրինակն է 2018 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրություններին նախորդած հեռուստաբանավեճը, որտեղ հյուսվեցին և կազմաքանդվեցին մի շարք քաղաքական միջեր: Հետազոտությունը ցույց տվեց, որ քաղաքական գործիչների իմիջի ձևավորման, նրանց անձնավորման և հանրային օրակարգի ձևավորման հարցերում հեռուստաբանավեճը կարևոր դեր ունի:

ЛИАНА МАРТИРОСЯН – Политические мифы в армянских предвыборных телевизионных дебатах. – Мифологизация политической жизни всегда занимала творческий ум человека. В течение многих лет исследователи размышляли над формулировкой политических мифов и их функциями. Они и сегодня считаются неотъемлемой частью арсенала каждой политической силы и используются для создания и конструирования новой реальности. Их использование становится значимым во время социокультурных кризисов общества, когда у личности возникает проблема ориентации и выбора. Задачей работы является выявление манипулятивных технологий и инструментов, которые используются для достижения власти во время теледебатов. В статье также анализируется формирование политических мифов, которые распространяются благодаря современным коммуникационным технологиям и СМИ. Методологическую основу статьи составляют методы анализа, сравнения, и обобщения. В статье раскрываются сущность, функции и возможности манипуляции. Из проведенного исследования стало ясно, что каждый политический субъект испытывает потребность в мифизации. Актуальность политических мифов возрастает во времена социального кризиса, когда обществу необходимы объединяющие символы. Из проведенного исследования также стало ясно, что силы, предопределившие выборы 2018 г., в основном пытались построить традиционные мифы о заговоре, герое-спасителе, золотом веке и революциях. Они были построены с использованием ряда манипуляционных технологий.

Ключевые слова: политические мифы, теледебаты, миф о заговоре, образ героя-спасителя, манипулятивные технологии, социальная реальность, массовое сознание, социально-психологическое воздействие, СМИ

LIANA MARTIROSYAN – Political Myths in Armenian Pre-Election Television Debates. – The mythologizing of political life has always occupied the creative mind of man. For years, researchers have pondered over the formulation of political myths and their functions. Even today, they are considered an integral part of the arsenal of every political force and are used for the creation and construction of a new reality. Their use becomes important during the socio-cultural crises of society, when a person has a problem of orientation and choice. The task of the work is to identify manipulative technologies and tools that are used to achieve power during televised debates. The article also analyzes the nature and features of the formation of political myths, which are widely used due to modern communication technologies and mass media. The methodological basis of the article is made up of analysis methods, comparisons, and

generalizations. The article reveals the essence, functions and possibilities of manipulation. From the study, it became clear that every political subject is in need of mythification. The relevance of political myths grows in times of social crisis when society needs new, unifying symbols. From the conducted research, it also became clear that the forces that biased the 2018 elections mainly tried to build the traditional myths about the conspiracy, hero-savior, golden age and revolutions. They were built using a number of manipulation technologies.

Key words: *political myths, television debates, conspiracy myth, image of the hero-savior, manipulative technologies, social reality, mass consciousness, socio-psychological impact, mass media*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

- 1. Արա Առաքելյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի պրոֆեսոր
Արա Аракелян – доктор филологических наук, профессор кафедры зарубежной литературы ЕГУ
Ara Arakelyan – Sc. D in Philology, Professor at YSU Chair of Foreign Literature
Էլ. փոստ՝ arakelyan.ara@ysu.am
- 2. Եվա Մնացականյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի թումանյանագիտական խմբի ղեկավար, ԽՍ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ
Ева Мнацакянян – доктор филологических наук, руководитель туманяноведческой группы Института литературы имени М. Абегяна НАН РА, доцент кафедры родного языка и методики преподавания Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна
Yeva Mnatsakanyan – Sc.D in Philology, Head of the Tumanian Studies Group of the Institute of Literature named after M. Abeghyan of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Associate Professor at the Chair of Native Language and Teaching Methodology of the Armenian State Pedagogical University named after Kh. Abovyan
Էլ. փոստ՝ MnatsakanyanEva@mail.ru
- 3. Արժրուն Ավագյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, ԵՊՀ հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի պրոֆեսոր
Артсрун Авагян – доктор филологических наук, профессор кафедры истории современной армянской литературы и литературной критики
Artsrun Avagyan – Sc. D. in Philology, Professor at YSU Chair of History of Modern Armenian Literature and Literary Criticism
Էլ. փոստ՝ a.avagyan@ysu.am
- 4. Նարինե Դիլբարյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ
Нарине Дилбарян – кандидат филологических наук, доцент кафедры истории армянского языка и общего языкознания ЕГУ
Narine Dilbaryan – Candidate of Philology, Associate Professor at YSU Chair of History of the Armenian Language and General Linguistics
Էլ. փոստ՝ narine.dilbaryan@ysu.am
- 5. Յուրի Ավետիսյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ
Юрий Аветисян – доктор филологических наук, профессор, заведующий кафедрой армянского языка ЕГУ
Yuri Avetisyan – Sc. D. in Philology, Professor, Head of YSU Chair of Armenian Language
Էլ. փոստ՝ yuriavetisyan@ysu.am

6. **Նազիկ Հովհաննիսյան** – քանադայական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի հնաստիտուտի տնօրենի տեղակալ գիտության գծով
Назик Оганесян – кандидат филологических наук, заместитель директора по науке Института языка имени Р. Ачаряна НАН РА
Nazik Hovhannisyan – Candidate of Philology, Deputy Director for Science at the RA NAS Institute of Language after H. Acharyan
 Էլ. փոստ՝ instlingv@sci.am
7. **Լիանա Սարգսյան** – քանադայական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ
Лиана Саркисян – кандидат филологических наук, доцент кафедры армянского языка ЕГУ
Liana Sargsyan – Candidate of Philology, Associate Professor at YSU Chair of Armenian Language
 Էլ. փոստ՝ liana.sargsyan@ysu.am
8. **Անահիտ Ադիլխանյան** – քանադայական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ
Анаит Адилханян – кандидат филологических наук, доцент кафедры армянского языка ЕГУ
Anahit Adilkhanyan – Candidate of Philology, Associate Professor at YSU Chair of Armenian Language
 Էլ. փոստ՝ adilkhanyananahit@ysu.am
9. **Վալտեր Բերբերյան** – ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի սալիիրանս, ՀՀ ԿԳՄՄՆ ԿԶՆԱԿ մասնագետ
Вальтер Берберян – аспирант кафедры армянского языка ЕГУ, специалист фонда «Национальный центр развития образования и инноваций» МОНКС РА
Valter Berberyan – PhD student at YSU Chair of Armenian Language, specialist at the "National Center for Education Development and Innovation" Foundation of the RA MESCS
 Էլ. փոստ՝ walter.berberyan@mail.ru
10. **Նվարդ Վարդանյան** – քանադայական գիտությունների թեկնածու, ԵՊՀ ակադ. Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի դոցենտ
Нвард Варданян – кандидат филологических наук, доцент кафедры истории армянской литературы и теории литературы им. академика Г. Тамразяна ЕГУ
Nvard Vardanyan – Candidate of Philology, Associate Professor at YSU Chair of History of Armenian Literature and Theory of Literature after Academician Hrant Tamrazyan
 Էլ. փոստ՝ vardanyan.nvard@ysu.am
11. **Լիանա Մարտիրոսյան** – ԵՊՀ նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի սալիիրանս
Лиана Мартиросян – аспирант кафедры новых медиа и коммуникаций ЕГУ
Liana Martirosyan – PhD student at YSU Chair of Communication and New Media
 Էլ. փոստ՝ Martirosanliana413@gmail.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ LITERARY CRITICISM

- Արա Առաքելյան* – Խնջույքն իբրև տոն և իբրև դավադրություն 3
Ara Arakelyan – Пир как праздник и как заговор
Ara Arakelyan – Feast as a Holiday and as a Conspiracy
- Եվա Մնացականյան* – Հակոբ Օշականի «Յովհաննէս Թումանեան եւ իր գործը» հոդվածը 100-ամյա հեռավորությունից 18
Eva Mnatsakanyan – Статья Акопа Ошакана «Ованес Туманян и его творчество»: взгляд 100 лет спустя
Yeva Mnatsakanyan – Hakob Oshakan's Article "Hovhannes Tumanyan and His Creativity": a view 100 years later
- Արծրուն Ավագյան* – Փոքր Արմտանի մեծ վկան 33
Արարун Авагян – Великий свидетель Маленького Армтана
Arcrun Avagyan – The Great Witness of Little Armtan

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ЯЗЫКОЗНАНИЕ LINGUISTICS

- Նարինե Դիլբարյան* – Ծննդոց գրքի գրաբար թարգմանության մեջ մարդ նշանակող իմաստային դաշտի հիմնարարների զարգացումը (անգլ.)..... 48
Narine Dilbaryan – Развитие ключевых слов семантического поля, обозначающих человека, в древнеармянском переводе Книги Бытия (англ.)
Narine Dilbaryan – The Development of the Basic Words of the Semantic Field Denoting a Person in the Ancient Armenian Translation of the Book of Genesis
- Յուրի Ավետիսյան* – Հոլովական զուգաձևությունների տարբերակման սկզբունքները և տեսակները արդի գրական արևելահայերենի անվանական համակարգում 60
Юрий Аветисян – Принципы и виды дифференциации флективных спряжений существительных в современной системе восточно-армянского литературного языка
Yuri Avetisyan – The Principles and Types of Equivalent Forms of Declension in the Noun System of Modern Literary Eastern Armenian
- Նազիկ Հովհաննիսյան* – Հոմանշությունն ըստ միջնադարի հայ քերականների 75
Назик Оганесян – Вопросы синонимии в трудах армянских грамматиков средневековья
Nazik Hovhannisyanyan – Issues of Synonymy in the Works of Armenian Grammarians of the Middle Ages

<i>Լիանա Մարգյան</i> – Խոսակցական-բարբառային իրողությունների գործածությունը արդի հայերենի զովագրային խոսույթում	83
<i>Лиана Саргсян</i> – Потребление разговорно-диалектической лексики в современной армянской рекламной речи	
<i>Liana Sargsyan</i> – Usage of Colloquial-Dialectical Vocabulary in Modern Armenian Advertising Speech	
<i>Անահիտ Աղիլխանյան</i> – Կորոնավիրուսային բառապաշարը որպես հաղորդակցական «գործիք»	93
<i>Анаит Адилханян</i> – Коронавирусная лексика как «инструмент» коммуникации	
<i>Anahit Adilkhanyan</i> – Coronavirus Vocabulary as a Communication “Tool”	
<i>Վալտեր Բերբերյան</i> – Հայ հնչյունային ոճագիտության պատմությունից	108
<i>Вальтер Берберян</i> – Из истории армянской фонетической стилистики	
<i>Valter Berberyan</i> – From the History of Armenian Phonetic Stylistics	

**ԲԱՆՀՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ
ФОЛЬКЛОР
FOLKLORE**

<i>Նվարդ Վարդանյան</i> – Կուտակային հեքիաթների և ծիսերգային բանահյուսության որոշ զուգահեռներ	118
<i>Нвард Варданян</i> – Некоторые параллели между кумулятивными сказками и ритуальными песнями	
<i>Nvard Vardanyan</i> – Some Parallels Between Cumulative Tales and Ritual Songs	

**ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱ
ЖУРНАЛИСТИКА
JOURNALISM**

<i>Լիանա Մարտիրոսյան</i> – Քաղաքական միջերը հայաստանյան նախընտրական հեռուստաբանավեճերում	130
<i>Лиана Мартиросян</i> – Политические мифы в армянских предвыборных телевизионных дебатах	
<i>Liana Martirosyan</i> – Political Myths in Armenian Pre-Election Television Debates	
Տեղեկություններ հեղինակների մասին	146
Сведения об авторах	
Information about the Authors	

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1
Address: 1, Alex Manoogian str., Yerevan

Կայք՝ journals.y-su.am
Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am

Հեռ. 060 710 218, 060 710 219

Հրատարակչական խմբագիր՝
Издательский редактор
Publishing Editor

Արմեն Հովակիմյան
Армен Овакимян
Armen Novakimyan

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գայանե Գրիգորյան
Гаяне Григорян
Gayane Grigoryan

Թողարկման պատասխանատու՝
Ответственный выпуска
Issued by

Հասմիկ Եսայան
Hasmik Yesayan
Hasmik Yesayan

Ստորագրված է տպագրության 20. 06. 2023: